



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10436

891.99

L-55

ՅԻՄԱՐ

ՅԻՍՆԱՊԵՏՐ

ՀԱՏՈՐ Բ.

ՀԵՂԻՆԱԿ

ՔԵՆՈՎԻԷ ԻԼԻՄՕՆՃԵԱՆ



ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
ՏԻԳՐԱՆ ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳ. ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

1890



~~56539 ՎԻ~~  
~~1952-70~~

ՅԻՄԱՐ  
ՅԻՍՆԱՊԵՏԸ

ՀԵՂԻՆԱԿ

ՔԵՐՈՎՐԷ ԼԻՄՈՆՃԵԱՆ

—•••••

Ս.

ՄՆՍ ԲԱՐԵՍԻ ՍԻՐԵԼԻՍ

Լուիզ բնազդում մը ունէր որ Պէրթիէի կենաց դէմ անպատճառ մեծ վտանգ մը կար .

Մանկամարդ աղջկան այս բնազդումն ալ անչափ զօրաւոր էր , որ ստիպուած էր դերեզմանատան պահնորդի ձերունի փոխանորդը անոր ետեւէն ղրկելու , առանց իսկ մտքէն անցունելու կարողութիւնն ունենալու որ այն երիտասարդին համար յուցած ծայրագոյն հոգածութիւնը կրնար նորէն իրականութեան կերպարանք մը տալ ձերունի մարդուն կասկածանաց .

Նաեւ ինչո՞ւ համար Պէրթիէ իրեն յանձնած էր թղթոց ծրարներ, պատուիրելով որ միայն ժամը տասնեւմէկին բանայ ու կարգայ զանոնք, եթէ մինչեւ այն ատեն ողջ առողջ չի վերագառնայ ինքը:

Արդեօք ինչե՞ր պիտի ըլլային մինչեւ ժամը տասնեւմէկ:

Ասկից զատ Պէրթիէ իրեն հասկցուցած էր որ իր բացակայութիւնը կրնար խիստ երկար տեւել. և ասոր համար իր զաւկին ապագան ալ իրեն կը վստահէր:

Ա՛հ, բոլոր այս բաներուն տակ կրնար սուկալի գաղտնիք մը պահուած ըլլալ, զոր Պէրթիէ կը ջանար իրմէ պահելու:

Վերջապէս մինչեւ ժամը տասնեւմէկ, այն բարի երիտասարդը սլիտի մեռնէր, և ասոր համար էր անշուշտ որ մերժելով Ծերունի Հօր հետ մենամարտիլը՝ թոյլ տուած էր անոր պարպել իր ատրճանակը ճիշդ իրեն ճակտին:

Ահա Լուիզ խել մը սոսկալի խորհրդածութիւններէ ետեւ վերջնական կերպիւ այս եզրակացութեան յանգած էր,

Ասոր վրայ անդիմադրելի որոշում մը գըրաւեց իր միտքը:

Անմիջապէս հագուեցաւ:

Պէրթիէի յանձնած թղթի ծրարները դարակին մէջ պահեց:

Յետոյ սանդուղէն վար իջնելով փողոց ելաւ և դուռը կղպեց:

Կէս մը ցնորած աղջիկը, առանձին և մութին մէջ, քաղաքին գլխաւոր փողոցի ճամբան բռնելով կը վազէր, այնպէս հաւատալով որ ամեն քովստի փողոցի անկիւնը պիտի գտնէր հալածեալ երիտասարդին հետքը և զանի պիտի աղատէր անձնասպանութենէ կամ ուրիշ ոեէ մահուան վտանգէ:

Խեղճ աղջիկը չէր կրնար դիտնալ որ այս կերպիւ Պէրթիէի գտնուած տեղոյն ճիշդ հակառակ կողմը կերթար և բոլորովին կը հեռանար անկից:

Քիչ քիչ յուսահատութիւնը տիրել սկսաւ իր վրայ:

Պէրթիէի հետքին նշոյլն անգամ չէր տեսուեր, և սաստիկ յոգնած ըլլալով, իր սըրունքներն ալ սկսեր էին այլ եւս յառաջ երթալու դէմ յայտնի դժկամակութիւն մը ցույցնելու:

Ետ դարձաւ խեղճ աղջիկը իր բաղդը անիծելով:

Իայց յուսահատ վերագարծը՝ յուսալից յառաջխաղացութեան պէս շուտով չէր կատարուեր:

Հատաւ նորէն իր բնակարանը, տակաւին յուսալով որ կամ Պէրթիէն ինքը և կամ գե-

րեզմանատան պահնորդի ծերունի օգնակա-  
նը իր դրան առջեւ կը գանէ :

Բայց այս վերջին յայտն ալ պարապը ելաւ :  
Լուիզ նորէն բացաւ իր մենարանին դու-  
ռը, սանդուղէն վեր ելաւ, վերստին իր սեն-  
եակը վտաւ, և մոմը վառեց :

Յողնութենէն ինկաւ աթոռի մը վրայ և  
սաստիկ կը հեւար :

Բայց նոյն միջոցին յանկարծակիան սարսափ  
մը կը տիրէ իր վրայ :

Հանգուցեալ պաշտպանուհին գեղեցիկ ժա-  
մացոյց մը ունէր, զոր երբ յիշատակ Լուիզի  
թողած էր :

Այդ ժամացոյցը դրուած էր ճիշդ այն սե-  
ղանին վրայ, որ նոյն պահուն Լուիզի առջեւ  
կը գտնուէր :

Ժամացոյցին երկար ասեղը տասներկու քին՝  
և կարճ ասեղն ալ ճիշդ տասներկէկին վրայ  
ինկած էին :

Ո՛հ, ժամը տասներկէկ եղած էր :

Ճիշդ այն տասներկէկը՝ երբ պիտի բաց-  
ուէին ու կարդացուէին այն խորհրդաւոր  
թղթի ծրարները եթէ Պէրթիէ չի վերա-  
գառնար մինչեւ այն ատեն :

Եւ ահա այն նենգաւոր ժամը կը հնչէր  
այդ սոսկալի վայրկենին առանց հետք մը  
տեսնուելու Պէրթիէէն :

Ուրեմն չի պիտի վերադառնար խեղճ Ե-  
րիտասարդը այլ եւս, և գուցէ մեռած իսկ  
էր այն վայրկենին :

Բայց ինչո՞ւ ծերունի հայրն ալ չէր վերա-  
դարձած իրեն լուր մը տալու համար :

Ո՛հ, անյուշտ անիկա ալ տեսած ըլլալու էր  
Պէրթիէի մեռնելը, առանց զանի ազատել  
յաջողելու, և հիմա չէր համարձակեր այդ-  
ցաւալի լուրը իրեն հաղորդելու գալ :

Գլխի գազաթէն մինչեւ իր ոտից մատե-  
րուն ծայրը կրակի մէջ եղող յուսահատ աղ-  
ջիկը վազելով խորտակեալ պատուհանին քով  
գնաց :

Գլուխը՝ անոր կոտորած ապակիներէն  
դուրս հանելով՝ մութին մէջ բան մը փնտր-  
ուեց :

Վերջապէս մի քանի անգամ Պէրթիէի ա-  
նունն ալ տուաւ :

Բայց այն խորին մթութեան մէջ չէր լըս-  
ուեր ոեւէ մարդկային ձայն որ իր աղէկատուր  
հրաւերին և հառաչանացը պատասխանէ :

Այն ատեն Լուիզ՝ իւր գեղանի գլուխը բո-  
լորովին կուրծքին վրայ կախած, ծանր ծա-  
նրը դէպի իւր աթոռը վերադարձաւ, և բո-  
լորովին ուժաթափ ինկաւ անոր վրայ :

Յուսահատ աղջկան աչերէն հեղեղի պէս  
արտասուք կը հոսէին :

Բայց այս կերպով կանցնէր ժամը տասնև-  
մէկը, և գուցէ այս պարտազանցութենէ յա-  
ռաջ գար ուրիշ անդարմանելի ձախոր-  
դութիւն մ'ալ. ուստի, Լուիզ իր աչերը սըր-  
բելով, դողդոջուն ձեռքը երկնցուց այն ծը-  
րարին, որուն ամենէն առաջ կը հասնէր իր  
ձեռքը:

Բացաւ զանի և սկսաւ մէջի թղթերը մի  
առ մի կարդալ՝ տարապայման յուզմամբ:

Այս թղթերուն առաջինն էր Պէրթիէի  
զաւկին ծննդեան վկայագիրը:

Երկրորդը, Պէրթիէի իրեն ծննդեան վկա-  
յագիրն էր:

Ուրիշ մի քանի պաշտօնական թուղթեր ալ  
կային այն ծրարին մէջ:

Յետոյ կարգը եկաւ երկրորդ ծրարին:

Ասոր մէջէն երկու նամակներ ելան, որոնց  
մէկը Անժէլիքի, և միւսը՝ Պէրթիէի ստորա-  
գրութիւնքը կը կրէին:

Լուիզ՝ կուզես պատահմամբ ըսէ, կուզես  
բնազգձամբ ըսէ, կամ եթէ կուզես նպատա-  
կաւ ըսէ, այս երկրորդ նամակին ընթերցու-  
մը ետքի պահեց, որ իրօք իրեն վստահուած  
գաղտնեաց ամենէն կարեւոր և ամենէն մե-  
ծագին մասը կը պարունակէր:

Անժէլիքի ստորագրութիւնը կրող նամա-  
կին կցուած էր գնտասեղով մը ուրիշ մի

կարճ տոմսակ, որ ուղղակի Պէրթիէի կողմա-  
նէ գրուած էր:

Ահա այդ տոմսակին պարունակութիւնը.

«Պճնուուհի Լուիզս,

«Ուշագրութեամբ կարգա՛ այս նամակը որ  
Անժէլիքի առաջին անգամ ինձ գրած սիրոյ  
նամակն է:

«Իուն շատ բարի աղջիկ մ'ես, Լուիզ, բայց  
պէտք է որ միանգամայն փորձառու ըլլաս և  
գիտնաս թէ կանացի սիրտ մը ս'ըջափ դիւ-  
րութեամբ կրնայ հրեշտակի մը ձեռքէն սա-  
տանայի մը ձեռքն անցնիլ:

«Ներսէս անծանօթ բան մը կը վստահե-  
ցնէ զիս որ դուն բացառութիւն մը պիտի  
ըլլաս, և երանի այն մարդուն, որ զքեզ իր  
կինը կոչելու երջանկութիւնն պիտի ունե-  
նենայ օր մը:

«Միշտ քու անձնուէրդ  
Պէրթիէ»

Լուիզի սիրտը սաստիկ բարասիլ սկսաւ  
այս կարճ տոմսակին ընթերցման վրայ,  
թէ ինչո՞ւ համար:

Ատիկա ինքն ալ չէր հասկնար տակաւին:  
Ինչ որ է, անցնինք Անժէլիքի նամակին,  
որ հետեւեալ կերպիւ շարագրուած էր:

«Պէրթիէս,

«Իմ ամենաազնիւ սիրահարս,

«Ո՛հ կենացս հրեշտակն ես դու .

«Որչա՛փ դժբաղդ պիտի ըլլայի եթէ քու պարկեշտ բազկացդ մէջ տեսնէի ուրիշ կին մը՝ առանց քու բերնէդ իմանալու անհուն հաճոյքն ունենալու թէ կը սիրես զիս :

«Ա՛հ, յիրաւի այն ատեն իրաւացի պատճառ մը չի պիտի ունենայի նախանձելու այնպիսի երջանիկ կնոջ մը վրայ որ քու անզուգական սիրտդ գրաւած ըլլար :

«Բայց հաւատա խօսքիս, պիտի նախանձէի, ամենասատիկ նախանձով մը պիտի նախանձէի, և դուցէ այդ անիրաւ նախանձը պիտի սպաննէր զիս :

«Բայց ասոր դէմ մաքառելը իմ ձեռքս չի պիտի ըլլար :

«Ա՛հ, սակայն դուն ինձմէ ուրիշ կին մը չի սիրեցիր, և չի պիտի սիրես :

«Մանաւանդ հիմա որ ամբողջ կեանքդ իմ ձեռքս յանձնելու երդում ըրիր իմ անարժան օտիցս խոնարհելու անսահման երջանկութիւնը ինձ պարգեւել հաճելով :

«Երէկ էր այն ամենաերջանիկ օրը :

«Երէկ էր, այո՛ :

«Օր մը, որ երբէք իմ մտքէս չի պիտի ելնէ մինչեւ այն վայրկեանը երբ անողորմ գերեզմանս պիտի զրկէ զիս այլ եւս քու գերեցիկ դէմքդ տեսնելէ և զքեզ իմ սիրելի այրս կոչելէ :

«Յաւիտեան պիտի սիրենք զիրար . և մինչեւ այն վայրկեանն որ քու բազկացդ մէջ վերջին շունչս աւանդելու վերջին հաճոյքն ունենամ, չի պիտի դադրիս յեղյեղելու իմ ականջլիս թէ ընդ միշտ կը սիրես զիս, և ինձմէ աւելի գեղանի կին մը չիկայ քեզի համար աշխարհի վրայ :

«Ո՛հ, չես կրնար գիտնալ թէ ի՛նչ աստիճան կը սիրեմ զքեզ, և թէ ի՛նչ բարակ թելով մը կախուած է կեանքս քու ազնիւ շըրթներէ :

«Ա՛հ, եթէ պիտի ըլլայ այնպիսի սեւ օր մը, երբ պիտի ըսես ինձ թէ այլ եւս չես սիրեր զիս, այլ եւս ձանձրացած ես ինձմէ, և քու փափուկ ուշադրութիւնդ կը դարձնես ինձմէ աւելի երջանիկ ուրիշ կնոջ մը վրայ, իմ ամենասիրելի Պէրթիէս, առանց ինձ զգացնելու այդ սոսկալի բաները, նախապէս սպաննէ զիս ինչ կերպովոր կուզես :

«Պիտի օրհնեմ այն ձեռքդ որ մահացու հարուածը պիտի տայ ինձ :

«Այո, պիտի օրհնեմ զայն միշտ այն երջանիկ հաւատքը ունենալով որ միմիայն զիս սիրած ես այս նենգաւոր աշխարհին մէջ :

«Բայց չէ, դուն ինձմէ ուրիշ կին մը չի պիտի սիրես, Պէրթիէս, գիտեմ որ այդ բանը ընելու անկարող ես, և պիտի թողուս ինձ



ապրիլ ի խոր ծերութիւն իրաւունք տալով մատնանիչ զքեզ ցուցնելու և հպարտօրէն ըսելու թէ :

«Ահա ամենապատուական մարդ մը , որ սրտերուն այլ եւս տարփանքով յուզուելէ դադրելու ժամանակն իսկ չի դադրեցաւ զիս հաւատարմօրէն սիրելէ :

«Ո՛հ , այո , կը հաւատամ որ այդ անգու- դական երջանկութիւնը պիտի պարգեւեւս ինձ և դուն ալ հպարտօրէն իմ ամենահա-ւատարիմ սիրտս ցուցնելով պիտի ըսես թէ «Ահա կին մը որ յաւիտեան սիրեց զիս» :

«Այո՛ , յաւիտեա՛ն :

«Ի՛նչ երանելի բառ սիրոյ բառաբանին մէջ :

«Պատասխանէ ինձ , Պէրթիէս :

«Քու ազնիւ ձեռներովդ դրէ ինձ թէ ինչ- պէս ես քեզի համար՝ նոյնպէս դուն ալ մի- այն ինձ համար ստեղծուած ես այն ամենա- դուրթ Աստուծոյ ձեռամբ որ սէրն հիմ դը- բաւ սարդկային երջանկութեան :

«Պիտի պահեմ այդ նամակդ ամենայն եր- կիւղածութեամբ , որուն գիրերը անընթեռ- լի պիտի ըլլան իմ անհամար համբոյրնե- ըուս պատճառաւ , և պիտի դոնուի իմ հա-ւատարիմ սրտիս վրայ երբ այլ եւս յաւիտե- նական կերպիւ դադրի այն բարախելէ այս մահկանացու աշխարհին վրայ :

«Ո՛հ , ի՛նչ անհուն երջանկութեամբ կ'ստու- րադրեմ :

«Միշտ և յաւիտեան քու սիրեցեալդ «Անժէլիֆ» :

Լուիզ՝ Անժէլիքի նամակը կարդալու սկը- սելէն առաջ արդէն յուզեալ վիճակի մը մէջ կը գտնուէր :

Ձանի կարդացած միջոցին այդ յուզմունքը ա՛յնչափ սաստկացաւ որ ձեռները կը դողա- յին :

Իսկ վերջացուցած ատեն՝ առանց եր ըրա- ծը գիտնալու կը ճմութկէր զանի :

Ո՛հ , Անժէլիք շատ սիրած էր զՊէրթիէ , և անշուշտ ասոր համար էր որ Պէրթիէ «Հրեշ- տակ» կոչած էր զանի :

Անժէլիքի արտայայտած սաստիկ սէրը և Պէրթիէի՝ զանի հրեշտակ մը կոչած ըլլալը , ինչո՞ւ համար Լուիզի՝ անմեղ սրտին վրայ այնչափ ծանրապէս ճնշում մը յառաջ բերած էին :

Վերջապէս Լուիզ ի՞նչ իրաւունք ունէր այս ամենապարզ և ամենաբնական բաներէն այն- չափ յուզուելու :

Այս բանին իր խելքն ալ չէր կրնար հաս- նել :

Նախանձութիւնն էր որ զինքը չարչարել սկսած էր :

Այո՛, նախանձը .

Բայց նախանձն ալ ի՞նչ իրաւունք ունէր միջամտելու .

Լուիզ՛ միայն մէկ քանի անդամներ տեսած էր Պէրթիէն .

Իրաւ էր որ առաջին տեսակցութեան ատեն սիրած էր զանի .

Բայց աճիկա իրեն համար լոկ հայր մը, և առ առսուելն լոկ եղբայր մը եղած էր, և ինքն ալ սիրած էր զանի իբր հայր մը կամ իբր եղբայր մը .

Գեռատի աղջիկը տակաւին չէր գիտեր որ կին մը կրնայ սիրել մարդ մը՝ աւելի քան իր հայրը կամ իր եղբայրը .

Եւ ասոր համար էր որ չէր կրնար հասկընալ թէ ինչո՞ւ ուրիշ կնոջ մը առ Պէրթիէ արտայայտած սաստիկ սէրը, և Պէրթիէի այ՛ այդ կինը «հրեշտակ» մը կոչած ըլլալը այն չափ կը վրդովէին զինքը .

Բայց կեցի՛ր .

Պէրթիէ Լուիզին սփոփանք պատճառելիք ուրիշ բան մ'ալ ըսած էր իր նամակին մէջ .

Իր հրեշտակ կոչած Անժէլիքին՝ յետոյ սատանայ մը եղած ըլլալն ալ օրինակ ցուցուցած էր անոր .

Ուստի Պէրթիէ այլ եւս չէր սիրեր զանի .

Այս մտածութիւնն ալ ուրախութիւն մը պատճառել սկսաւ գեղանի աղջկան .

Բայց խեղճը ասոր ալ պատճառը չէր կրնար հասկնալ .

Պէրթիէի՛ Անժէլիքը սիրելը կամ ատելը ինչո՞ւ համար այնչափ մեծ կարեւորութիւն մը ունեցած ըլլալու էր իր աչքին առջեւ .

Մանաւանդ որ Անժէլիքի երեսը երբեք տեսած չէր ինքը, և ստոյգ կ'երեւէր որ Պէրթիէի երեսն ալ տեսնելիք չունէր այնուհետեւ .

Չը տեսնե՛լ Պէրթիէի երեսը այլ եւս .

Ահա սոսկալի մտածութիւնը, զոր Լուիզ կարող չէր կրնար ըլլալ իր մտքէն վանելու .

Պէրթիէ մեռած էր հիմա .

Ատիկա գրեթէ կատարեալ ստուգութիւն մ'էր Լուիզի համար .

Այո՛, մեռած էր Պէրթիէ՛ իրեն ուղղեալ նամակ մը յանձնելով, և արդ, կարգը եկած էր այդ նամակը կարդալու .

Լուիզի աչերը բոլորովին լեցած ըլլալով, խեղճ աղջիկը՝ իրեն համար արտաքոյ կարգի կարեւորութիւն մը ունեցող այդ նամակը կարդալու սկսելէն առաջ ալ մի քանի անգամներ սրբեց այն գեղանի աչերը, ձեռքը դրաւ իր սրտին վրայ որ ճաթելու աստիճան կը բարախէր, և ծանր ծանր կարդալ սկսաւ .

«Սիրելի Լուիզո,

«Քանի որ հիմա կը կարգաւ այս նամակս, ըսել է թէ մինչեւ ժամը տասներեւեկ չեմ վերադարձած և հետեւապէս վերջին շունչս աւանդած եմ այս վայրկեանին»:

«Մի ցաւիր իմ վրայ:

«Թէպէտ հիմա կ'զգամ որ եթէ իմ մահուամբ քեզի կսկիծ մը պատճառելու վայրենի հաճոյքին իրաւունք ունեցած ըլլայի, ինքզինքս երջանիկ պիտի համարէի»:

«Բայց մէկը կար, որուն դառնապէս իմ վրայ լայուն հաւատքը պիտի ունենայի»:

«Անիկա հիմա ընդհակառակն կը հրճուի մեռնելու համար»:

«Ուրեմն կը տեսնես թէ որչա՛փ դժնդակ զգացմամբ դադրած է ապրելէ քու դժբաղդ Պէրթիէ բարեկամը»:

«Սակայն այս պարագաներու տակ կեանքը աւելի դժբաղդ չի՞ պիտի ըլլար»:

«Անժէլիքի առ իս ուզղած առաջին նամակը ներփակեալ յանձնած եմ քեզի»:

«Եթէ զանի տակաւին չէ կարդացած, այս նամակին ընթերցումը շարունակէ, առաջ զայն կարգաւ, որպէս զի ըսածներուս արդարութիւնը լաւ մը կը ունելու կարող ըլլաս»:

«Անժէլիք՝ որ յաւիտենական սէր ուխտած է ինձ իր նամակին մէջ իբր զուգակիւ այն

ամենասատիկ սիրոյս, որով ապահով էր թէ կը սիրէի զինքը և պիտի սիրէի ց'յաւիտեան, մատնեց զիս»:

«Անխղճարար վաճառեց զիս այնպիսի մէկու մը, որուն հետ պիտի մենամարտիմ այս երեկոյ ժամը տասնին, և որուն անունը գաղտնի պահելու երդում ըրած եմ»:

«Գիտեմ որ պիտի սպաննուիմ, որովհետեւ իմ հակառակորդս, սուր շարժելու մասին խիստ յաջողակ մէկն է, իսկ ես գրեթէ բոլորովին անվարժ»:

«Բայց ասկից, եթէ Անժէլիքի նոր սիրահարը սպաննելու և հետեւաբար իմ կեանքս փրկելու կարողութիւնն ունենայի ալ՝ չի պիտի փորձէի այլ եւս ապրիլ այն աշխարհի վերայ, ուր մատնած է զիս այն միակ կինը, զոր այնչափ սաստիկ սիրով սիրած էի»:

«Բայց անկից զատ սիրելի մը եւս ունէի»:

«Ս. յսինքն, իմ միակ մանկիկս»:

«Քու խնամոցդ կը յանձնեմ այս անմեղ մանկիկը, իմ ազնիւ Լուիզո, և ապահով եմ որ խիստ աւելի երջանիկ պիտի ըլլայ անիկա քու քովդ քան թէ իր մատնիչ մօրը ձեռքը»:

«Կին մը որ իր ամենահաւատարիմ սիրահարը՝ առաջին անգամ իր դէմը ելնող մարդու մը վաճառելու խիղճ չընէր, այնպիսի կին մը իր զաւկին համար ալ կատարելա-

պէս անտարբեր կրնայ գտնուիլ :

«Ո՛հ Աստուած իմ, ի՛նչ չարաշուք խորհուրդներ կը պատեն միտքս :

«Կը վախնամ, Լուիզ, կը սոսկամ մտածելով որ Անժէլիք՝ իր խեղճ զաւակը սպաննելու իսկ խիղճ չի պիտի ընէ եթէ գտնէ զանի, որպէս զի մարդու մը դէմը ելած առեմ իր ճակտին վրայ անցեալ կենաց Փարոյզ չի տեսնուի :

«Ուստի, իմ բարի Լուիզս, պէտք չեմ տեսներ կրկնակի կերպիւ պատուիրելու և քենէ թախանձանօք խնդրելու որ ամենայն խղճմտութեամբ հոգ տանիս զաւկիս դոյութիւնը պահելու բոլոր կասկածելի մարդոց՝ նա մանաւանդ Անժէլիքի տեսութենէ :

«Երկինք վարձահատոյց ըլլան քեզ :

«Մնաս բարեաւ, իմ ազնիւ Լուիզս :

«Ո՛հ, աշխարհ սրչափ տարբեր եղած պիտի ըլլար եթէ ճակատագիրը՝ փոխանակ Անժէլիքի՝ Լուիզ մը հանած ըլլար իմ դէմս :

«Բայց ես երջանիկ ըլլալու համար ծնած չեմ եղեր :

«Ահա՛ կենաց դաղտնիքը :

«Կը մաղթեմ, ի բոլոր սրտէ, կը մաղթեմ որ դուն երջանիկ ըլլաս, Լուիզ :

«Ո՛հ, ի՛նչ մեծ անիրաւութիւն մը և անգթութիւն մը եղած պիտի ըլլար, եթէ քե-

զի պէս կատարեալ հրեշտակ մ'ալ երջանիկ չի կարենար ըլլար այս երկրի վրայ :

«Բայց հսկէ անձիդ վրայ, Լուիզս :

«Քու ջնաշխարհիկ գեղեցկութիւնդ, ան համար երկրպագ ուներ պիտի հանեն դէմդ :

«Երկինք և Ծերունի Հայրը առաջնորդ ըլլան քեզ անոնց մէջէն ընտրելու այնպիսին, որ արժանի ըլլայ քու ազնիւ հոգւոյդ և նազելի անձիդ :

«Իսկ ես, ո՛հ, դաղտնեաց աշխարհէն չի պիտի դադրիմ վրադ նայելէ, ուր կը յուսամ թէ քեզի արժանի երջանկութիւնդ տեսնելով, հոգիս ուրախ պիտի ըլլայ միշտ :

«Ո՛հ, Լուիզս, եթէ կարելի ըլլար ինձ այսուհետեւ տակաւին ապրիլ և մտնալ իմ անցեալ կենացս խայտառակ վախճանը, չի պիտի հանդուրժէի որ ինձմէ ուրիշ մէկը կարենար պարծիլ թէ ինքը միայն քու ամուսինդ ըլլալու ջնաշխարհիկ փառքին ու երջանկութեան արժանացած է :

«Բայց հիմա պէտք է որ դո՛հ ըլլամ քեզմէ խնդրելով որ երբեմն երբեմն իմ խեղճ և անշուք շիրմիս այցելութիւն մը տալու և հրեշտակային բերնովդ՝ հոգւոյս փրկութեանը համար աղօթելու ջնորհն ընես, և միանգամայն ցուցնես իմ անմեղ զաւկիս որ իր հայրը հոն կը ննջէ :

«Մնաս բարեաւ, ազնիւ Լուիզս :

«Այս ծրարները քեզ յանձնած ատենս, վերջին անգամն է որ կը տեսնեմ քու դեղանի դէմքդ, և զոր անգամ մ'ալ տեսնելու երջանկութիւնը չի պիտի կարենամ ունենալ :

«Երբ քեզի «Մնաս բարեաւ» կ'ըսեմ, յաւիտենական հրաժեշտ է անիկա :

«Բայց վստահ եղիր որ, այդ վերջին նայուածքս և հրաժեշտս քաղցր քաջալերութիւն մը կուտան ինձ անմիջական կերպիւ մահուան անհարկու իրականութեան առաջը նետուելու :

«Աստուած օրհնէ քեզ, անմեղ մանկիկս զոր վաղը պիտի տեսնես, և այն բարի «Ծերունի Հայրը» որ միշտ «Հօր» մը պէս պիտի հսկէ վրադ :

«Ալ յաւիտենապէս մնաս բարեաւ, ազնիւ հրեշտակ :

«Երջանիկ ըլլաս :

«Միայն թէ միտքդ բեր երբեմն :

«Տարբող Պերճիէն» :

Խեղճ Լուիզ հեծկլտանօք կը կարդար նամակին վերջին տողերը :

Իսկ անոր ամբողջ ընթերցումը կէս ժամ տեւած էր իր արտասուաց միջամտութեանը պատճառաւ :

Նազելի աղջիկը ոտքի ելաւ :

Տարապայման յուզման մէջ էր ինքը :

Մի քանի անգամ շրջեցաւ սենեկին բոլորտիքը :

Բայց իւր սրունքները կը դողային և չէր կրնար այդ շրջագայութիւնը շարունակել :

Վերջապէս ինկաւ աթոռի մը վրայ բոլորովին նուաղեալ :

Իր վերջին խօսքերը սա հետեւեալներն եղան .

«Ո՛հ, մեռաւ, և կ'զգայի որ ինձմէ բաժնուած ատեն մեռնելու կ'երթար . սակայն չի կրցանք փրկել զինքը . ա՛հ, ես կարող էի այդ բանն ընելու . . . և չըրի :

«Եւ սակայն կը սիրէր զիս . . . կրնայի զինքը երջանիկ ընել . . . ա՛հ . . . խեղճ Պէրճիէն . . . »



Բ .

ԴՈՒՔ ԷՔ ՄԱՐԴԱՍՊԱՆԸ, ՊԱՐՈՆ

Միևնոյն ատեն Տըլանժ կոմսին ապարանին մէջ ալ ուրիշ ցաւալի տեսարան մը տեղի կունենար :

Տըլանժ կոմսը՝ այն բարի ծերունին էր որ

Տամիէն յիսնապետը այցելել հաճած էր թիա-  
բանին մէջ :

Նաեւ այդ թիապարտը արձակուելէն ե-  
տեւ ալ զանի իր Պրիւքսէլի ապարանին մէջ  
իր ներկայութեանն ընդունելու բարեօրտու-  
թիւնը ունեցած էր, առանց սակայն անոր  
գիտնալուն թոյլտուութիւն ընելու թէ ով  
էր ինքը :

Բաղաքական պատճառներով իր հայրենի  
երկրէն փախուստ տուող այս ազնուական  
պարոնը, որ Պէրթիէէն զատ ազգական մը  
չունէր, Պրիւքսէլի մէջ դադարնի կեանք մը  
վարելուն, իրեն ով ըլլալն չի ճանչողը մի-  
նակ Տամիէն չէր :

Ահա այս էր պատճառը որ ստիկանու-  
թեան նախկին յիսնապետը երբեք չէր կըր-  
ցած հասկնալ թէ իր վրայ այնչափ անսովոր  
համակրութիւն մը ցուցնող այդ բարի ծե-  
րունին՝ մահկանացուաց ո՞ր դասին կը պատ-  
կանէր :

Ժամը տասնեւմէկն է :

Այսինքն կէս գիշերէն ճիշդ ժամ մը ա-  
ռաջ :

Կամ թէ ճիշդ այն ժամուն երբ Լուիզ կար-  
դալու կը պատրաստուէր Պէրթիէի թողած  
թղթի ծրարները :

Տըլանժ կոմսը տակաւին անկողին չէր մը-  
տած :

Գուցէ բնազդումէ առաջ եկած անհան-  
դստութիւն մը արգելք կըլլար իրեն քնոյն :  
Սենեկին մէջ վառած մոմի լոյսը ազատու-  
թիւն տուած էր իր մտերիմ սպասաւորին որ  
դռնէն ձայն տալէ ետեւ ներս մտնէ և նա-  
մակ մը յանձնէ իրեն :

Բայց այն ժամուն ո՞վ կրնար իրեն նամակ  
մը ուղղած ըլլար, և ասոր համար ի՞նչ աս-  
տիճանի ստիպողական պատճառ մը ունեցած  
կրնար ըլլալ :

Տըլանժ կոմսը, որ ոչ գործի մարդ էր և  
ոչ ալ պաշտօնի, այս անակնկալ նամակին վրայ  
իր զարմանքը և մինչեւ անգամ սրտի յուզ-  
մունքը չի կրցաւ զսպել :

Ուստի սպասաւորը դուրս ելնելուն պէս  
արտօրնօք բացաւ այն նամակը և սկսաւ  
կարդալ հետզհետէ իր աչերը խոշորցնելով :

«Ամենաազնիւ և ամենաբարի ազգականս :  
«Երկուքնիս ալ իրարմէ զատ ազգական  
չունէինք այս երկրի վրայ :

«Երկինք այնպէս տնօրինած են որ այլ եւս  
բոլորովին առանձին մնաք դուք :

«Աստուած երկար կեանք չնորհէ ձեզի,  
և ես առ Այն կերթամ այս չնորհը խնդրե-  
լու իրմէ :

«Այս վայրկենիս ձեր Պէրթիէն մեռած է,  
տէր իմ :

«Եթէ այնպէս եղած չըլլար այս նամակը ձեզի չի պիտի յանձնուէր գիշերուան ժամը տասնեւմէկին՝ երբ ամբողջ ժամ մը, եղած պիտի ըլլայ այս աշխարհէն մեկնած ըլլալս, ուր չէի կրնար ապրիլ այլ եւս Անժէլիքի կողմանէ մատնուելէս ետեւ .

«Ներեցէք որ չեմ կրնար ըսել ձեզ այն հակառակորդիս անունը որուն հետ մենամարտած եմ ճիշդ ժամը տասին .

«Պատուոյս վրայ երգում ըրած եմ այս մասին .

«Արդէն գիտէի որ պիտի մեռնէի, որովհետեւ հակառակորդս անհուն առաւելութիւն ունի իմ վրայ մենամարտի արհեստին մէջ .

«Բայց ասկից ապրիլ ալ չէի ուզեր այս աշխարհի վրայ ուր կիները այս աստիճանի անգութ և դաւաճան կրնան ըլլալ իրենց սիրահարաց դէմ .

«Ձաւակս վաղն առաւօտ պիտի յանձնուի Տամիէնի աղջկան՝ Լուիզի .

«Ո՛հ, այս աղջիկը կատարեալ հրեշտակ մ'է և կանանց մէջ երջանիկ բացառութիւն մը .

«Իեղճը տակաւին չը գիտեր թէ Տամիէն իւր հայրն է .

«Ինչպէս նաեւ չը գիտեր որ անիկա թիապարտ մ'է .

«Որչա՛փ բարեսիրտ էք որ մեծ համակրութիւն մը ունիք այն Ծերուանի Հօր վրայ, որուն ով ըլլալը և Լուիզի հայրը գտնուիլը ձենէ և ինձմէ զատ ոչ ոք գիտէ .

«Հիմա իմ մահուամբս՝ այս գաղտնիքը մի միայն երկուքներնուդ մէջ կը մնայ .

«Բայց կը վստահացնեմ զձեզ ազնիւ, ազգականդ իմ, որ Լուիզը եւս իր հօրմէն պակաս արժանի չէ ձեր բարձր համակրութեան, և գուցէ անկից ալ աւելի, և ես երջանիկ կը համարիմ ինքզինքս յանձնարարելով այդ հրեշտականման աղջիկը ձեր պաշտպանութեան, ինչպէս նաեւ իմ խեղճ որդիս որ ձենէ զատ հայր մը չունի այլ եւս .

«Մնաք բարեաւ . . . մնաք բարեաւ . . . Աստուած պարգեւէ ձեզ այն երջանկութիւնն որ զլացաւ ինձ երիտասարդ հասակիս մէջ .

«Պէրթիէ» .

Կոմս Տըլանժ նամակին ընթերցումը վերջացուցած ատեն ինքն ալ մտրելով բազմոցին վրայ ինկաւ .

Տան մէջ տեղի ունեցած իրարանցումը անկարագրելի բան էր .

Անմիջապէս բժիշկներ հասուցին .

Բայց ի՛նչ սլառչաճ վիճակի մէջ մարած էր ծերունի կոմսը .

Պէրթիէի նամակը իր գրպանը մտած էր

անոր մարելէն առաջ, և այս կերպիւ հետաքրքիր աչքեր զրկուած էին անոր մէջ պարունակեալ գաղտնիքը տեսնելէ:

Ահ, չարամիտ մարդ... այդ ծանր վայրկենին ի՞նչպէս ալ կըրցած էր միտք ընել որ անոնք աւելի կարեւորութիւն ունէին իր բարեսիրտ սպասաւորներուն համար, քան թէ իւր մարիլը և մինչեւ իսկ մեռնիլը: Առաւօտեան դէմ հանդարտութիւնը վերստին տիրեր էր կոմսին ապարանին մէջ:

Բայց ի՞նչ տխուր հանդարտութիւն մը...

Բժիշկները միաբերան հաստատած էին որ բարի ծերունին կաթուածահար եղած էր, և թէ հարուածին կրկնութիւնը կրնար մահաբեր ըլլալ:

Ամեն մարդ գիտէր որ աղէտին պատճառը եղած էր այն չարաշուք նամակը, և ի՞նչ մեծ մտատանջութիւն կը պատճառէր սպասաւորներուն՝ որոնք չէին կրնար գիտնալ թէ ի՞նչ էր անոր պարունակութիւնը:

Եւ աւելի ծանր կէտն այն էր որ նամակաբերն ալ ամենեւին չէին ճանչեր, որմէ գուցէ փոքր ինչ տեղեկութիւն մը քաղելը կարելի ըլլար:

Ցորեկին բժիշկներէն մէկը նորէն եկաւ:

Կոմսին խելքը գլուխն էր, թէպէտ իր չարժման կարողութիւնը բոլորովին կորսնցուցած:

Նոյն օրուան լրագրին երեւելուն կ'սպասէր անհամբերութեամբ, և բժիշկը պարապ տեղը կաշխատէր դանի արգիլելու ուէ ընթերցումէ:

Իրիկուան դէմ իրեն բերին ամենէն առաջ հրատարակուող լրագիրը:

Կոմս Տըլանժ՝ սպասաւորը դուրս հանեց, իենդի մը պէս բացաւ այդ լրագիրը և ուշադրութեամբ կարդալ սկսաւ հետեւեալ հատուածը:

«Երէկ գիշեր ժամը 9 1/2 ին կամ 10ին միջոցները սարսափելի եղեռնագործութիւն մը պատահեցաւ գերեզմանատան մօտը:

«Տակաւին մանրամասնութիւնք չկան:

«Սպանեալին դիակը գտնուեցաւ այս առաւօտ ժամը ութին:

«Գլուխը բոլորովին կտրուած և անխայտ եղած էր:

«Ծիշդ իր սրտին վրայ դանակի ահագին վէրք մը կար, և ոստիկանութեան բժիշկը կը հաստատէր թէ այդ վէրքը բաւական եղած էր սպանման դորժին, և հետեւաբար գլխոյն ալ մարմինէն բաժնուած ըլլալը՝ ետքէն տեղի ունեցած էր՝ հաւանականաբար վրէժխնդրութեան վատ տենչով մը:

«Սպանեալին ով ըլլալը միայն իր զգեստներէն կը ճանչուէր:



«Խեղճը բարի երիտասարդ մ'էր, Պէրթիէ անուամբ և հռչակաւոր Տըլապուշ գործարանի պաշտօնեաներէն մին:

«Գերեզմանատան պահնորդը և իր օգնականը չի կրցան տեղեկութիւն մը տալ այս սպանութեան գործին վրայօք:

«Խուղարկութիւնք սկսուած են, և կը յուսացուի որ քաղաքին աշալուրջ ոստիկանութիւնը քիչ ատենէն կարող պիտի ըլլայ վատ մարդասպանը ձեռք անցունելու:

«Յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ մեծ շքով և ծախիւք պարոն Էթիէն Տըլապուշի, որ մասնաւոր համակրութիւն մը ունէր Պէրթիէի վրայ:

«Տըլապուշ գործարանը գոց էր այսօր:

«Բոլոր գործաւորք և պաշտօնեայք, ինչպէս նաեւ գործարանապետ պարոն Էթիէն Տըլապուշ ինքը ներկայ գտնուեցան այս տրիտուր հանդէսին:»

Տըլանժ կոմսը այս անգամ չի մարեցաւ:

Չի լացաւ և մինչեւ իսկ չի յուզուեցաւ ալ:

Գիչ մը ատեն մտածելէ ետեւ իր սպասաւորը կոչեց և պատուիրեց անոր որ անմիջապէս մէկը զրկէ գերեզմանատան պահնորդի փոխանորդ Ծերունի Հայրը իր քով բերելու:

Նմանապէս հրաման տուաւ որ մէկ ժամէ մը նստաբը իր տունը գայ:

Երբ Տամիէն կը մտնէր Տըլանժ կոմսին սենեակը, զանի բաւական հանդարտ վիճակի մը մէջ կը գտնէր:

— Դուռը լաւ մը դոցեցէք և սա քովիս աթոռին վրայ նստեցէք, ձեզի կարեւոր ըսելիքներ ունիմ:

Տամիէն ամենայն հնազանդութեամբ կատարեց իրեն տրուած պատուէրը:

— Ձիս մինչեւ հիմա չի ճանչեցիր, պարոն յիսնապետ. բայց մեռնելէս առաջ պէտք է որ ամէն բան գիտնաս. ես Տըլանժ կոմսն եմ:

— Կո՛մս մը, ըսաւ Տամիէն ինքզինքը ժողուրտելով և ոտքի ելնելով:

— Նստեցէք, բարեկամս, կոմս մ'եմ, բայց տարագիր կոմս մը. պէտք չէ որ իմ մեռնելէս առաջ ուրիշի մը իմացնէք այս գաղտնիքըս, ինչպէս որ ես չեմ իմացուցած մէկու մը թէ Լուիզ ձեր աղջիկն է՝ բաց ի այն բարի Պէրթիէն...:

— Պէրթիէն...:

— Այո՛ այն աղնիւ Պէրթիէն որ վատօրէն սպաննուեցաւ երէկ գիշեր, և որ իմ միակ ժառանգորդս ու ազգականս էր:

Տամիէն նորէն ոտքի ելաւ:

— Պէրթիէ ձեր ազգականն էր...:

— Ո՛հ, նստեցէք, աղնիւ բարեկամս. եթէ

իմ միակ ազգականս և խիստ վստահելի բարի տղայ մը եղած չըլլար, չէի ըսեր իրեն թէ դուք այն ազնիւ Լուիզին հայրն էք:

— Ինքը գիտե՛ր այդ գաղտնիքը, ո՛վ Աստուած իմ, ուրեմն այդ բանին համար մերժեց ինձ հետ մենամարտիլը:

— Ձեզի հետ մենամարտիլը ուրեմն դո՞ւք սպաննեցիք իմ բարի Պէրթիէս:

— Ո՛հ, այո՛, իմ մոլեգնութեանս մի վայրէկանին...

— Ա՛հ, ուրեմն դուք էք մարդասպանը...

— Բայց կաղաչեմ, հանդարտեցէք... Խօսքըս կը կտրեք կոր... Եթէ... ո՛հ, Աստուած մի արասցէ, եթէ ես ըլլայի ձեր ամենասիրելի ազգականին սպանիչը, միթէ ազատ կերպիւ կը խոստովանէի՞ զայն ձեզի:

— Այդ մասին իրաւունք ունիք: Բայց ըսէք թէ ձեր մենամարտի հրաւէրը ե՞րբ տեղի ունեցաւ:

— Երէկ գիշեր:

— Ժամը քանիի՞ն:

— Դրեթէ իննին:

— Իննի՛ն, իննի՛ն կըսէք, և տակաւին կուրանաք թէ Պէրթիէիս սպաննիչը դուք էք: միթէ խեղճ ազգականս ալ ճիշդ այդ ատենները չի մեռա՞ւ: ահա լրագիրը քովս է, ժամը 9½ ին կամ 10ին ատենները կըսէ ոս-

տիկանութեան բժիշկը կրնայ կէս կամ մէկ ժամու համար սիրալած ըլլալ տասը ժամ ետքը քննուած դիակի մը վրայ: ո՛հ, ալ տարակոյս չունիմ, մարդասպանը դուք էք, հիմա ոստիկաններ կոչել և զձեզ ձերբակալել պիտի տամ: ա՛հ, վերջապէս թիապարտ մ'էք դուք և սպանութեան վարժ մէկը, ոստիկա՛նք... ոստի...:

Տամիէն մէկէն ի մէկ ծերունի կոմսին վրայ յարձակելով անոր բերանը բռնեց էր:

Հիւանդը իր վերջին բառերը՝ պօռալու աստիճան բարձրաձայն արտասանել սկսած ըլլալուն, սպասաւորները կրնային օգնութեան հասնիլ և այն ատեն խեղճ Տամիէնի գործը՝ անել վիճակի մը մէջ կրնար մտնել:

Տըլանժ կոմսը կարծեց թէ յիսնապետը պիտի խեղդեցր զինքը:

Բայց փոխանակ արիւնարբու աչերու՝ բաց աչքեր միայն տեսաւ:

Յիրաւի տարաբաղդ յիսնապետը մէկ ձեռքով կոմսին բերանը գոցած ատեն, միւս ձեռքովն ալ իր աչերէն վազած արտատուքը կը սրբէր:

— Ա՛հ, յիրաւի թիապարտ մ'եմ ես, մարդասպան մը, կնասպան մը սպանութեան վարժ մէկը, բայց Պէրթիէն սպաննողը ես չէի, պարոն կոմս, և Աստուած ալ գիտէ որ

անոր կեանքը փրկելու համար արեանս վեր-  
ջին կաթիլն ալ զոհելու չէի վարաներ :

Իեղճ յիսնապետը ասոնք ըսելով կոմսին  
բերանը թողուց , ինկաւ իր աթոռին վրայ ,  
և սկսաւ դառնապէս լալ :

Այդ վայրկենին քիչ մնաց որ Տըլանժ կոմ-  
սը իր մտաց կարողութիւնն ալ բոլորովին  
պիտի կորսնցնէր :

Տամիէն՝ իր անխոհեմ խօսքերովը ինքզին-  
քը մատնած էր այնպիսի սրոշ կերպով մը և  
ժամանակագրական ճշդութեամբ մը , որ ա-  
մենէն զգուշաւոր ոստիկանութեան պաշտօն-  
եայն իսկ վայրկեան մը չի պիտի վարանէր  
վճռելու թէ բուն մարդասպանը այն էր :

Բայց միւս կողմանէ մարդասպան մը ի՛նչ-  
պէս կրնար լալ իր ամբաստանեալին առջեւ  
այնպիսի եղանակաւ մը , որուն անկեղծ ըլ-  
լալուն տարակոյսի տեղի չէր մնար :

Ասկից զատ ինքը բժշկաց կողմանէ պաշտօ-  
նապէս մահուան դատապարտուած մէկն էր ,  
և Տամիէն իր շունչը կտրելով կրնար սպան-  
նել զինքը իր անխոհեմ գաղտնիքը ոչնչացը-  
նելու համար , և ոչ ոք պիտի կասկածէր իր-  
մէ :

— Բայց լացերնիդ կտրեցէք և պատասխա-  
նեցէք ինձ . տեսէք ի՛նչպէս հանդարտօրէն  
կը խօսիմ կոր հիմա :

— Բայց . . . դուք . . . իսկ զիս . . . թիապարտ  
մը . . . մարդասպան մը կը կոչէք . . . մինչ-  
դեռ ձեռնէ աւելի արգահատող մը գտնուած  
չէր . . . դժբախտ Տամիէնի վրայ , ըսաւ յիս-  
նապետը հեծկլտալով :

— Բայց . . . դուք . . . դուք էիք . . . որ պատ-  
ճառ տուիք ատոր , պատասխանեց կոմսն ալ  
միեւնոյն կերպիւ հեծկլտալով :

— Ա՛հ , կուզէք որ ամէն բան ըսեմ ձե-  
զի . . . այո՛ , այնպէս կուզէք . . . և ես պար-  
տաւոր եմ ինքզինքս արդարացնելու . . . այն  
յանցանքէն զոր չեմ գործած :

— Ըսէք , ըսէք , պէտք ունիմ ամէն բան  
իմանալու . . . և ներելու իսկ մօտալուտ մահ-  
ուանէս առաջ :

— Լաւ ուրեմն մտիկ ըրէք : Ե՛հ , ծերունի  
հայրերը միշտ կասկածօտ կըլլան , գիտէք որ  
ի՛նչ աստիճանի յիմարաբար կը սիրեմ աղ-  
ջիկս . ո՛հ , կը վախնայի որ գլխէ պիտի հա-  
նէին զանի , ինչպէս որ ժամանակաւ գլխէ  
հանած էին իմ խեղճ կինս . ուստի , ամեն  
գիշեր Լուիզիս բնակարանին մօտերը մացառ-  
ներու մէջ պառկելով կը հսկէի . երէկ գիշեր  
մարդ մը տեսայ անոր գրան առջեւ :

Պէրթիէն էր այն :

Ի՛նչ մը վերջը աղջկանս սենեկին մէջ կոխե-  
ցի զինքը ճիշդ այն վայրկենին , երբ ին-

քը ծնրադրած էր անոր առջեւ և կը համարուէր զանի :

Ինչ ըլլալս և ինչ ընելիքս մոռցայ այդ միջոցին :

Ատրճանակ ի ձեռին Պէրթիէի վրայ յարձակեցայ և հրաւիրեցի զինքը որ իր անձը պաշտպանէ :

Պէրթիէ մերժեց իմ հրաւերս . . .

Ո՛հ, հիմա կը հասկնամ թէ ինչո՞ւ համար իր մերժումը . . . Չուզեց իր Լուիզին հօրը դէմ գէնք քաշել, և նախամեծար համարեց մեռնիլը, թէպէտև այդ վայրկենին պէտք ունէր իր անձը կենդանի պահելու որպէս զի քիչ մը վերջը կարող ըլլայ այն մենամարտին երթալու որ նախապէս որոշուած էր :

— Ուրիշ մենամարտի՞ մը կըսէք :

— Ո՛հ, կաղաչեմ համբերութեամբ մտիկ ըրէք ամեն բան, Պէրթիէի մերժումը ինչ պատճառներէ առաջ եկած ըլլալը հասկնալու անկարող՝ կատաղաբար իր վրայ պարպեցի հրաղէս . . .

— Իր վրայ հրաղէ՞ն պարպեցիք :

— Ա՛հ, գիտեմ որ ըրածս վատ բան մ'էր . բայց պարզապէս յիմարացած էի այն վայրկենին . . . Աստուած ալ ողորմեցաւ ինձ և չի թողուց որ մարդասպան մը ըլլամ : գնտակը չեղած էր իր ուղղութենէն և միմիայն անոր երեսը սկըթած էր :

— Ո՛հ դժբախդ Պէրթիէս :

— Լուիզս մնրած էր, բայց Պէրթիէի մեկնած ատեն սթափած . . . չեմ գիտեր ինչ նախագգայմամբ պաղատեցաւ ինձ որ խեղճ երիտասարդին ետեւէն վազեմ անոր կեանքը փրկելու համար :

«Վայրկեան մը իսկ չի վարանեցայ :

«Ինքզինքս դուրս նետեցի երթալ այն միւլնոյն երիտասարդին կեանքը փրկելու, զոր ես ինքս ոչնչացնել ուզած էի քիչ մը առաջ :

«Ա՛հ, ճիշդ ժամանակին հասայ . . . գերեզմանատան մօտը չարագործ մը յարձակած էր իր վրայ և Պէրթիէի գործը լմննալու վրայ էր :

— Ուրեմն ազատեցի՞ք զինքը :

— Այո՛, ազատեցի . . . բայց չէ . . . պիտի ազատէի . . .

— Ուրեմն այնտեղ մեռա՞ւ իմ Պէրթիէս :

— Ո՛չ, չի թողուցի որ մեռնի . . . բայց . . . բայց . . . այո՛ մեռած ըլլալու է . . . քանի որ այսօր իր յուղարկաւորութեան հանդէսը կատարեցաւ . . .

— Եւ լրագիրք ալ գրած են որ Պէրթիէիս դիակը ճիշդ գերեզմանատան մօտը գընուած է . . .

— Բայց կարելի է որ լրագիրք սխալ տեղեկութիւն առած ըլլան :

— Ո՛հ, այդ պատ ի պատ խօսքերով ինքըզինքնիդ կը մատնէք, պարօն, հիմա կատարելապէս կը հասկնամ որ Պէրթիէիս սպանիչը դուք էք, այո՛, դուք էք մարդասպանը և ձեզի բռնել պիտի տամ...

— Կեցէք, կաղաչեմ... մի պօռաք... խիստ ցաւալի սխալ մը պիտի գործէք... կը պարտաւորէք զիս ամենածանր գաղտնիք մը դուրս հանելու...

— Ո՛հ, գիտեմ ատոնց բոլորն ալ փախուստի ճամբաները են. բայց օձիքնիդ չի պիտի կարենաք ազատել իմ ձեռքէս...

— Երբու՞մ ըրէք որ յայտնելիք գաղտնիքս դուրս չի պիտի հանէք, և ամեն բան պիտի ըսեմ ձեզ, որպէս զի կատարելապէս վստահ ըլլայի թէ անմեղի մը դէմ կը յարձակիք:

— Հոգւոյս փրկութեանը վրայ կերդնում, և գիտէք որ արդէն խիստ քիչ միջոց ունիմ ապրելու:

— Լաւ, ուրեմն մտիկ ըրէք, մութին մէջ Պէրթիէի վրայ յարձակողը ճիշդ այն անձն էր որ իմ կիսո գլխէ հանած և թիապարտութեանս պատճառ հղած էր... վրէժս լուծեցի...

— Ո՞վ, Լըկէօիէն էր այն:

— Այո՛, նոյն ինքն որ 2000 ֆրանքի վարձք կ'ընդունէր Պէրթիէ սպաննելու համար:

— Բայց ո՞վ էր Պէրթիէն թշնամին:

— Սիրոյ մէջ իւր հակառակորդը, որուն կանխապէս վճարած 5000 ֆրանքը Լըկէօիէի դրպանին մէջ դտայ, և մնացեալ 15000 ֆրանքն ալ այս առաւօտ գերեզմանատան որոշեալ տեղը ձեռք անցուցի. հիմա այդ 20000 ֆրանքը Լուիզիս օժիտը պիտի ըլլայ ըստ խնդրանաց ձեր պատուահան Պէրթիէին:

— Ո՛հ, բարեսիրտ ազգականս... բայց գտնուած դիակը Պէրթիէինն է եղեր:

— Իր սիրուհին և հակառակորդը խաբելու համար իր զգեստները Լըկէօիէի դիակին հազցուցինք, և կը տեսնեմ որ խաղերնիս լաւ յաջողեր է. ամեն ոք այնպէս գիտէ որ մեռնողը Պէրթիէն է, և պէտք է որ միշտ այնպէս գիտցուի:

— Ո՛հ, երկինք, ի՛նչ մեծ երջանկութիւն, ուրեմն Պէրթիէս սպաննուած չէ, ողջ է ինքը:

— Միայն թէ քիչ մը վիրաւորուած, բայց իր վէրքը ամենեւին հոգ ըլլուելիք բան չէ. ամեն աչքէ ծածուկ՝ զինքը գաղտնաբար կը խնամեմ կ'որ, և ապահով եղիք պարօն կոմս, Տամիէն յիսնապետին ձեռները անվարժ չեն այս ուսրձին մէջ:

— Բայց Լուիզ... միթէ անիկա եւս գի-

տէ՞ որ Պէրթիէ սպաննուած չէ :

— Ո՛չ, տակաւին ժամանակ չունեցայ իրեն այցելութիւն մը տալու, անշուշտ հիմա իմացած ըլլալու է այն բանը, զոր Պրիւքսէլի մէջ չիմացող չէ մնացած. բայց Պէրթիէ և ես ալ տակաւին վերջին որոշում մը տուած չե՞նք այս մասին. տեսնենք, գուցէ աւելի լաւ պիտի ըլլայ որ Լուիզ եւս այնպէս գիտնայ թէ Պէրթիէ սպաննուած է :

— Բայց ես իմ աչքս տեսնել կուզեմ Պէրթիէս, ծածուկ կերպիւ զինքը հոս բերելու հնար մը կրնա՞ք գտնել, ազնիւ բարեկամս :

— Ո՛հ, ասիկա կատարելապէս անկարելի է, պարոն կոմս :

— Ինչէ՞ն...

— Որովհետեւ Պէրթիէ չի կրնար շարժել իր տեղէն հիմակու հիմա :

— Հը՛, շատ հաւանական է որ մինչև վաղն առաւօտ ես ալ մեռնիմ առանց Պէրթիէիս երեսը վերջին անգամ տեսնելու :

— Բայց ուրիշ ի՞նչ կրնանք ընել, տէր իմ :

— Ո՛հ, դուք սուտ կը խօսիք, ժամանակ վաստկելու համար սուտ պատմութիւններ կը հնարէք, Պէրթիէիս սպաննիչը դուք էք, պարոն յիսնապետ, և կը յուսաք որ իմ մահուամբս ամեն բան գաղտնեաց մէջ կը կոչ սուի կ'երթայ. է՛հ, ասիկա զարմանալու բան չէ :

մարդ մը որ կրկին անգամ մարդասպան կըլլայ, հազար անգամ ալ ստախօս կրնայ ըլլալ :

Տամիէնի աչքը նորէն լեցան :

Կամաց մը իր դրսւանը մտցուց ձեռքը :

Խնամով ծալուած թուղթ մը հանեց և ոտքի ելաւ :

Որովհետեւ ծերունի կոմսը իր շարժման կարողութիւնը բոլորովին կորսնցուցած էր, ինքն անոր ճիշդ քովը գնաց և թուղթը անոր աչաց ներկայացունելով ըսաւ :

— Պարոն Պէրթիէ խիստ լաւ գուշակած էր. չի պիտի ուզէիք իմ խօսքերուս հաւատալ, ուստի մեծամեծ դժուարութեամբ այս գիրս գրեց և ինձ յանձնեց որ ի հարկին ձեզի ներկայացնեմ, որովհետեւ իմացած էինք ձեզի պատահած դժբախտութիւնը, և գիտէինք որ դուք անձամբ այցելութիւն մը չէք կըրնար տալ մեզի. կը ճանչէ՞ք այս ձեռագիրը, պարոն կոմս :

Տըլանժ կոմսը կարելի եղածին չափ խոշոր խոշոր բացաւ իր տկարացած աչքը, ճանչեց իր ազգականին ձեռագիրը և հեծկլտանօք սկսաւ կարդալ հետեւեալ տողերը :

« Պարոն կոմս,

« Տամիէն ազատեց իմ կեանքս :

« Ամեն բան իրեն կը պարտինք :

«Սպաննուողը և թաղուողը ես չեմ. թէ-  
պէտեւ բոլոր աշխարհ այնպէս կը հաւատայ  
թէ ես եղած ըլլամ անիկա .

«Թշուառական Լըկէռիէն սպաննողը Տա-  
միէնն է որ իր վրէժը լուծեց .

«Եթէ պարագաները ներեն գաղտնապէս  
պիտի գամ ձեր պատուական ձեռները սեղ-  
մելու .

«Թեթեւ կերպիւ վերաւորուած եմ ազդ-  
րէս և Տամիէն կը լսնամէ զիս գաղտնապէս .

«Մահուանս ամենափոքր երկիւղն իսկ չու-  
նիմ .

«Կը յուսամ շարաթէ մը բոլորովին ոտքի  
եջնել .

«Բայց բոլոր աշխարհ այնպէս գիտնալու է  
որ սպաննուած և թաղուած եմ ես .

«Փաղտնիքս պահեցէք, աղնիւ ազգականս,  
և այս թուղթը վերստին յանձնեցէք բարի  
Տամիէնին որ ձեր աչաց առջեւ պիտի այրէ  
զայն .

«Միշտ ձերդ»

«Պէրթիէ»

— Ես չեմ կրնար շարժիլ, սեղմէ ձեռքս, ազ-  
նիւ բարեկամ, և ներէ ինձ, ըսաւ ծերունի  
կոմսը խիստ տկարացած ձայնով մը .

Տամիէն կուլար կոր այդ վայրկենին, աշ-  
խուժիւ սեղմեց կոմսին ձեռքը, բայց այն

աստիճան յուզման մէջ էր, որ բառ մ'իսկ  
չի կրցաւ արտասանել .

Յետոյ իր բազմապաշար գրպանէն լուցկի  
հանելով վառեց զայն, և Պէրթիէի նամակը  
բոցին բռնելով մոխիր դարձուց .

Ճիշդ այն միջոցին էր որ սպասաւորը սե-  
նեկի դուռը բանալով ներս կը մտնէր հի-  
ւանդ կոմսին ծանուցանելու որ նօտարն ու  
բժիշկը երկուքը մէկանց եկած էին և իւր  
հրամանին կ'սպասէին .

— Երկուքն ալ ներս հրամցուցէք, ըսաւ  
կոմսը .

Նախ բժիշկը հիւանդին քով մօտենալով,  
անոր բազկերակը քննեց .

Գիտուն մարդուն դէմքին վրայ տեսնուած  
նշանը՝ լաւ նշան մը չէր .

— Ո՞րչափ ժամանակ ունիմ ապրելու, հար-  
ցուց կոմսը՝ տկար բայց անայլայլ ձայնով մը .

— Բայց ի՞նչու այդպիսի հարցում մը կ'ը-  
նէք .

— Գոնէ մէկ ժամուան կեանք չնորհեցէք  
ինձ, պարոն բժիշկ, որպէս զի վերջին պար-  
տաւորութիւններս կատարեմ .

— Դուք տակաւին երկար ատեն կրնաք  
ապրել, տէր իմ .

— Սակայն դէմքերնիդ՝ լեզուներնդ աւե-  
լի անկեղծ է, իմ բարի բժիշկս, կը հաս-

կընամ որ խիստ քիչ ատեն ունիմ ապրելու ,  
 և դուք ահարկու վայրկենին մօտեցած ըլլալը  
 ինձմէ պահելու բարեսրտութիւնը կը ցու-  
 ցնէք . . . բայց մի՛ կարծէք թէ մահուանէ կը  
 վախնամ, միմիայն շնորհք ըրէք զիս վստա-  
 հացնելու որ պիտի կարենաք դոնէ ժամ մը  
 ապրեցնել զիս . նաեւս հաճեցէք պարոն նօ-  
 տարին ապահովութիւն տալու որ այս վայր-  
 կենիս կատարելապէս տէր եմ իմ մտքիս :

— Ուրեմն կտակագիր մը շինել կուզէք :

— Այո՛ , պարոն բժիշկ :

— Ուրեմն . . .

— Ուրեմն աճապարեմ ըսել կուզէք :

Բժիշկը չի կրցաւ պատասխան տալ :

Այն ատեն Տըլանժ կոմսը նշանով մը իր  
 մօտը կանչեց նօտարը և յիմար յիսնապետը ,  
 որոնք բժիշկին հետ միատեղ սեղանին շուրջը  
 նստան :

Ծերունի հիւանդը ծանր ծանր , և իւրա-  
 քանչիւր բառին վրայ մէկ մէկ քիչ կանգ  
 առնելով, իւր վերջին կամքը յայտնեց և ա-  
 ղաչեց պարոն նօտարին որ պաշտօնապէս գը-  
 ըի առնու զանոնք :

— Ըսինք թէ Տըլանժ կոմսը տարագիր  
 մ'էր , և հետեւաբար իր ստացուածոց մե-  
 ծագոյն մասը կորուսած :

Բայց իւր սպասաւորներուն հանած բաժ-

նէն զատ , տակաւին իւր տրամադրութեանը  
 տակ կը մնային 240 ,000 ֆրանք , զորս երեք  
 հաւասար բաժիններու ճղելով 80 ,000 ֆը-  
 րանք կը կտակէր Պէրթիէի որդւոյն , 80000  
 ֆրանք ալ կը կտակէր Լուիզի , և 80000 ֆը-  
 րանք ալ կը կտակէր Յիմար Յիսնապետին :

Ստոր վրայ կռիւի պէս բան մը տեղի ու-  
 նեցաւ :

Պարոն բժիշկը և մեռնելու վրայ եղող ծե-  
 րունի կոմսը ի զուր աղաչեցին և պաղատե-  
 ցան :

Տամիէն սանթիմ մը իսկ չէր ընդուներ ի-  
 րեն համար :

Վերջապէս աղաչողներուն ճարը հատնե-  
 լով՝ կտակը բարեփոխել պէտք եղաւ , որով  
 240 ,000 ֆրանքը ճիշդ երկու բաժնի կը զատ-  
 ուէր . որուն կէսը Պէրթիէի որդւոյն և քմիւս  
 կէսն ալ Տամիէնի աղջկան կը թողուէր :

Ահա այս կերպիւ Լուիզ 140 ,000 ֆրանքի  
 հասնող պատկառելի օժտի մը տէր եղած  
 կըլլար առանց իր գիտնալուն , այսինքն 20 ,  
 000 ֆրանք Պէրթիէի արեան գնովը , և 120 ,  
 000 ֆրանք եւս իրեն բոլորովին անձանօթ  
 կոմս Տըլանժի կտակաւը :

Երբ ամեն բան վերջացաւ և բժիշկն ու նօ-  
 տարը դուրս ելան , Տամիէն եւս մեկնելու  
 կը պատրաստուէր :



Կոմսը աչքովը նշան մը ընելով ծերունի յիսնապետը քովը կանչեց, և հազիւ հազ իմանալի ձայնիւ ըսաւ անոր,

— Աղնիւ բարեկամս, այլ եւս զիրար տեսնելիք չունինք այս աշխարհի վրայ... Իմ կողմանէս գրկէ Պէրթիէս, և ըսէ իրեն որ շատ երջանիկ պիտի մեռնէի... եթէ գիտնայի որ... աղջկանդ... Լուիզիդ հետ... պիտի... ամուսնանար:

Տամիէն առանց պատասխան մը տալու՝ ախշատութենէ կարծրացած կռուվովը աչերը սրբեց, անգամ մ'ալ հիւանդին պաղ ձեռները սեղմեց, և քայլերը իրարու մէջ անցընելով սենեկին դռնէն դուրս ելաւ:

Դրոի սրահին մէջ կ'սպասէին բժիշկն ու սպասաւորը... և քահանայ մը:

— Պարոն բժիշկ, հիւանդը որչա՞փ ատեն ունի ապրելու, հարցուց Տամիէն հեծկլտանօք:

— Հազիւ ժամ մը, պատասխանեց բժիշկը:

— Գոնէ հոգ եվարքը թեթեւ պիտի կարենայ ըլլալ:

— Այդ մասին ինչ որ կարելի է՝ պիտի ընեմ, կը յուսամ թէ կարելի եղածին չափ հանդարտօրէն պիտի աւանդէ իր հոգին, և գուցէ առանց իսկ զգալու:

Բժիշկին ըսածին պէս եղաւ:

Ժամ մը յետոյ կոմս Տըլանտ դադարած էր ապրելէ:



### ՏԱՄԻԷՆԻ ԵՒ ՊԵՐԹԻԷՒ ՆՈՐ ԿՈՒԻԵԸ

Տամիէն՝ կոմսին ապարանէն դուրս ելնելուն պէս վազեր գնացեր էր իր խցիկը, ուր անկիւն մը պառկած էր վերաւորեալ Պէրթիէն:

Յիմար Յիսնապետը դռան փայտեայ նիզը դնելէ ետեւ երիտասարդին քով նստաւ որ անհամբերութեամբ անոր բերած լուրերուն կ'սպասէր:

— Կոմսը ի՞նչ վիճակի մէջ թողուցիր, հարցուց Պէրթիէ տկար ձայնով մը:

— Ալ անոր վրայ մի մտածեր, զաւակս, պատասխանեց ծերունի պահնորդը, սրուն աչերը մէկէն ի մէկ լեցան:

Պէրթիէ հասկցած էր ամէն բան,

Չի կրցաւ իր հեծկլտուքը և լացը բռնել:

— Ուրեմն մեռած է հիմա:

— Ոչ, տակաւին ողջ է բայց ժամ մը չի տուած ամեն բան պիտի վերջանայ:

— Անշուշտ իմացուցիր իրեն ի՞մ մեռած չըլլալ:

— Այո, և այս գաղտնիքը իրեն հետ գերեզման կը մտնէ:

— Իե՛ղճ ազգականս:

— Ո՛հ, պարոն Պէրթիէ, չէի գիտեր որ կոմսը այնչափ բարի մարդ մ'էր, և գիտե՞ս որ Լուիզիս վրայ ալ մեծ համակրութիւն ունէր:

— Արդէն գիտէի որ այնպէս էր, ծերունի՛ բարեկամս:

— Բայց բան մը կար որ չէիր կրնար գիտնալ:

— Ո՞ր բանը:

— Հէ՛ր, պարոն կոմսը իր հարստութեան կէսը որ 120,000 ֆրանքի պատկառելի գումար մը կը կազմէ, իմ խեղճ աղջկանս կտակեց:

— Ո՛հ, ըրա՞ւ այդ բանը, գօչեց Պէրթիէ, ուրախութեան ամենայայտնի ցոյցով մը:

— Այո՛, տարակուսիլ պէտք չէ, իմ աչացօ առջեւ գրել տուաւ իր կտակագիրը:

— Ա՛հ, օրհնեալ ըլլայ, քանի՛ցս օրհնեալ ըլլայ:

— Բայց, չես հարցնէր թէ միւս կէսը որի՞ կտակեց:

— Տղո՞ւս, միակ որդւո՞յս կտակեց:

— Ո՛հ, հիմա կը հասկնամ որ դուն քու ազգականդ ինձմէ աւելի լաւ կը ճանչնաս եղեր: Այո՛, 120,000 ֆրանք եւս կտակեց քու որդւոյդ, որն որ հիմա Լուիզի քով կը գտնուի անշուշտ:

— Լուիզի քով կը գտնուի:

— Այո, այս առաւօտ պիտի բերէին և իրեն յանձնէին իմ մանկիկս, և քու հրեշտականման աղջիկդ խօսք տուաւ ինձ որ բուն իր փոքրիկ եղբօրը պէս պիտի խնամէ զայն:

— Ո՛վ Աստուած իմ, ուրեմն երէկ գիշեր դուն այն պատճառաւ կը գտնուէիր աղջկանս քով:

— Այո, վերջին այցելութիւնս էր որ կուտայի իրեն, և ճիշդ հրաժեշտի պահուս էր որ յարձակմամբ ներս մտար պատուհանէն:

— Այո, այո, որչափ թշուառ եմ ես, աղջկանս առաքինութեանը վրայ կասկածեցայ, և եթէ երկնից գթութիւնը միջամտած չըլլար, գրեզ ալ սպաննած պիտի ըլլայի, զքեզ, որ, Աստուած ալ գիտէ, հիմա բուն զաւակի մը պէս կը սիրեմ: Ո՛հ, կնասպան եղած էի, և քիչ մնաց որ որդեւսպան մ'ալ պիտի ըլլայի և պատուական արիւն մը պիտի քամէի ճիշդ իմ աղջկանս աչացը առաջ որ ինձմէ շատ աւելի գիտէր յարգել զայն:

Տամիէն ասոնք ըսած ատեն միանգամայն ինկած էր Պէրթիէի վիրաւոր մարմնոյն վըրայ, առանց մտածելու թէ իր այս դործողութեամբը կը մխասէր և ցաւ կը պատճառէր խեղճ երիտասարդին, և կրկին կրկին «Սիրելի զաւակս» աղաղակելով կը համբուրէր անոր երեսները:

Քիչ մնաց որ Յիմար Յիսնապետը նաեւս պիտի աղաղակէր թէ .

«Մեռնելու վրայ եղող ծերունի կոմսին վերջին փափաքն էր Պէրթիէի ամուսնութիւնը՝ Լուիզի հետ» :

Բայց խեղճ պահնորդը այդ խնդրոյն վերայօք բառ մ'իսկ իր բերնէն դուրս հանելու համարձակութիւնը չի կրցաւ ունենալ .

Ոչ թէ այն պատճառաւ որ ուրիշ վկայ մը մէջ չի կարենալ բերուելուն համար , իր աղջկան ապագային նկատմամբ ըսելիքները քիչ մը կասկածելի պիտի կրնային երեւիլ , ոչ այն պատճառաւ չէ , որովհետեւ նախկին թիապարտին այն վիճակին մէջ այդպիսի նուրբ հաշիւներու մէջ մտնելը մտքէ անցնելն իսկ իրեն պէս Յիմար պատուանունին արժանի ըլլալ կ'ենթադրէր , այլ պարզապէս անոր համար որ իր համբաւեալ նախկին քաջութիւնը բոլորովին կորսնցուցած էր խեղճը այն պահուն .

—Ո՛հ , հիմա շատ գոհ եմ , պատուական բարեկամս , ըսաւ Պէրթիէ . բարի և խելացի ազգականս , իմ մահս իր կողմանէ եւս ստուգած երեւելու համար , ինձ ընելիք կտակը ինձմէ աւելի սիրելիներուս ըրած և անօնց ապագան ապահոված է , երկինք վարձահատոյց ըլլան իր բարի և անմեղ հոգւոյն .

Պէրթիէի արտասանած այդ «Սիրելիներուս» բառին կէսը Լուիզի կը վերաբերէր .

Ուրեմն Տամիէն այս երջանիկ արտայայտութենէ քաջալերուելով , «Ամուսնութեանս կամքի» խնդիրը ազատօրէն մէջ բերելու էր այս անգամ :

Եւ քանի՛ քանի անգամներ իր բերանը բացուեցաւ և դոցուեցաւ այս բանին համար , սակայն առանց խօսք մը դուրս ելնելու անկից .

Եթէ դժուարութիւնը մէկ հատ մը եղած ըլլար , կարելի էր որ Յիմար Յիսնապետը աչքը առնուր անօր հետ անգամ մը ճակատիլ .

Բայց երկուք եղան անօնք , և երկուքն ալ անյաղթելի կ'երեւէին ծերունւոյն յուսահատ աչացը :

Ասոնցմէ մին էր արդէն նոյն իսկ ամուսնութեան առաջարկութիւնը :

Իսկ երկրորդն էր այն առաջարկութիւնը՝ ներկայացուելու վայելուչ աստիճանի բերելիք պատշաճ բառերը գտնելը :

Այս մասին Տամիէնի պաշարը արդէն ըսպառման վիճակի մէջ էր :

Չգացած յուզմունքը բոլորովին շուարեցուց զինքը :

Ուստի , չրթներու մի քանի ողորմելի և բուռն՝ այլ բոլորովին ամուլ շարժումներէ

ետեւ, Տըլանժ կոմսին վերջին կամքի յայտ-  
նութիւնն ալ վիժման անդունդը գահավի-  
ժեցաւ :

— Պէտք է որ անգամ մը երթաս ու աղ-  
ջիկդ տեսնես, սիրելիս :

— Անշուշտ երթալու եմ, բայց կը մտա-  
ծեմ թէ ի՞նչ ըսեմ իրեն :

— Ա՛հ, ինչ ըսելիքդ և ինչ ընելիքդ յայտ-  
նի բաներ են :

— Այո՛, անշուշտ յայտնի բաներ են, բայց  
մարդ կուզեմ ըսելիքներս ըսելու և ընելիք-  
ներս ընելու... կեցիր նայիմ... կեցիր, կե-  
ցիր... պիտի ըսեմ թէ մեռած չես... կամ  
թէ միայն մեռնելու պէս բան մը եղած  
ես... բայց ասկից ի՞նչ կրնայ հասկնալ աղ-  
ջիկս... չէ՛, այս չեղաւ... պիտի ըսեմ թէ  
հակառակորդդ սպաննած ես... է՛հ, այն ատե-  
սեն պիտի ըսէ որ ուրեմն դուն սպաննուած  
չես... թող այնպէս ըսէ... կը պատասխա-  
նեմ թէ դուն ալ վիրաւորուած ես... ա՛հ,  
ի՛նչ սքանչելի խորհուրդ էր որ ինկաւ միտ-  
քըս... այսչափ խելացի ըլլալս ես ալ չէի  
գիտեր... բայց կեցիր, հապա ելլէ ուր ըլ-  
լալդ հարցնէ և զքեզ տեսնել ուզէ՛... ի՞նչ  
պատասխանելու է իրեն այն ատեն... ա՛հ  
այս ալ չեղաւ, որչա՛փ յիմար եմ ես... բայց  
ինչո՞ւ կը լռես, բարեկամս, ըսէ՛ դուն ինքդ  
բան մը հասկցա՞ր ըսածներէս :

Տամիէն տեսնելով որ Պէրթիէ ինքզինք  
բռնելու անկարող ըլլալով խնդալու սկսած  
էր, ինքն ալ սկսաւ խնդալ իր ըսածներուն  
վրայ :

— Բայց վերջապէս երթալու և բան մը  
ըսելու իմ իրեն, այնպէս չէ՞, դուն ըսէ որ  
ի՞նչ զրուցեմ. հիմա այնպէս ըմբռնէ որ դուն  
Լուիզն ես, ու ես ալ քեզի ներկայացած եմ  
և դուն ալ բնականաբար հարցուցած ես թէ  
ի՞նչ լուր բերած եմ, ինձ խորհուրդ տուր  
նայիմ, ի՞նչ ըսեմ :

— Ազնիւ բարեկամս, նախ և առաջ, աղջը  
կանդ ներկայացած ատենդ, կարելի եղածին  
չափ վշտակիր դէմք մը ցուցնելու ես իրեն :

Տամիէն վարժ դերասանի մը պէս մէկէն  
ի մէկ ցաւագին դէմք մը առաւ :

— Հա՛հ, ատիկա շատ լաւ է, աղջիկդ զքեզ  
այդ վիճակին մէջ տեսած ատեն պիտի հար-  
ցնէ քեզ թէ ի՞նչ ունիս. այն ատեն փոխա-  
նակ պատասխանելու առաջին անգամ լալու  
պէս բան մը ընելու ես :

Տամիէն այս անգամ կեղծիքը իրաւի փո-  
խելով սկսաւ բարձրաձայն լալ :

— Այդ աւելի լաւ է, բարեկամս, Լուիզի  
սիրտն ալ պիտի շարժի. ամեն բան պիտի  
հասկնայ, և գուցէ ինքն ալ պիտի լայ իմ  
վրաս :

— Ա՛հ, ատոր տարակոյտ չիկայ, պարոն Պէր-  
թիէ, գոչեց նախկին յիսնապետը հեծկը-  
տուք մ'ալ աւելցնելով իր լացին վրայ:

— Է՛հ, այն ատեն կ'ըսես որ Աստուծոյ հը-  
րամանն այսպէս էր. արդէն այս վայրկենիս  
ինքն ալ գիտէ որ ես մեռած եմ:

— Բայց աղջիկս լրագիր չի կարգար, ո՛ւր-  
կից իմացած պիտի ըլլայ այդ:

— Իրեն յանձնած թուղթերէս, զորս պի-  
տի բանար ու կարգար երէկ գիշեր ժամը  
տասնհւմէկին:

— Ուրեմն ամեն բան ըսած ես իրեն այդ  
թուղթերուդ մէջ:

— Մենամարտու թիւնը և անոր պատճառ-  
ները չեմ ըսած. միայն հասկցուցած եմ ի-  
րեն որ եթէ մինչեւ տասնհւմէկը չի վերա-  
դառնամ և ինքը ազատ ըլլայ այն թուղթե-  
րը կարգալու, այլ եւս մեռած պիտի ըլլամ  
ես:

— Ուրեմն կուզես որ միշտ այնպէս հաւա-  
տայ թէ մեռած ես:

— Գոնէ հիմակու հիմա պէտք է որ այն-  
պէս գիտնայ, ինչպէս որ ուրիշները այնպէս  
գիտեն:

Տամիէն իր գլուխը վար կախեց տխրա-  
գին:

— Ըսածիս պէս պիտի ընես, այնպէս չէ՞,  
Տամիէ՛ն բարեկամս:

— Դուն ինձմէ շատ խելացի ես, պարոն Պէր-  
թիէ, և քանի որ այդպէս կը կամիս, ըսել  
է որ ներկայ պարագայից մէջ ամենէն խելա-  
ցի բանն է աղջիկս ալ խաբել ինչպէս որ խաբ-  
ուած են ուրիշ բոլոր մարդիկ:

— Յետոյ պէտք է որ իրեն իմացնես իմ  
ազգականիս մահը եւս. նոյնպէս այն 240,000  
Ֆրանքի կտակը որով կոմս Տըլանժ իր հա-  
րստութեան կէսը իրեն կը թողու, և միւս  
կէսը իմ զաւկիս:

— Իսկ քու արեանդ գինը եղող այն 20,000  
Ֆրանքը, որուն համար համաձայնած էինք  
քեզի հետ որ Լուիզիս օժիտն ըլլայ:

— Այն գումարն ալ հիմակու հիմա քու  
քովդ պէտք է մնայ, որպէս զի կարենաս  
պատշաճ դիրքի մը մէջ ապրելու:

— Բէ՛հ, ես հարստութի՛ւնը ինչ պիտի  
ընեմ, ես որ գերեզմանատան պահնորդի փո-  
խանորդ մ'եմ միայն, և ահա այս պատճա-  
ռաւ մերժեցի կոմս Տըլանժի ինձ պարգե-  
ւած 80,000 Ֆրանքն ալ:

— Բայց դուն այսուհետեւ առաջուան խո-  
նարհ դիրքին մէջ չես կրնար մնալ:

— Չե՛մ կրնար մնալ, ի՞նչ ըսել է այդ.  
ո՛վ կրնայ արգելել զիս այդ համեստ վիճակս  
չարունակելէ:

— Քու աղջիկդ և իմ որդիս կարգիլեն զքեզ:

իմ պարկեշտ բարեկամս, որոնք հիմա հա-  
րուստ ըլլալով պարտին քաղաքին դիւրակ-  
եաց բնակչաց թաղերէն միոյն մէջ իրենց  
դիրքին վայել բնակարան մը ունենալ, և  
դուն պէտք է որ անոնց մօտը և տուններնին  
իսկ գտնուիս իբրեւ պաշտպան:

— Ո՛հ, այո, աղջիկս և քու որդիդ չեմ  
կրնար անպաշտպան թողուլ կամ ուրիշի մը  
պաշտպանութեանը յանձնել. բայց դո՛ւն ինչ  
պիտի ընես:

— Պիտի մեկնիմ այս երկրէն:

— Պիտի մեկնի՛ս... զիս, իմ աղջիկս, և  
քու որդիդ թողո՞ւլ կուզես,

— Պէտք է որ այնպէս ընեմ, իմ բարի ծա-  
միէնս, մեռած մարդ մը պէտք չէ որ շա-  
րունակէ ապրել այն երկրին մէջ, ուր ծնած,  
մեծցած և կեցած է մինչեւ իր մահուան  
վայրկենին:

— Բայց զատուի՛լ քեզմէ ճիշդ այն պահուն-  
երբ Երկնային Նախաինամութեան ձեռքը  
զմեզ միացուցած և մահացու թշնամութիւն  
մը անքակտելի բարեկամութեան փոխած է:

— Սակայն այն միեւնոյն Նախաինամական  
ձեռքն է որ պատշաճից ուղին կը ցուցնէ ինձ.  
հոգ մի՛ ընեք, ազնիւ բարեկամս, հեռաւոր  
երկիրներ չի պիտի գաղթեմ, թէպէտեւ եր-  
թալիք տեղս ես ալ որոյած չեմ դեռ. բայց

ուր որ ալ ըլլամ երբեք չի պիտի մոռնամ  
իմ ծամիէն բարեկամս, ազնիւ Լուիզդ, և իմ  
սիրասուն որդիս. դուք երեքնիդ էք միայն  
որ ինձ սիրելի մնացած էք և պիտի մնաք այս  
մոռացկոտ աշխարհին մէջ և կը յուսամ ու  
կը հաւատամ որ ինչ ալ պատահի դուք եւս  
չը պիտի մոռնաք զիս անոր պէս որ ամեն  
պատճառներ ունէր երբեք զիս չի մոռնա-  
լու... և չի մատնելու համար:

Պէրթիէի այս վերջին խօսքը Անժէլիքի հա-  
մար էր:

Խեղճ երիտասարդը իր գլուխը վար կա-  
խեց... և իր ուսերուն ելեւէջէն կրնար հաս-  
կցուիլ որ կուլար:

— Բայց ինձ նայէ, զուարթացիր, Պէրթի-  
էս, զուարթացիր կրսեմ քեզ, վերջին կամ-  
քըդ յարգելու խօսք կուտամ քեզ, այո՛,  
պիտի հաւանիմ որ զմեզ ձգես երթաս, թէև  
Աստուած միայն դիտէ թէ որչա՛ն ծանր և  
անհանդուրժելի պիտի գայ ինձ բաժանու-  
մըդ, կ'երգնում որ երբեք չի պիտի մոռ-  
նանք զքեզ, ես՝ իբրեւ կենդանի բարեկամ  
մը, և Լուիզս ու որդիդ իբրեւ մեռեալ բա-  
րեկամ մը նկատելով զքեզ, և պիտի երթանք  
այն եղբունագործ Լրկէնիէի շիրմին ծաղկանց  
փունջեր նուիրելու, իբրեւ մեր սիրելի Պէր-  
թիէին շիրմը. բայց դուն նամակ պիտի գը-  
րես ինձ, այնպէս չէ՞:

—Ո՛հ, առոր տարակոյս մի ունենար, աղ-  
նիւ բարեկամս. եթէ արգելէիր իսկ դարձ-  
եալ պիտի գրէի քեզ, քու անձիդ, Լուիզին,  
և որդւոյս վրայօք միշտ տեղեկութիւն առ-  
նելու համար... նաեւ տեղեկութիւն առ-  
նելու մատնիչ Անժէլիքի և Էթիէն Տըլլապու-  
շի կենաց վրայօք:

—Ս, այդ մասին կրնաս կատարելապէս  
իմ վրայ վստահիլ, պարոն Պէրթիէ, քու թըշ-  
նամիներդ իրենց արժանաւոր պատիժը պի-  
տի կրեն օր մը. վստահ եմ այս բանին, վըս-  
տահ եմ Երկնային արդարութեան վրայ...  
բայց կեցի՛ր, քեզի ըսելիք մ'ալ ունիմ, դուն  
առանց ստակի չես կրնար մեկնիլ այս երկ-  
րէն:

—Ս, ես այդ մարդ մ'եմ և երիտասարդ,  
պարոն Տամիէն, և կրնամ իմ ձեռացս աշ-  
խատութեամբը ապրիլ, առանց ուրիշի մը  
ստակին օգնութեանը:

—Բայց քու գործդ միմիայն ապրիլ չէ, բա-  
րեկամս, դուն մեծ նպատակներու տէր մէկն  
ես, և գիտեմ որ ճիշդ հիմա մասնաւոր նը-  
պատակ մ'ալ ունիս, այսինքն վրէժխնդրու-  
թեան արդար նպատակը՝ որուն համար հա-  
րուստ ըլլալ պէտք է. միթէ զիս այսչափ  
բանը չը գիտնալու չափ յիմար մէկու մը  
տե՛ղ կը դնես:

—Ս.յդպիսի նպատակ մը ունենալս չեմ ու-  
րանար պարոն Տամիէն. բայց եթէ բան մը  
կարենամ ընել, միայն այն կարողութեամբ  
ընել կուզեմ որուն վրայ պարծենալու իրա-  
ւունք մը ունենամ թէ իմս է:

—Բայց ո՞վ կըսէ քեզի թէ իմ առաջարկե-  
լիք գումարս ալ քեզի չի պատկանիր:

—Ո՞ր գումարին համար կ'ըսես:

—Է՛հ, ո՛ր գումարին համար պիտի ըսեմ,  
այն 20,000 Ֆրանքին համար կըսեմ որ իսկ  
և իսկ քու արեանդ գինն է:

—Բարեկա՛մս, կը մոռնաս որ ես այդ գու-  
մարը քու տրամադրութեանդ տակ թողուցի,  
միանգամայն պատճառներն ալ բացատրե-  
լով:

—Ինձ նայէ՛, պարոն Պէրթիէ՛, ես երկար  
բարակ նուրբ խօսակցութիւններէ բան մը  
չեմ հասկնար, այնպէս փաստաբանօրէն մի  
խօսիր ինձ հետ, ես միայն սա չափը լաւ գի-  
տեմ որ դուն որչա՛փ անձնատիրութիւն ու-  
նիս, այնչափ անձնատիրութիւն ես ալ ունիմ,  
յիրաւի յիմար էի որ իմս չեղող հարստու-  
թիւն մը ինձ պարգեւելիք ընդունիլ հաճե-  
ցայ քու գեղեցիկ և համոզիչ առարկութիւն-  
ներուդ խարուելով. քեզի վերջնական խօս-  
քըս ըսեմ հիմա. կամ այն 20,000 Ֆրանքը  
հետդ առնելով կը մեկնիս ասկից, և կամ

եթէ ոչ, ամեն բան պիտի յայտնեմ Լուիզին :

— Ո՛չ, այդ ըսածդ չի պիտի ընես, Տամիէն, ազնիւ բարեկամս :

— Ուրեմն պէտք է որ առաջարկութիւնս ընդունիս :

Այն ատեն երկար վիճարանութիւն և կըռիւ մ'է սկսաւ այս երկու պարկեշտ անձանց մէջ :

Բայց Տամիէն այս անգամ շատ հաստատամիտ գտնուեցաւ :

Պէրթիէ վերջապէս համաձայնութեան առաջարկութեան մը գիջանելու կը հաճէր :

Այսինքն այն համաձայնութեան որ հաւասար զօրութեանց մէջ պատշաճաւոր կընայ նկատուիլ :

Կէս առ կէս :

Բայց անողոք Տամիէն ասոր ալ դէմ կը կենար :

Կուրը և վիճարանութիւնը նորէն սկսաւ : Վերջին յաղթութիւնը մեր Տամիէն բարեկամին քով մնացած էր :

Պէրթիէ իր մեկնումը ներելի ընող առողջական վիճակին հասնելուն պէս պիտի բաժնուէր իր բարեկամէն, և օտար երկիր մը պիտի երթար, հետը տանելով 15,000 ֆրանք :

Իսկ իր արեան գնոյն մնացորդը եզով 5000 ֆրանքը միայն պիտի մնար Տամիէնին, որով

պիտի աշխատէր Լուիզի և փոքրիկ Պէրթիէին պաշտպանութեան պատշաճ վիճակի մէջ դնել ինքզինքը :

Երկու բարեկամք այս վերջնական կարգադրութեան վրայ բոլորովին գոհ՝ գրկեցին և խանդաղատանօք համբուրեցին զիրար :

Յետոյ Տամիէն կը մեկնէր իր բարեկամին քովէն երթալ իր Լուիզը գտնելու համար :



7.

### ԱՆՃԱՐԱԿ ԴԵՍՊԱՆԸ

Թէ Պէրթիէի կարծեցեալ սպանութեան գիշերը, ի՞նչ սոսկալի և տագնապալի գիշեր մը եղած էր Լուիզի համար, ասոր նկարագրութեան հարկ չի կայ :

Միայն սա չափը ըսել բուական է որ հետեւեալ առաւօտուն խեղճ աղջկան երեսը նայողը խիստ դժուարաւ պիտի կարենար հաւատալ թէ անիկա իրօք Լուիզն էր :

Այն ահուելի գիշերը հինգ վայրկենի քուն մ'ալ քնանալու կարող չէր եղած Յիմար Յիսնապետին աղջիկը :

Հիմա ինքը պատուհանն էր :

Անհամբերութեամբ կը դիպէր գերեզմա-



նատան ճամբան, ուրկէ ամեն վայրկեան կը յուսար թէ բարի ծերունւոյն գալը պիտի տեսնէր :

Անկից իր խոնաւ աչերը կը դարձնէր քաղաքին մեծ պողոտան, ուրկից եւս այն ծեր կնոջ երեւիլը կահնկալէր անհամբեր, որուն համար ըսած էր Պէրթիէ թէ իր զաւակը պիտի բերէր իրեն խնամոցը յանձնելու համար :

Ժամեր անցան այս կերպիւ :

Վերջապէս Լուիզ կրցաւ տեսնել գիւղացիի կերպարանքով և սեւեր հագած կին մը որ մանկիկ մը գրկած կը յառաջանար զգուշութեամբ իր չորս կողմը դիտելով :

Լուիզ խենդի մը պէս վար նետուեցաւ սանդուղէն և փողոցի դուռը վազեց :

Քանի մը վայրկեան յիտոյ պառաւ կինը՝ մանկամարդ աղջկան քովն էր, և դուռը գոցուելէ ետեւ հազիւ կրցած էր ինքզինքը աթոռի մը վրայ նետել իր յագնութեան սաստկութենէն :

Լուիզ չէր կրնար տեսնել այն անմեղ մանկիկին դէմքը, որ շալի մը փաթթուած խորունկ քուն մը կը քաշէր պառաւ կնոջ գրկին մ. չ այնպիսի դիրքով մը որ բարձրովին կը պահէր անոր երեսը :

Քիչ մը ատեն ոչ հիւրը կրցաւ խօսիլ և ոչ տանս տէրը :

Միայն թէ երբեմն երբեմն իրարու երես կը նայէին ցաւագին աչօք, որոնց մէջ կը փայլէին խոշոր արտասուաց հատիկներ :

Այս լուսութիւնը դարձեալ այն անմեղ մանկիկը պիտի խցէր, որ բարերադարձաբար՝ տակաւին՝ անցած դարձած բաներուն վրայ գաղափար մը ունենալու տարիքին չէր հասած :

Չի լացաւ նա :

Այլ իր գեղեցիկ ու սեւաւ աչերը բանալով, անգամ մ'իւր գտնուած տեղը դիտեց իրբեւ թէ կարող եղած ըլլար բան մ'եւս հատկաւ և կամ թէ հետաքրքրութիւն ըսուած բնական հիւանդութեան վրայ գաղափար մը ունենալու :

Յետոյ Լուիզի երեսը նայիլ սկսաւ . . . և կը ժպտէր անոր հրեշտակի մը անմեղութեամբ :

Լուիզ ալ անոր նայեցաւ, փոխադարձ ժպտիւ մը ցուցուց ինքն ալ՝ որ դմնէ իր անմեղութեամբը անոր պէս տղայ մը կրնար համարուիլ, և արտասուքը բռնելով անոր վրայ ինկաւ և սկսաւ մանկիկին երեսները համբուրել, և երկու անգամ իրարու վրայ, ա.յս երկու անգամ, «Ո՛հ, ճիշդ իր հայրը կը նմանի», աղաղակեց :

Պառաւ կինը թողուց որ Լուիզ իր գրկէն յափշտակէ իսկ այն գեղեցիկ մանկիկը, և ինքը սկսաւ հեծկլտանօք արտասուել :

Տամիէնի աղջիկը այսպիսի քաջալերութեան մը կը կարօտէր, որպէս զի ինքն եւս ազատօրէն կարենայ արտասուք թափել:

Եւ ահա այս կերպիւ խորհրդաւոր հայեացքներու յաջորդեցին փոխադարձ հեծկըլտանաց ձայները:

Իսկ մանկիկը իր ժպիտը դադրեցնելու ըստիպուած ըլլալով, ուժգին կերպիւ փարեցաւ Լուիզի մերկ և փղոսկրի մը պէս սպիտակ պարանոցին, և սպառնալիք իսկ ցուցնել կուզէր որ չի պիտի ներէր իր տարիքը ունեցող տղայոց լալու բնական իրաւունքին՝ այս կերպիւ իր ձեռքէն յափշտակուելուն:

Լուիզ՝ կարծես թէ զգաց իր գրկացը մէջ գտնուած այն սիրուն արարածին լռին բողբոջը, և իր աչերը՝ մանկիկին շալին սրբելէ ետեւ ըսաւ պառաւ կնոջ.

— Ուրեմն, տիկին, դուք ալ կը ճանչէիք և սիրէիք բարի Պէրթիէն:

— Ա՛հ, մարդոց պատուականագոյնն էր անիկա, աղջիկս, և չէի կարծեր որ իրեն վնասելու չափ բարբարոսութիւն գտնուած ըլլայ երկրիս վրայ, պատասխանեց պառաւ կինը իր հեծկըլտուքին սաստկութենէն հազիւ իմանալի բառերով:

— Եւ վնասեցին իրեն այնպէս չէ՞... սպաննեցին զինքը... ո՛հ, Աստուած իմ, նա-

խազգացումն չէր խաբեր զիս, յարեց Լուիզ խիստ ցաւագին կերպով, և ինքն ալ ինկաւ թուր մը վրայ, մինչդեռ մինչեւ այն ատեն ոտքի վրայ կեցած էր պառաւ կնոջ դիմացը:

Յիմար Յիսնապետին աղջիկը իր երեսը ծածկեց Պէրթիէի զաւկին շալին մէջ... և այս անգամ ուզածին պէս կրնար լալ խեղճ մանկան ազնիւ հօրը մահուանը վրայ առանց օտար աչաց տեսութեան:

— Բայց հանդարտէ աղջիկս, մի՛ լար այդչափ...:

— Բայց դուն ալ ինձ պէս կուլաս մայրիկս, աղաղակեց Լուիզ մէկէն ի մէկ իր գլուխը վեր առնելով և իր թաց աչերը պառաւուհիին երեսը յառելով:

— Ո՛հ, այս, ես ալ կուլամ, ճշմարիտ է, ուրեմն միատեղ լանք իր վրայ, աղջիկս քանի որ...:

— Է՛հ, քանի որ ի՞նչ, սիրելի մայրիկս, խօսքդ մի ընդմիջեր:

— Ա՛հ... քանի որ ըսել կուզեմ... բայց տարածայնութիւն մ'է միայն... տակաւին ստուգուած բան մը չիկայ:

— Ո՛հ, գիտեմ... գիտեմ... ինձմէ բան մի պահեր... գիտեմ որ խեղճ Պէրթիէ սպաննուած է... համարձակօրէն խօսէ ինձ հետ

մայրիկ . . . մի վախճանար՝ որ խելքս պիտի թըռ-  
ցունեմ . . . գուցէ այնպէս եղած ատեն աւե-  
լի լաւ պիտի ըլլար . . . բայց քանի որ երէկ  
գիշերէն ի վեր չի կրցայ խենդենալ, ապա-  
հով եղիբ որ ասկից վերջն ալ խենդենալիք  
չունիմ . . . և սակայն Աստուած իմ, խենդե-  
նալու իրաւունք մ'ալ չունիմ, թէև հօր մը  
պէս կը սիրէի Պէրթիէն, կը սիրէի զանի իբ-  
րեւ իմ մեծ եղբայրս, թէպէտեւ անիկա իմ  
կրկին տարիքէս աւելին ալ ունէր. բայց վեր-  
ջապէս կը սիրէի զինքը . . . ո՛հ, Աստուած  
իմ, և հիմա կը հասկնամ թէ որչափ կը սի-  
րեմ եղեր զանի :

— Աղջիկս, Պէրթիէ եւս նուազ սիրով չէր  
սիրեր զքեզ . . . իբրեւ իր աղջիկը . . . իբրեւ  
պարկեշտ և սիրելի զաւակ մը . . . և կը տես-  
նես որ իր զաւակը՝ քեզմէ ուրիշ մէկու մը չի  
կրցաւ վստահիլ :

— Ա՛հ, շատ իրաւունք ունէր ինձ վստահե-  
լու, մայրիկս, որք մը՝ ուրիշ որբի մը պաշտ-  
պանութեանը յանձնած է, որովհետեւ պատ-  
ճառներ ունէր հաւատալու որ ճշմարիտ մօր  
մը պէս պիտի խնամէի իր զաւակը . . . բայց  
եթէ ես մայր մը պիտի ըլլամ այս անմեղ  
որբին, դուն ալ մեծ մայր մը պիտի ըլլաս  
իրեն, տիկին, և երբեք չի պիտի բաժնուիս  
մեր քովէն ինչպէս որ էր Պէրթիէի վերջին

կամքը, իսկ մանկիկին երկրորդ հայրը որո-  
շելու պէտք մը չունիմ. արդէն կայ անիկայ :

— Ո՞վ է այդ երկրորդ հայրը :

— Գերեզմանատան պահնորդի փոխանորդ-  
Ծերունի Հայրը, զոր կը յուսամ թէ տեսնե-  
լու առիթը պիտի ունենաս քիչ ատենէն,  
ինչպէս որ ես ալ անհամբեր կ'սպասեմ իրեն  
գալտեան, որպէս զի Պէրթիէի վերջին վայր-  
կեաններուն նկարագրութիւնն իր բերնէն ի-  
մանալու տխուր մխիթարութիւնն ունենամ  
գոնէ :

— Ա՛հ, ա՛հ, հասկցայ թէ ո՞վ պիտի ըլլայ  
Պէրթիէի խեղճ որբին ապագայ երկրորդ  
հայրը. գիտեմ գերեզմանատան պահնորդի  
պարկեշտ օգնականին ով ըլլալը. Պէրթիէ  
շատ անգամ խօսած է ինձ անոր վրայօք . . .  
բայց կըսես թէ Ծերունի Հայրը՝ Պէրթիէի  
վերջին վայրկեաններուն իր քովը գտնուած  
է, մինչդեռ ես այնպէս իմացայ որ գերեզ-  
մանատան պաշտօնեայք հարցաքննուած և  
անոնք ալ բանէ մը տեղեկութիւն ունեցած  
չըլլալն յայտարարած են ոստիկանութեան :

Բարի պառաւուհիին այս անխորհուրդ  
յայտնութեան վրայ այլ եւս լուիզի մտքին  
մէջ ամենեւին կասկած մը չէր մնար Պէրթիէի  
իրօք սպաննուած ըլլալուն վրայօք :

Սակայն տարաբաղդ աղջիկը նորէն բան մը

չըսաւ այս մասին ինքզինքը կատարելապէս  
 ձեռք տուող անխոհեմ պառաւուհիին . . . այլ  
 կրկին կրկին համբուրեց խեղճ ու փոքրիկ  
 Պէրթիէն, յետոյ ծանր ծանր ոտքի ելաւ  
 միշտ իր գրկացը մէջ ունենալով այն անմեղ  
 մանկիկը որ այլ եւս հայր չունէր, և պա  
 ռաւուհի կինը իր ետեւէն հրաւիրելով, ե  
 րեքը մէկանց վերի յարկը ելան :

Փոքրիկ Պէրթիէին հանգիստ անկողին մը  
 պատրաստուեցաւ հոն, և Լուիզ մինչեւ որ  
 հազար գգուանօք չի քնացուց մանկիկը, ա  
 մենեւին իր բերանն ալ չի բացաւ նոր խօսք  
 մը կամ նոր հարցում մը ուղղելու անոր «մեծ  
 մօրը» :

Երբ այս պարկեշտ դորժը վերջացաւ, Լու  
 իզ աթոռ մը առնելով, պառաւ հիւրին քո  
 վը նստաւ, և երկու կանայք ժամերով խօ  
 սեցան Պէրթիէի անցեալ կենացը, անոր պար  
 կեշտութեանը, ուղղութեանը, և եղբրական  
 վախճանին վրայ :

Արդեօք այս խօսակցութեան միջոցին ին  
 չե՛ր կանցնէին դեռահաս աղջկան սրտին մէջ :

Վերջապէս իրիկուան մութը կոխելու մօ  
 տեցած ատեն փողոցի դուռը բաղխեցաւ :

Լուիզ անմիջապէս տեղէն ցատկելով պա  
 տուհանը վազեց :

«Ետոյ՝ «Բարի Մերունին է» ազաղակելով

սանդուղէն վար կը նետուէր, երթալ փողո  
 ցին դուռը բանալու համար :

Այս առաջին անգամն էր, որ Տամիէն իր  
 աղջկանը տունը տօք կը կոխէր փողոցի դռ  
 նէն ներս մտնելով :

— Ա՛հ, ծերունի բարեկամս, ո՞ւր մնա  
 ցիք . . . ի՞նչ անհամբերութեամբ ձեզ կ'սպա  
 սէի, կ'աղաղակէր Լուիզ՝ Մերունի Հօր ետե  
 ւէն սանդուղն ի վեր ածապարած ատեն :

— Բա՛ն, ի՞նչ պիտի ըսէի . . . այո՛, բանին  
 համար . . . բանը այսինքն, կը պատասխա  
 նէր Տամիէն՝ շփոթութենէ մի քանի անգամ  
 ներ սանդուղէն վար զլտորելու վտանգին  
 մէջ :

Մինչեւ որ երկուքն ալ վեր ելնելով մտան  
 այն սենեակը, ուր մանկիկը կը ննջէր և պա  
 ռաւ կինը աթոռի մը վրայ մրափելու սկսեր  
 էր, այս կատակերգութիւնը մի քանի ան  
 դամներ շարունակուեցան :

Երբ Լուիզ և Տամիէն դէմ առ դէմ նըս  
 տան, մանկամարդ աղջկան աչերը այն աս  
 տիճանի լեցած էին որ արտասոււաց հեղեղին  
 ծայր տալուն համար լոկ կայծակէ մը ուրիշ  
 բանի կարօտութիւն մնացած չէր :

Իսկ ծերունին Տամիէն երգի պէս անորոշ  
 բան մը կը մուտար, ինչպէս որ կընեն այն  
 զիւրազգած ծերունիք երբ շփոթեցուցիչ

հարցմանց պատասխանելու դժուրակ հարկին մէջ կը գտնուին :

— Բայց վերջապէս պիտի ըսէք ինձ թէ Պէրթիէս ի՞նչպէս մեռաւ, ըսաւ Լուիզ իր արտասուք սպառնացող աչերը անդուլթ կերպիւ Տամիէնի վարանոտ աչացը յառելով :

Խեղճ ծերունին նստած տեղէն վեր ցառկեց միայն :

— Բայց ըսէք կըսեմ ձեզ, Պէրթիէս ի՞նչպէս մեռաւ. պէտք չէ բան մը ծածկել ինձմէ, ես ամեն բան գիտեմ :

Այս անգամ ծերունի գերեզմանապահը վեր չի ցատկեց, այլ յանդիմանական նայուածքով մը պառաւ կնոջ երեսը նայեցաւ որ վախէն անդիի կողմը դարձուց իր երեսը :

— Այս մտնկի՛կը... այս մտնկի՛կը... ըսաւ վերջապէս Տամիէն՝ խօսքին ընթացքը փոխելու և Լուիզի չարաչար հարցմանցը պատասխանել կարենալու համար ժամանակ վաստկելու յոյսով... խեղճ Պէրթիէի զաւակն է, այնպէս չէ՞, և այս բարի տիկինն ալ...

— Բայց խօսքը մի՛ փոխէք, հայրիկ, ո՛հ իմ հարցմանս պատասխանը տուէ՛ք միայն... դուցէ այն պիտի ըլլայ իմ վերջին միեթաբուլթիւնս :

Արտասուաց հեղեղին ծայրը փրթեր էր :

Տամիէն այս անողորմ հարուածին դիմադրելու կարող մարդ չէր :

Ինքն ալ՝ աշխատութենէ կարծրացած ձեռներով իր աչերը շիւել սկսաւ :

Բայց յայտնի է որ ծերունուոյն այս անգամու լացը Պէրթիէի մահուանը համար չէր, այլ իր աղջկանը լացին համակերպելու համար միայն, որուն առաջըք առնուլը իր ձեռքը չէր :

— Ա՛հ, գիտէի որ այս փորձը շատ ծանր պիտի դար, մրմուսց Տամիէն ինքնիրեն :

— Չի կրցայ հասկնալ թէ ի՞նչ ըսիք, աղնիւ բարեկամս :

— Չէ, միայն թէ ըսել կուզէի որ... վերջապէս ըսել կուզէի թէ... այսինքն բան մը ըսել կուզէի... զոր մոռցայ... միտքէս ելաւ ըսել կուզեմ, աղջիկս... կը յուսամ թէ առողջութիւննիդ լաւ վիճակի մէջ է :

— Խնդիրը իմ առողջութեանս վրայ չէ, ծերունի բարեկամս, այս խեղճ որբին հայրը մեռաւ. կուզեմ մանրամասնօրէն գիտնալ թէ ի՞նչպէս մեռաւ :

— Է՛հ, ճիշդ այնպէս ինչպէս որ կը մեռնին հոգիներն աւանդող անձինք :

— Դուք անոր մեռած ատեն իր քո՞ղն էիք :

— Անշուշտ, միթէ կրնայի՞ թողուլ որ առանձին մեռնի :

— Բայց ուտիկանութեան պաշտօնեայք ձեզի հարցաքննած ատեննին ըսեր էք որ ամենեւին տեղեկութիւն չունիք Պէրթիէի սպանմանէն :

Տամիէն այս անգամ աւելի բարձր կերպիւ վեր ցատկեց իր աթուռն վրայէն :

— Ճիշդ է, ո՞վ կը պնդէ որ խեղճ երիտասարդին սպանումէն տեղեկութիւն ունիմ :

— Բայց ճիշդ հիմա գուք կըսէիք որ Պէրթիէի վերջին վայրկեաններուն իր քովը գլտ նուած էիք :

— Այդ խօսքը տիկինը ըսած չըլլայ, գուցէ այն գտնուած է խեղճ երիտասարդին քով անոր մեռած ատենը, ըսաւ Տամիէն՝ պառաւ կնկան կողմը դառնալով, և այս անել ծուղակէն ազատելու ճար մը գտնելու հնարքը մուրալու ձեւով աղերսարկու հայեացք մը արձակելով անոր :

Պառաւուհին ամենեւին պատասխան չի տուաւ, այլ միայն երեսը խաչակնքեց :

Տամիէն հասկցաւ որ դատապարտուած էր :

Բարբաղդաբար Լուիզ գթալով խեղճ ծերունւոյն վրայ, և անոր խուսափողական ձախող ձեւերուն պատճառը հասկնալով, այն կէտին վրայ թողուց անոր օձիքը :

Պահ մը լռութիւն տիրեց :

Այս լռութեան միջոցին Տամիէն երկար շունչ մը կ'առնուր ինքզինք ազատած համարելով :

Քիչ մը յիտոյ հարցաքննութիւնը նորէն սկսաւ, որ խեղճ ծերունւոյն խնդութիւնը իր փորին մէջ կը թողուր :

— Միթէ բան մը չէ՞ ըսեր Պէրթիէ իր բարի հոգին աւանդած ատեն :

— Որո՞ւ համար բան մը ըսէր, աղջիկս :

— Այսինքն իր զաւկին վրայօք . . . իմ վրայօքս :

— Հա՛, աղէկ միտքս ինկաւ . . . բայց դուք չէիք ճանչեր Տըլանժ կոմսը :

— Ոչ, այնպիսի մէկը չեմ ճանչեր. բայց խնդրոյն հետ ի՞նչ առնչութիւն ունի Տըլանժ կոմսը :

— Ո՛հ, չէք գիտեր թէ ո՞րչափ բարի անձ մ'էր այն . . . ինձ այցելութեան եկաւ գիտէ՞ք . . . կոմս մը . . . մեծանուն կոմս մը գայ զիս գտնէ թիւս . . . չէ, չէ, ի՞նչ պիտի ըսէի. այսինքն դայ զիս գտնէ, զիս, այն տեղը, ուր . . . բայց ի՞նչ պէտք է տեղը . . . վերջապէս զիս գալ գտնելու խոնարհութիւնն ունեցեր էր. ո՛հ, ի՞նչ սքանչելի մարդ մը, ի՞նչ աննման մարդ մը . . .

— Բայց վերջապէս . . .

— Հա՛, վերջապէս այդ բարի և սքանչելի

մարդը՝ Պէրթիէի մօտ ազգականն է եղեր։  
 — Պէրթիէի մօտ ազգականը...  
 — Հապա՛, անոր մօտ ազգականը և Պէրթիէյէ զատ ժառանգորդ մ'ալ չունի եղեր։  
 — Ուրեմն հիմա իր ժառանգորդը պիտի ըլլայ այս խեղճ որբը։  
 — Ըլլալուն հարկ չի կայ, արդէն եղած է։  
 — Ուրեմն մեռա՞ւ այդ Տըլանժի կոմսը։  
 — Այո, Պէրթիէի մահը իմացած ատեն կաթուածահար ըլլալով մեռաւ։ Բարեբաղդաբար կաթուածը բարի կաթուած մ'ըլլալուն ներողամտութեամբ վարուած և ժամանակ թողած էր սքանչելի կոմսին որ իր կրտակը շինելու ժամանակ ունենայ։  
 — Եւ ի նպաստ փոքրիկ և որբ Պէրթիէին շինեց անշուշտ իր կտակը։  
 — Կէսը քեզի և կէսը որբ մանկիկին համար։  
 — Կէսը, իր հարստութեան կէսը ի՞նչ կրտակեց։  
 — Այո, իմ Լուիզա, մանր մունր պարզեւներէ ետեւ զուտ 240,000 ֆրանք հարստութիւնը կը մնար. թէպէտեւ կոմսի մը համար մեծ հարստութիւն մը չէ այդ, բայց վերջապէս հարստութիւն է, որուն կէսը քեզի և միւս կէսը փոքրիկ Պէրթիէին կը մնայ։  
 — Բայց ես այդ Տըլանժի կոմսը չեմ ճանչեր։

— Սակայն անիկայ կը ճանչէ եղեր քեզ։  
 — Ի՞նչպէս։  
 — Պէրթիէ ճանչցուցեր է քեզ կոմսին... անձդ չէ, միայն անունդ։  
 — Ո՛հ, բարի՛ Պէրթիէս... բայց ես բնաւ չեմ կրնար ընդունիլ այդ ժառանգութիւնը և բոլորը մէկանց սրբ մանկիկին կը թողում։  
 — Սակայն կտակը անդառնալի է, աղջիկս։  
 — Լա՛ւ, քանի որ այնպէս է, ես իմ բաժնիս ինկած 120,000 ֆրանքը փոքրիկ Պէրթիէին կը թողում, ո՞վ կրնայ արգելիլ զիս այդ բանը ընելէ։  
 — Հանգուցեալ Պէրթիէն կարգիլէ, զաւակըս, որ ինձ յանձնարարեց քեզի աղաչելու որ կտակը նոյնութեամբ ընդունիս. միթէ երկու մեռեալի նա մանաւանդ Պէրթիէի վերջին կամքերնին ոտքի տակ առնելուդ կըրնայ ներել քու խիղճդ։  
 — Բայց Պէրթիէ ե՞րբ ըսաւ ձեզ թէ...  
 — Ե՞րբ պիտի ըսէ, կտակագրին շինուելէն և կոմսին մեռնելէն յետոյ։  
 — Ո՞վ Ատուած իմ, ահա յիմարանալու կէտը. դուք կըսէք որ Տըլանժի կոմսը Պէրթիէի մահուանը վրայ զգացած սրտի ցաւէն կաթուածահար ըլլալով մեռեր է. և քանի որ կոմսը Պէրթիէի մահուանէ ետեւ շիներ

է իր կտակագիրը, ուրեմն ի՞նչպէս կրնայ ըլլալ որ Պէրթիէ այդ կտակէն և անոր մանրամասնութենէն տեղեկութիւն ունենայ իր մահուանէ ետեւ :

Տամիէն յուսահատօրէն իր գլուխը քերել սկսաւ :

Այս անգամ այն աստիճան յայտնի սխալ մը գործեր էր որ հարկւր գերեզմանապահներ ալ իրեն օգնութեան հասնէին չի պիտի կրնային հանել ու ազատել զինքը այն ծուղակէն, որուն մէջ մտած էր իւր իսկ կամքովը և աններելի անխոհեմութեամբ մը :

Խեղճը քիչ մը ատեն չարաչար յագնեցուց իր միտքը այս ձախող գիրքէն ազատելու ճար մը գտնելու համար :

— Ըսածդ շատ ստոյգ է, աղջիկս, բայց գործը ի՞նչպէս եղաւ ես ալ չեմ կրնար կոր հասկնալ. այո՛, ճիշդ է որ Տըլանժ կոմսին կը տակադիրը Պէրթիէի մահուանէ ետքը շինուած է. այո, այնպէս է... և քանի որ այնպէս է, ի՞նչպէս կարելի է որ Պէրթիէ իր գերեզմանին մէջ տեղեկութիւն առնու այդ կտակագրէն և ըստ այնմ յանձնարարութիւններ ալ ընէ ինձ. վերջապէս գաղտնիք մը կայ այս բանին մէջ, և դուն ինձմէ աւելի խելացի ես, Լուիզս, դո՞ւն ինչ կը մտածես այս բանին վրայ որ կատարեալ հանելուկ մը

ըլլալ սկսած է ինձ համար... բայց կեցիր, ինչո՞ւ համար կը շուարինք այս բանին վերայ, միթէ կարելի չէ՞ որ Պէրթիէ իր մահուանէ առաջ կոմսին հետ խօսած և ըստ այնրմ կարգադրուած ըլլայ այն չարածճի կը տակադիրը :

Տամիէն՝ այս փախուստի գիւտը գտնելուն՝ իր ճարտարամտութեանը վրայ այնչափ ուրախացաւ որ, պարագային անպատշաճութիւնը հաշուի առնուլն ալ մտածելու կարողութիւն չունենալով, իր կարծր կռուվը սեղանին զարկաւ զուարթօրէն :

Բայց իր ուրախութիւնն ու զուարթութիւնը շատ կարճ պիտի տեւէր :

— Այդպիսի պարագայի մը մէջ կոմսը ուղղակի Պէրթիէի պիտի կտակէր ինչ որ կը կը տակէ հիմա անոր որք մնացած տղուն, և նոյն իսկ դուք կըսէք որ Տըլանժ կոմսի թէ կտակագիրը և թէ մահը Պէրթիէիս սպանման հետեւութիւնն էին :

Տամիէն այս խօսքերը լսելուն՝ ծեծ կերած կատուի մը պէս իր թաթը վար առաւ սեղանին վրայէն, ուր տեղաւորած էր հազիւ վայրկեան մը առաջ այնպիսի յաղթական եղանակաւ մը :

Խեղճ ծերունին այս անգամ բոլորովին յաղթահարեալ՝ իր հինաւուրց գլուխը վար



կախեց նորէն այն պարկեշտ սրտին վրայ որ անսովոր էր ստուծեան և հետեւաբար բողոքովին համբակ .

— Զգուշացէք, պարոն, ձեր վարանոտ, երկդիմի և հակասական խօսքերը մինչեւ իսկ կեղծ յոյս մը տալ կսկսին ինձ թէ՛ Պէրթիէ սպաննուած չէ . գիտէք որ զիս այսպիսի կեղծ յոյսի մը մղելը շատ անդուծ բան է, մի խաղաք ինձ հետ, ծերունի՛ բարեկամս, նախ և առաջ կրկնեցէք ամենահաստատ եղանակաւ թէ Պէրթիէ մեռած է .

— Այո, օրիորդ, ամենահաստատ կերպիւ կըսեմ որ Պէրթիէ ամենահաստատ կերպիւ մեռած է : Բայց կարծեմ թէ ամենահաստատ բառը շատ զօրաւոր է . եկուք վերցնենք գերադրականը և բաղդատականի իջնենք . կը հասկընա՞ք հիմա, Լուիզ . ըսել է թէ Պէրթիէ աւելի հաստատուն կերպիւ մեռած է .

— Ո՛վ Աստուած իմ, բայց դուք պիտի խենդեցնէք զիս ձեր քերականութեան դասերովը, ազնի՛ւ բարեկամս :

— Է՛հ, եթէ կուզէք գերադրականին պէս բաղդատականն ալ վերցնենք և բողոքովին պարզ վիճակի մը իջնենք . ուրեմն, օրիորդ, պարոն Պէրթիէ պարզապէս մեռած է և ոչ թէ չքեղապէս .

Ինչո՞՞ ծերունին հազար անգամ պիտի

անիծէր այն որոշումը որ զինքը Լուիզի անջեւ մղած էր նոյն իրիկունը իբր դեսպան .

Բայց մտածեց որ հաճոյ թէ անհաճոյ իր պաշտօնը անխուսափելի էր .

Թէպէտեւ միտքէն չէր անցուցած որ անոր մէջ այս աստիճան անճարակ և ձախող պիտի գտնուէր .

Քերադրականի, բաղդատականի, և դրականի խաղն ալ ուրիշ տեսակ անճարակութենէ և ձախողութենէ յառաջ կուգար .

Տամիէն՝ իր ծերուկ խելքովը կարծեր և յուսացեր էր իսկ որ ասով գործին մէջ քիչ մը կատակաբանութիւն խառնելու և Լուիզի յուզումը չափաւորելու կարող պիտի ըլլար .

Մինչդեռ հիմա կը տեսնէր որ գործը երթալով աւելի սպառնալի և խառնուկ դիրք մը կառնուր .

Եւ նոյն իսկ վտանգաւոր դառնալ սկսեր էր անձանօթ պառաւ կնկան մը ներկայութիւնը .

Ուստի քիչ մը ատեն մտատանջութեամբ իր ծերունի ճակատը շփելէ ետեւ, իբրեւ հաստատուն որոշման մը յանդող մէկը, խընդրեց Լուիզէն որ դիմացի սենեակը երթան և քիչ մ'ալ առանձնակի խօսին հոն .

Լուիզ՝ ընդունեց ծերունւոյն այս առաջարկութիւնը .

Երկուքը մէկանց որոշեալ խորհրդարանը  
գացին ուր նիստը դռնփակ պիտի ըլլար այս  
անգամ :

— Պարոն, հիմա ուրիշ մէկը չիկայ որ մեր  
խօսակցութիւնը մտիկ ընէ, կը խնդրեմ այս  
անգամ անկեղծօրէն խօսեցէք : այդ կտակի  
խնդիրը և քու՝ ակնկալուածէն պակաս  
յուզումդ քիչ քիչ իրաւացի յոյս մը տալ  
կ'սկսին ինձ որ Պէրթիէս մեռած չէ :

Տամիէն՝ քիչ մնաց որ նորէն վեր պիտի  
ցատկէր նստած տեղէն : բայց յանկարծական  
որոշում մը զինքը սթափեցուց :

Իր գրպանէն լրագիր մը հանեց, և Պէր-  
թիէի սպանման և յուզարկաւորութեան նը-  
կարագրութիւնն եղող պարբերութիւնը ա-  
նոր աչաց ներկայացուց :

Լուիզի գեղանի և տծգոյն դիմաց վրայ  
ակնյայտ կը տեսնուէր այն ցաւալի տպաւո-  
րութիւնը որ ընթերցման շարունակութիւնը  
յառաջ կը բերէր իր վրայ :

Քիչ մը յետոյ իր հեծկլտուքը արգելք ըլ-  
լալ սկսած էին ընթերցման շարունակու-  
թեանը :

Իսկ երբ սպանման նկարագրութեան այն  
տեղին հասաւ որ կը ծանուցանէր թէ մեռ-  
եալին գլուխն ալ կտրուելով բաժնուած էր  
իր մարմինէն, լրագիրը ինկաւ ձեռքէն, և

խեղճ աղջիկը «Ո՛հ, Պէրթիէս, իր գեղեցիկ  
գլխուն անգամ չեն խնայած, բայց ես այն-  
չափ կը սիրէի զինքը... իբր հայր մը... իբր  
մեծ եղբայր մը» աղաղակելով դառնապէս  
լալ սկսաւ :

Այս անգամ Տամիէն յիշաւ ի ցատկեց իր  
տեղէն և իր աղջիկը գրկացը մէջ առնելու  
անյաջող փորձ մ'ալ ըրաւ :

— Բայց հանդարտէ, զաւակս... Աստուծոյ  
կամքը այսպէս է եղեր, ի՞նչ կրնանք ընել :

— Սակայն պիտի ըսէք ինձ իր սպանչին ա-  
նունը :

— Իր սպանչին անունը, բայց ի՞նչ օգուտ  
ունի քեզի անոր անունն իմանալը :

— Ուրեմն գիտէք և կը ճանչէք չարագոր-  
ծը և զինքը երեւան հանել չէք ուզեր :

Տամիէն զգաց որ նորէն անդարմանելի սը-  
խալ մ'ալ գործած էր :

Քիչ քիչ իր տկար համբերութիւնը բոլո-  
րովին սպառել կ'սկսէր :

— Ըսէք իր անունը, պարոն, ըսէք, կ'չ պա-  
հանջեմ ձեռնէ :

— Բայց ատիկայ գաղտնիք մ'է, սիրելի  
Լուիզս :

— Գաղտնիք մը :

— Այո՛, գաղտնիք մ'է :

— Որո՞ւ գաղտնիքն է :

— Նոյն իսկ հանգուցեալ Պէրթիէի դաղա-  
նիբը :

— Ուրեմն դուք էք անոր սպաննիչը, պա-  
րոն, դուք որ չի յաջողեցաք ձեր ատրճա-  
նակովը սպաննել զանի իմ աչացս առջեւ և  
ետեւէն դացիք մութին մէջ անձայն կերպիւ  
և առանց ականատեօի մը ներկայութեան  
ձեր դանակովը տեսնել այն միւսնոյն գոր-  
ծը... որովհետեւ կը կարծէիք որ անոր վը-  
րայ ունեցած սէրս մեղապարտ սէր մ'էր,  
որուն միջամտելու և ոչ մէկ կերպիւ իրա-  
ւունք մը չունէիք եթէ ձեր կասկածը իրա-  
ւացի իսկ ըլլար :

Երբունի Տամիէն, որ այս տեսակ պարա-  
գաներու մէջ ստուգիւ Յիւնար Յիսնապետ մը  
կըլլար, կայծակէ զարնուածի պէս եղած  
տեղը քար կտրած մնաց :

Լուիզ՝ այն հրեշտականման աղջիկը բոլորո-  
վին կերպարանափոխ եղած, իր սպառնալից  
աչերը տնկեր էր Տամիէնի աչացը մէջ :

— Այս երկրորդ անգամն է որ այսպիսի  
սոսկայի զրպարտութիւն մը կըլլայ իմ վրաս,  
օրիորդ :

— Ուրեմն ուրիշ մէկն ալ ինձ համակարծիք  
գտնուած է այս մասին :

— Այո՛, օրիորդ :

— Եւ ո՞վ է այն :

— Տըլանժ կոմսը, որ սակայն չուտով զըղ-  
ջաց իր ըսածին վրայ և ձեռքս սեղմելով նե-  
րումն ինդրեց ինձմէ :

— Լա՛ւ, արդարացուցէք ինքզինքնիդ, և  
ես ալ միւսնոյն բանը պիտի ընեմ ձեզ : Նախ  
ըսէք թէ... բայց Աստուած իմ, ի՞նչպէս կա-  
րելի է որ ըլլայ, քանի որ լրագիրք կը հաս-  
տատեն սպանութիւնը և անոր նկարագրու-  
թիւնն իսկ կընեն :

— Բայց լրագիրք կընան սխալ տեղեկու-  
թիւն մ'ալ առած ըլլալ :

— Ա՛հ, ա՛հ, յոյսերս նորէն կարծարծէք,  
աղջիւ բարեկամս, աղաղակեց Լուիզ, ինքն  
ալ իր տեղէն յանկարծական ոստում մը ընե-  
լով և խանդաղատանօք վարելով այն միւսնոյն  
ծերունունոյն վզին, որուն բուն իր հայրը ըլ-  
լալը չէր գիտեր, և զոր վայրկեան մ'առաջ  
իր դէմը ելնող առաջին ոստիկանին ձերբա-  
կալել պիտի տար իր սրտին կսկիծէն, իբր  
սպանութեան բուն հեղինակը ցուցնելով  
զայն :

Լուիզ՝ իր երկու չքնաղ թեւերովը այնպի-  
սի սաստիկ կերպիւ սեղմած էր Տամիէնի հաստ  
վիզը, որ եթէ ծերունին չի կրցաւ իր աղջը-  
կանը թեւերուն մէջ խեղդուելու հաճոյքն  
ունենալ, և բերանը բանալով բան մը ըսելու  
ազատութիւնն ալ չէր կրնար ունենալ եթէ

այս հարցման յաջողապէս պատասխանելու կարող իսկ ըլլան առանց կրկին անգամ նոր և մեծ սխալ մը գործելու :

Յիմա Յիսնապետին աղջիկը տեսնելով որ ծերունին չի պատասխաներ այլ միայն իր թուքերը կուլ կուտայ, մեծ դժուարութեամբ իր թեւերը քակեց անոր պարանոցէն, և անգութ կերպիւ նայելով անոր անորոշ աչացը մէջ, ստիպողական կերպիւ հարցուց .

— Ըսէք անկեղծ կերպիւ ծերունի՛ բարեկամս, ըսէք որ Պէրթիէս ո՞ղջ է թէ՛ մեռած :

Մեռած, այո՛, մեռած է աղջիկս... բայց նորէն լալու կ'սկսէք, կեցե՛ք կեցե՛ք... չէ բոլորովին մեռած չէ... այսինքն ըսել կուզեմ թէ մեռած է... բայց ոչ թէ բոլորովին... բայց վերջապէս մեռած է, մեռած է... ո՛հ, ի՞նչ կուզէք ինձմէ, աղջիկս... վերջապէս մեռած է կամ ոչ :

— Ո՛հ, զիս ալ պիտի յիմարեցնէք, պարոն. ըսէք հաստատապէս որ մեռած է թէ չէ... եթէ հոգեւարք է ի՞նչ բան ունիք հոս, և ես ինչո՞ւ իր քովը չի գտնուիմ... իսկ եթէ յիշաւի սպաննուած է, ինչպէս որ լրագիրը կըսէ, ուրեմն զիս ի՞ր գերեզմանին վրայ տարէք որ լամ հոն և ներեմ քեզի :

— Ո՛հ, ըսել է թէ տակաւին ներած չէք ինձ :

— Ո՛չ, մինչեւ որ թեւէս բռնելով իր գերեզմանին վրայ չի տանիք զիս, չի պիտի ներեմ :

— Բայց ո՞վ Աստուած իմ, կուզէ որ ուրիշի մը և նոյն իսկ անոր բուն մարդասպանին գերեզմանին վրայ լայ :

— Ուրի՛շի մը... նոյն իսկ իր բուն մարդասպանին գերեզմանի՛ն վրայ :

Տամիէն հասկցաւ որ յիշաւի յիմար մ'էր ինքը, պարապ տեղը իրեն Յիմար Յիսնապետ չէին ըսեր, այս անգամու գործած սխալը՝ միւս ամենքը գերազանցեց :

Այլ յիմարութեան կարողութիւնը բոլորովին կորսնցուցած էր և ինքնիրեն կ'ըսէր .

« Գնա այսպէս այսպէս խօսէ ըսելը դիւրին է, բայց թող պարոն Պէրթիէ ինքը գայ իմ տեղս ու գործին իսկութիւնը ծածկելու համար ինձմէ աւելի վարպետօրէն սուտեր հընարէ նայիմ. ահա ամեն կողմանէ բռնուած եմ հիմա, և այս անգութ աղջկան ձեռքէն զիս ազատող մը չիկայ : »

Տամիէն ինքնիրեն այս խորհրդածութիւնները ընելէ ետեւ, ընելիք բանին վերջին ու՛ր թշուժն ալ տուաւ :

Նստաւ իր տեղը, և այս անգամ հրամայը պահան կերպիւ ստիպեց իր աղջիկն եւս որ ները մօտը նստի :

— Ինձ մտիկ ըրէ , աղջիկս , այլ եւս գործին իսկական վիճակը քեզմէ ծածկելը անօգուտ բան ըլլալը կ'զգամ . չեմ ուզեր որ ըսես ին- իժ համար թէ այս ի՞նչ յիմար մարդ եղեր . բայց դադունապահութեանդ վրայ վստահ ըլ- լալուս համար երդում մը ըրէ :

— Կերդնում յ'անուն մօրս :

— Յանուն մօրդ . . . լա՛ւ , թող անոր ան- ուան ըլլայ ըրած երդումդ , կ'ընդունիմ զայն . . . Ինձ նայէ , աղջիկս , սիրտդ պատրաս- տէ ուրախալի լրոյ մը . . . քու Պէրթիէդ մե- ռած չէ :

— Ո՛հ : Ատոուած , իմ . . . բան մը կար որ արդէն ոյժ կուտար ինձ այնպէս հաւատա- լու , ազազակեց մանկամարդ աղջիկը :

— Բայց պէտք է որ բոլոր աշխարհի հա- մար մեռած ըլլայ Պէրթիէն , կը հասկնա՞ս թէ ինչ ըսել կուզեմ :

— Հապա Պէրթիէի հագուստով գլուխը կտրուած այն անձը ո՞վ էր որ Պէրթիէիս տեղ թաղեցին :

— Իր սպանիչն էր , փսփսաց Տամիէն անոր ականջին ծռելով :

— Բայց Պէրթիէն ուր է հիմա :

— Է՛հ , մի հարցնե՛ր ատիկա , ազնիւ աղջիկս :

— Բայց անգամ մը իր երեսը տեսնել կու՞ զեմ :

— Անկարելի է , զաւակս :

— Ո՛հ , կը խաբէք զիս ուրեմն :

— Ո՛չ , յանուն Երկնից կ'երդնում որ բոլո- րովին ճշմարիտ է ինչ որ կը խօսիմ :

— Կը հաւատամ խօսքերնուդ , ազնի՛ւ բա- րեկամս , կը հաւատամ . բայց իմ վերջին խօս- քըս ալ մտիք ըրէք . աւանց անմիջապէս զին- քը տեսնելու , և անոր՝ « իմ Լուիզս » ըսելը ականջովս լսելու , անկարելի է որ ապրիմ այսուհետեւ . արդէն մու՛թը կոխած է . կը հետեւիմ քեզ ուր որ տանիս . միայն թէ հե- տեւելիք ճամբանիս ուղղակի կամ անուղղա- կի Պէրթիէիս քով տանի զիս :

Տամիէն զօրաւոր հառաչք մը հանեց իր բերնէն .

— Բայց սիրելի՛ աղջիկս , անկարելի բան է որ զինքը տեսնելու երթաս դուն :

— Ուրեմն աղաչէ որ ինքը դայ զիս տես- նելու , ես փողոցին դուռը բաց կը թողում . դիշերը ոչ ոք կրնայ տեսնել զինքը . դրան մէջ տեղը կամ դուրսը կ'սպասեմ ձեզի , ա- սոր ալ ըսելիք մը ունի՞ք :

Տամիէն կրկին անգամ հառաչք մը արձա- կեց :

Բայց հառաչքը չէր մտներ Լուիզի ական- ջը . պէտք էր անոր ըրած առաջարկութիւն- ներէն մին ընդունել դրական կերպիւ :

Թեղճ նախկին յիսնապետը վերջապէս պարտաւորեցաւ իր աղջկանը պատգամներէն վերջնոյն համակերպելու :

Այլ ի՞նչպէս համոզուելու էր Պերթիէն որ գիշերանց ելլէ Լուիզի բնակարանին դուռը գայ :

Ասոր ճարը մտածելը ծերունի գերեզմանապահին կը պատկանէր և ոչ թէ Լուիզի, որ անգամ մ'ալ Պերթիէի կենդանի դէմքը տեսնելէ ուրիշ իտէալ մը չունէր հիմա, և երբ տեսաւ Տամիէնի իր բաղձանաց համակերպիլը՝ ուրախութենէն ինչ ընելիքը չը գիտնալով իր հայրը եղած ըլլալը չը գիտցած Ծերունի Հօր ճակատին գեղեցիկ համբոյր մը չնորհեց :

Տամիէն, իր աղջկանը շրթունքը իր ծեր ճակատին վրայ զգացած ատեն, ամեն աշխարհային դժուարութիւնք անհետացան, և եթէ պետք ըլլար հարիւր Պերթիէներ եւս գերեզմաններուն խորերէն հանելով պիտի բերէր իր աղջկանը ոտիցը տակ նետէր :

Այս երջանիկ համաձայնութեան վրայ Տամիէն անմիջապէս ճամբայ ելաւ, Լուիզը՝ երջանկութեան գագաթնակէտը հանած :

Մութը բոլորովին կոխեր էր :

Այլ Տամիէնի աչերն ու ոտները տղայ հասակէն ի վեր վարժուած էին գիշերուան մութին հետ կատուի պէս եղբայրաբար վարուելու :

«Անշուշտ Պերթիէ եւս երբ իմանայ թէ Լուիզս ի՞նչ անհամբերութեամբ իրեն կը ապաստէ, ինձմէ առաջ ճամբայ պիտի ելնէ անոր քով դիմելու, կրտէր բարեփրտ ծերունին իւրովի :

Ահա այս երջանիկ մտածութեամբ հասաւ գերեզմանատան մէջ եղող խրճիթը :

Այլ հոն իր ուրախութիւնը փորին մէջ մընաց :

Պերթիէ անյայտ եղած էր, ատանց ամենափոքրիկ հետք մը ձգելու ամալի հիւզին մէջ :



Ե .

### ՊԵՐԹԻԷՆ ՆԱՄԱԿԸ

Լուիզ՝ մէկ ժամէն աւելի սպասեց Պերթիէի գալստեան :

Եւ ո՞վ Աստուած իմ, ի՞նչ երկար և սիրտ մաշեցնող ժամ էր այն :

Վերջապէս տեսնուեցաւ հեռուէն այնչափ անձկանօք սպասուած լապտերիկին լոյսը, զոր Լուիզ շատ լաւ կը ճանչեր :

Ի՞նչ զօրաւոր կերպիւ վեր նետուեցաւ Տամիէնի աղջկան փոքրիկ սիրտը :

Այլ հոգ չէ, ուրախութեան տագնապն է այն, որ երբէք չէ վնասած երիտասարդ սրտի մը:

Պէրթիէն պիտի տեսնէր:

Այն մեռեալ կարծուած Պէրթիէն էր զոր Լուիզ ողջ առողջ պիտի տեսնէր, և անշուշտ... հայրական կամ եղբայրական համբոյր մ'ալ պիտի դրոշմուէր իր անմեղ ճակատին վրայ:

Խեղճ աղջիկը տակաւին չէր գիտեր, և չէր կրնար հասկնալ որ Պէրթիէի վրայ զգացած սէրը, արդէն զաւկի մը կամ քրոջ մը զգացած սէրէն աւելի բարձր գիրք մը բռնելու սկսած էր իր յաղթահարեալ սրտին մէջ:

Ի՛նչ անապարանք և միանգամայն ի՛նչ կանաչի սաստիկ զգուշութիւններ առանց պառաւուհի կինը քունէն արթնցնելու՝ վայրկեան մ'առաջ վար իջնելով փողոցի դուռը անձայն բանալու համար:

Լուիզի աչերը՝ երբեմն փայլող և երբեմն ալ նսեմացող լոյսին յառած մնաց, և քիչ մը նաց որ ուրախութեան աղաղակ մը պիտի բառնար Պէրթիէն նշմարելով Տամիէնի ետեւի կողմը:

Ա՛հ, ի՛նչ վայրագ յուսախափութիւն:

Տամիէնի ստուերն էր այն ինչ որ Լուիզ Պէրթիէի անձը ըլլալ կը կարծէր:

Վերջապէս Յիմար Յիանապետը այնչափ մօտեցաւ որ, զգուշութեան համար իր լապտերիկը մարած և մութին մէջ յառաջանալու սկսած ատեն արդէն իր աղջիկը ի՛նչ անգութ և չարաչար կերպիւ սխալած ըլլալը հասկցեր էր, և այս անգամ իր սիրտը ցաւազին կերպիւ կը բարախէր:

Բայց պէտք չէ մէկէն ի մէկ յուսահատիլ:

Կարելի էր որ Պէրթիէ հեռուանց և անտեսանելի կերպիւ կը հետեւէր Տամիէնի քայլերուն:

Եւ արդարեւ մեռեալ մարդ մը չէր կրնար ողջ մարդու մը պէս համարձակ երեւիլ հետաքրքիր աչերու:

Ուրիշ բան մ'ալ կար:

Կարելի էր որ Պէրթիէի վիճակը ծանրացած ըլլալով, Տամիէն՝ զանի իր քով բերելու տեղ, գուցէ զինքը առնուլ և անոր քով տանիլ ուզէր:

Մէկու մը ետեւէն խօսք ընելը աղէկ բան մը չէ:

Բայց կան պարագաներ որոնց մէջ մարդս չի կրնար բռնել ինքզինք:

Թող ամէնքը չիմանան:

Մենք միայն մեր ընթերցողներուն ականջն ի վար կըսենք որ, Լուիզ այդ վայրկեանին Պէրթիէի հիւանդութեան ծանրամալն ալ ի-

մանալու բաղձանք մը կ'զգար, որպէս զի զանի ինքն իր ձեռօք խնամելու և անոր շնորհակալութիւնը տեսնելու երջանկութիւնն ու նենայ:

Բայց չի մեռցնող տեսակէն բարի՛ հիւանդութիւն մ'ըլլալու պայմանաւ անշուշտ:

Է՛հ, ի՞նչ պիտի ըսես:

Ամեն տեղ քիչ շատ անձնասիրութիւն կայ վերջապէս:

Քոնէ ամենէն քիչը մինչեւ իսկ այնտեղ, ուր ներելի կրնայ համարուիլ կարծել թէ անձնասիրութիւն ըսուած բանին հետքն անգամ չի կայ:

Բայց Լուիզի բոլոր յոյսերը, կարծիքները, և ենթադրութիւնները շատ շուտով անհետ պիտի ըլլային:

Տամիէն, գերեզմանատունէն մինչեւ Լուիզի բնակարանը ամբողջ ճամբուն երկայնութիւնը ինքնիրեն խորհուրդներ ըրեր էր, և Պէրթիէի յանկարծական աներեւութացման վրայօք իր աղջկան տալիք պատասխան, վերջնական կերպիւ որոշեր էր:

Եւ որպէս զի իր դիւանագիտական զեկուցման շարագրութեան մէջ անդարմանելի պակաս մը կամ աւելագրութիւն մը տեղի չունենայ, առանց Լուիզի հարցման ժամանակ թողելու իր հռչակաւոր պատգամը դուրս տուաւ:

— Օրի՛որդ, Պէրթիէդ անյայտացեր է:

— Անյայտացե՛ր է կրեսս. բայց ի՞նչպէս:

Ահա այս անդութ հարցման պատասխան մը պատրաստելը չէր մտածած ողորմելի մարդը:

— Բայց ինչպէ՞ս... ի՞նչպէս անյայտացեր է կրեսս... այո՛, իրաւունք ունիս... ի՞նչպէս անյայտացեր է... ատոր իմ խելքս ալ չի հասնիր, օրի՛որդ... բայց վերջապէս անյայտացեր է: Քանի որ իմ թողած տեղս չի կայ:

— Ա՛հ, խեղճ Պէրթիէս, հիմա կը հասկընամ որ յիրաւի սպաննուած է անիկայ, և դուն կը խափես զիս:

— Ա՛հ, Լուիզ, եթէ այդ խօսքը ընողը ուրիշ մ'ըլլար կ'սպաննէի զայն, եթէ ինձմէ պակաս զօրաւոր ըլլար... իսկ եթէ ինձմէ աւելի զօրաւոր մէկն ըլլար՝ ինքզինքս կ'ըսպաննէի... բայց դուն իմ աղջ... այսինքն աղջկանս պէս կը սիրեմ զքեզ. ուստի ոչ մին կրնամ ընել և ոչ միւսը... ապա ուրեմն պարտիմ ներել քեզ:

— Բայց իմ Պէրթիէս կուզեմ ես. պէտք է որ զինքը տեսնեմ և իրեն հետ խօսիմ... կամ գոնէ ապահովիչ լուր մը առնում իր վրայօք:

— Հանդարտէ, աղջիկս, հանդարտէ, մի՛



կարծեր որ ես այ քեզմէ պակաս մտատան-  
ջութեան մէջ եմ իր անյայտանալուն վրայ...  
չաբաթ մը, երկու շաբաթ սպասենք իրմէ  
տեղեկութիւն մը առնելու համար, և եթէ  
մինչեւ այն ատեն լուր մը առնելու կարող  
չըլլանք՝ զինքը վնասուելու պիտի ելնեմ և աշ-  
խարհի մինչեւ վերջին ծայրը պիտի հալա-  
ծեմ զինքը... Ահ, թէպէտեւ մութին աղէկ  
մը չեմ տեսներ, բայց ինձ անանկ կուգայ որ  
կուլաս կոր... մի լար, աղջիկս, Պէրթիէի  
քեզի յանձնած աւանդներուն վրայ մտածէ  
հիմակու հիմա, և անոր անձին վրայ խորհի-  
լը ինձ թող:

— Բայց գոնէ կատարելապէս ապահովցուր  
զիս որ Պէրթիէս մեռած չէ:

— Ինձ նայէ, Լուիզս, կարծեմ թէ երգում  
ըրիք իր կենդանութիւնը ամեն ականջներէ  
պահելու. այո՛, կարծե՞ն ինչ է, ապահով  
եմ որ այդ մասին երգում ըրիր, երգումը  
լաւ յիշէ, աղջիկս, Պէրթիէ վերջնական կեր-  
պիւ մեռած է...

— Մեռած է...

— Բայց չես թողուր որ խօսքս վերջացը-  
նեմ... Պէրթիէ վերջնական կերպիւ մեռած  
է ուրիշ ամեն մարդոց համար բաց ի քեզմէ  
և ինձմէ... յանուն բոլոր կրկնային Սրբոց  
կերպնում որ Պէրթիէյ սղ է ինչպէս որ ես

այս վայրկենիս ողջ կը գտնուիմ. քու առջե-  
ւըդ. և անշուշտ ինձմէ աւելի առողջ վիճա-  
կի մը մէջ ալ ըլլալու է, քանի որ կրցեր է  
մեկնիլ իմ հիւղակէս առանց իսկ հետք մը  
թողելու, և առանց իսկ մնաս բարեաւ մը  
ըսելու ինձ, որ՝ ինչպէս Աստուած, նոյն իսկ  
ինքնալ լաւ գիտէ թէ արեանս վերջին կաթիլն  
ալ իր սիրոյն համար զոհելու պատրաստ եմ.  
Դուն կայներ ինչեր կերգես իմ ծերունի ա-  
կանջներուս. հէ՛հ, եթէ Պէրթիէ մեռած ըլ-  
լար, կը կարծէիր թէ կարողութիւն և հա-  
մարձակութիւն պիտի ունենայի քու աչացոյ  
երեւելու:

Տամիէնի այս երկար ատենախօսութիւնը,  
որուն մէջէն անվաս ազատելիքը և ոչ մի  
բանաւոր էակի մտքէն կրնար անցնիլ, բոլո-  
րովին ապահովուց գերեզմանապահին աղ-  
ջիկը:

Ուրախացուց իսկ զանի:

Եւ ի՞նչ ուրախութիւն:

Կուզէ՞ք ատոր ալ ատիճանը հատկնալ:

Լաւ, կարճ կերպով հասկցնենք ձեզ:

Տամիէն մեկնած ատեն իր աղջիկը ինքնա-  
բերսբար գեղեցիկ համարյո մը կը նուիրէր  
անոր իր հրաշագեղ ճակտէն:

Ինչերային ճամբորդութեան մը և խիստ  
տածանելի ատենախօսութեան մը համար

պէտք եղածէն աւելի վարձատրութիւն մը չէ՞ր ասիկայ գերեզմանատան պահնորդի փոխանորդին :

..

Շարաթ մը յետոյ, Յիմար Յիսնապետը երկրորդ դռնփակ նիստ մը կուսնենար իր նազելի աղջկան հետ :

Ո՛րչափ ուրախ և ո՛րչափ զուարթ էր այս անգամ անճարակ ծերունին :

— Է՛հ, չըսի՞ քեզի, աղջիկս... չըսի՞ քեզի... ո՛հ, գիտէի... ապահո՛վ էի...

Ասոնք էին բոլոր իր առաջին և վերջին խօսքերը, մինչեւ որ Լուիզ անհամբերութեամբ կառնուր անոր ձեռքէն նամակ մը, զոր Տամիէն՝ կայսերական հրովարտակի մը պէս գլխէն բարձր կը բռնէր և անոր ընթերցումէն առաջ նստիլ չէր ուզեր :

Լուիզ ալ կամ ի պատիւ իր ծերունի բարեկամին յոտնկայս դիրքին և կամ ի պատիւ այն երջանիկ նամակին, որոնց երկուքէն մին ընտրելու կատարեալ ազատութիւն կուտանք մեր ընթերցողներուն, Տամիէնին քով ոտքի կայնած, ցած ձայնիւ բայց կարի յուզեալ վիճակի մէջ հետեւեալ տողերը կը կարդար :

«Ազնիւ բարեկամս,

«Առանց քեզի իմաց տալու և առանց ի՛

Լուիզի մնաս բարեաւ մը ըսելու մեկնելու համար ներում կը խնդրեմ :

«Ուրիշ կերպիւ չէի կրնար ընել, վախնալով որ որոշմանս արգելք կըլլաք :

«Լօնտոն եմ հիմակու հիմա :

«Ինձ պատասխան մի՛ գրէք :

«Կարելի է մի քանի օրէն ասկից ալ մեկնիմ :

«Բայց ուր որ երթամ պիտի գրեմ ձեզ :

«Առողջութիւնս լաւ է :

«Լուիզը և փոքրիկ մանկիկը փառաւոր տուն մը և ազնուապետական թաղ մը փոխադրեցէք :

«Կուզեմ որ իշխանական կեանք մը վարեն :

«Ուրիշ անգամ երկար կը գրեմ :

«Աստուած օրհնէ ձեզ :

«Նամակս Լուիզին կարդա՛ և անմիջապէս այրեցէք զայն :

«Պէթիի»

Երկարաբանութիւն պէտք չէ :

Լուիզ և Տամիէն լալագին աչօք իրարու փաթթուեցան և խանդաղատանօք համբուրեցին զիրար :

Յետոյ խարոյկի արարողութիւնը ի գործ դրուեցաւ, այսինքն Պէթիէի նամակին այր-

ման գործողութիւնը ըստ խնդրանայ հեղինակին :

Գուցէ աւելորդ բան մը կըլլայ ըսել որ այն երջանիկ նամակը իրարու վրայ երեք անգամ Լուիզի համբոյրները ընդունելու հաճոյքը ունենալէ ետեւ կ'ոչնչանաք յերեսաց երկրի ուր ոչինչ կա մարդկային որ յաւիտենական ըլլայ :

Երկու շաբաթ յետոյ Լուիզ, Պէրթիէի փոքրիկ մանկիկը, և պառաւուհի կինը կը փոխադրուէին Պրիւքսէլ քաղքի էն ազնուապետական թաղի հոյակապ ապարաններէն մին, որուն դռնապանութեան պաշտօնը իրմէ ուրիշ և ոչ մէկուն կրնար վստահել գերեզմանատան պահնորդի ՚իւրի՛ն օգնական Մերունի հայրը :

2.

### ՄԻՍԻՍԻՔԻԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Երբ Լուիզովկիոս ժ՛՛. Գաղղիոյ գահն ելաւ 1715 ին, տակաւին հինգ տարեկան էր :

Օրլէանի Դուքսը ինամակալ կարգուեցաւ թագաւորութեան :

Օրլէանի Դուքսն, ալ՝ Տիւպուա Աբբան ի-

րեն նախարարապետ ընտրեց որ յետոյ կարգինալ Տիւպուա եղաւ :

Տիւպուա թէեւ եկեղեցական մը, այլ միանգամայն Օրլէանի Դուքսին կրից միշտ ներողամտութեան աչօք նայելով, անոր անասունաժութիւն ալ սորվեցուցած էր :

Բայց հիմա բարոյական և հոգեւոր մտածումներով զբաղելու ժամանակ չէր :

Տէրութիւնը ահագին պարտքի մը տակ ինկած էր և նախորդ դանձուց պաշտօնեայն յուսահատած էր այդ պարտքին առջեւ :

Օրլէանի Դուքսը խիստ համառօտ եղանակ մը գտաւ այդ դժուարութենէ ազատելու :

Անոնք որ աճուրդով վրանին առած էին Տէրութեան հատոյթները, իրենց ըրած շահերը ետ տալու բռնադատուեցան, դրամով ծախսուած պաշտօնները ջնջուեցան, շատ հարուստ մարդիկ բանտը նետուելով՝ ազատ թողուելու համար իրենցմէ մեծամեծ գումարներ կորզուեցան, և ասոնց պէս տակաւին շատ մը բաներ :

Այսու ամենայնիւ դեռ 60 կամ 70 միլեօն Անգլիական լիբայի չափ պարտք կը մնար, որմէ ազատելու ուրիշ բռնական կամ արուեստական միջոց մը չէր մնացած :

Օրլէանի Դուքսը անոր ալ ճարը գտաւ : ձօն Լօի դիմեց :

Պատմենք թէ ո՞վ էր ճօն Լօ:

Այս մարդը դրամատուն մը հաստատած էր, և Մխիթարի Ընկերութեան հետ հարդակցութիւն ունէր:

Ճօն Լօ խիստ վարպետ Սկովտիացի մ'էր, էտինպուրլի մէջ ոսկերչի մը որդին, և խել մը յաջող գործողութիւններով հանձարի մը տէր եղած ըլլալու համբաւն հանած և ամեն կարգի ժողովրդեան վստահութեանը և զմայլման արժանացած էր:

Ահա այս մարդը պիտի ըլլար Ֆրանսայի վրկիչը ըստ Օրէնանի դքսին:

Ճօն Լօ խոստացաւ երկիրը պարտքէ ազատել, մեծ վաճառականութիւն մը բանալ, առանց նոր տուրք մը աւելցնելու Տէրութեան գանձը ստակով լեցնել, և Ազգային Պարտքը բոլորովին հատուցանելով ջնջել:

Սկովտիացին՝ իր դրամատունը 1716ին բացած էր:

Նոյն տարւոյն նոյեմբեր 30ին Ֆրանսա մրտան իր նաեւերէն երկուքը որք ծանրադրին բեւերով լեցուած էին:

Երբ ժողովուրդը տեսաւ կամ իմացաւ այդ նաեւերուն ժամանելը, իր վստահութիւնը ո՞րչափ աւելի մեծցաւ:

Կառավարութիւնը 1717ին խել մը առանձնաշնորհումներ կը նուիրէր երջանիկ Սկովտիացիին:

Իր դրամատուները պիտի ընդունուէին կառավարութեան անտուկներէն ճիշդ իբրեւ հնչուն դրամ:

Քիչ ժամանակ յետոյ ճօն Լօի դրամատունը՝ Արքունական Դրամատան վերածուեցաւ, և վերջապէս 1718ին իրօք Գաղղիոյ Դրամատունը՝ այսինքն Ֆրանսայի Պանքան եղաւ այն:

Նոյն միջոցին երկու գլխաւոր ընկերութիւնք կային:

Մին՝ Արեւելեան Հնդկաստանի Ընկերութիւնը, և միւսը՝ Մխիթարի Ընկերութիւնը:

Այս երկու Ընկերութիւնք ալ ի մի վերածուեցան և Գաղղիոյ Դրամատան հետ միացուեցան:

Լուիզիանայի, և Մխիթարի գետին վրայ եղող նահանգներուն ամբողջ աւելուորը, ու Գանատայի բոլոր մուշտակի վաճառականութիւնը այս մեծ Ընկերութեան մենաշնորհըն եղան:

Ճօն Լօի հարստութիւնը՝ ազգային պարտուց վճարմանը համար 50 միլիոն Անգլիական ոսկոյ փոխարէն իրաւունք պիտի ունենար նաեւ Ափրիկեան և Ասիական վաճառականութեան բացարձակ տէրն ըլլալու:

Նաեւ Տէրութեան հասոյթները ամբողջ

յիսուն տարի մի միայն ձօն Լօի ընկերութիւնը պիտի կարենար աճուրդով իր վրայ առնուլ և ինը տարի ալ իր հաշտոյն ստակ պիտի կոխէր :

Ահա այս բացառիկ առաւելութեանց վրայ նոր կերպարանի մը վերածուեցաւ Միսիսիբիի Ընկերութիւնը, և որոնք որ Տէրութեան գանձուն պարտք սենէին, պիտի կարենային վճարել զայն Միսիսիբիի բաժնետոմսերով՝ գլուխ գլխի :

Ձօն Լօի յատակագիծն այն էր որ ոսկւոյն և արծաթին տեղը բռնել տալու համար թրղթադրամ պիտի կոխէր, որոնք սակայն անմիջապէս դրամով պիտի փոխանակուէին երբ որ Դրամատունը ներկայացուէին :

Ընկերութեան դրամագլուխը պիտի ըլլար 400 միլիոն Անգլիական ոսկի :

Ժողովուրդը այնչափ խաբուեցաւ այս փայլուն ցոյցերէն որ նորէ նոր բաժնետոմսեր կոխել պէտք կըլլար բուռն եռանդը գոհացնելու համար :

Երեւակայական հարստութիւն մը դիզելու համար ի՛նչ չնաչխարհիկ բաղդ էր այն :

Այլ սակայն և արծաթին երեսը ո՞վ կը նայէր :

Միմիայն Միսիսիբիի բաժնետոմս պէտք էր ամենուն, մէկ կողմանէ Տէրութեան գանձունը

ձուն ունեցած պարտքերնին վճարելու և միւս կողմանէ հարստութիւն դիզելու համար :

Տէրութեան արժեթուղթք ալ հետզհետէ կը փոխանակուէին Ընկերութեան բաժնետոմսերու հետ որով քիչ ատենուան մէջ Ագգային Պարտուց կէսէն աւելին, այսինքն 40 միլիոն Անգլիական սակւոյ չափ պարտք ջընջուեցաւ :

Քիչ մը յետոյ այդ 40 միլիոնն ալ 50 միլիոնի բարձրացաւ և մնացած պարտքն ալ բոլորովին ջնջուելու վրայ էր :

Ձօն Լօ Փրանսայի բարերարն եղած էր :

Դուքսեր և իշխաններ իրենց մեծ պատիւ մը կը համարէին անոր հետ ճաշելը, որ ամբողջ Դաղղիա կը հարստացնէր առանց ուէ մէկը աղքատ ընելու :

Սովորական ժամանակի հիւրերէն կէս միլեօն օտարական աւելի կային Բարիզի մէջ, որոնք իրենց հարեանի երկիրը թողելով տիեզերական քաղքին ընդհանուր ճոխութեանը մասնակցելու դիմած կը գտնուէին. անհամար ճոխ և նորաչէն կառքեր, ժանրագին համազգեստներ հազած կառապաններ և ըսպասաւորներ հիացում կը պատճառէին ամեն կողմ :

Միսիսիբիի Ընկերութեան բաժնետոմսերու գինն ըրը բնականաբար ահագին ուսուումներ

ընել սկսած էին Սակարանին մէջ, անանկ որ շատ չի տեւած 100ը 1200ի, և մինչեւ իսկ վերջերը 2000ի բարձրացաւ. անանկ որ եթէ Սակարանի անուանական գիները գրամի վերածել հարկ ըլլար, ըստ Անտէրսընի հաշուոյ, բոլոր աշխարհի վրայ շրջագայող ոսկին ու արծաթը անար հարիւր ութսունէն մէկին հազիւ պիտի բաւէր:

Բայց վերջապէս օր մը պիտի գար որ դերախար հասարակութեան աչքը պիտի բաց ուէր, և ի՛նչ լաց ու ակռաներու կճճուտւք տեղի պիտի ունենային այն դժբաղդ օրը:

Այն օրուանը այն օրուան թողունք հիմակու հիմա, և մենք մեր պատմութեան շարունակութեանը նայինք որ վերայիշեալ բարեբաստիկ օրերուն յատուկ է:

Պանատացի պարոն մը տեսնուեր էր որ Միսիսիքի բաժնետոմսերուն հրապարակ ելած օրէն ի վեր անընդհատ կը գնէր անոնցմէ:

Ոմանք կըսէին թէ բաղդախնդիր մէկն է այն, որ ի սկզբան հազիւ հազ կարողութիւն ունեցած էր 50—60 հաա ձեռք բերելու անոնցմէ:

Բայց հիմա իբր բաժնետոմսերը հազարներով կը հաշուէին, որնոր հետզհետէ գիներու բարձրացման շնորհիւ աւելցած տարբերութիւններուն արդիւնքն էր:

Ուրիշներ ալ կը պնդէին թէ արդէն մեծահարուստ Ամերիկացի մ'էր այն, և ամեն թղթատար նաւով ահագին գումարներ բերել կուտար նոր ի նորոյ բաժնետոմսեր գրնելու համար:

Միայն մէկ բանի վրայ ամենքը համաձայն էին:

Այսինքն թէ ինչ որ ալ եղած ըլլար նախկին վիճակը, հիմա աշխարհի ամենէն հարուստ անձերէն մին եղած էր այն:

Իր շքեղ ապարանը, խիստ ճոխ մասնաւոր կառքերը, սպասաւորները ևն տարակոյս չէին թողեր այսօրնդ հանուր կարծեաց ճշմարտութեանը վրայ:

Հետաքրքիրք միայն սա բանին խելք չէին կրնար հասցնել որ այսչափ հարուստ և երիտասարդ մարդ մը ի՞նչպէս կրնար ժամանակ անցունելու առանց գեղանի սիրուհեաց, որոնք կը վիտային այն ատենները Բարիդի մէջ ի գոհունակութիւն շուայլ և օտարազգի երիտասարդաց գլխաւորաբար:

Բայց վերջապէս ամենէն մոլեռանդ հետաքրքիրք ալ միշտ մխիթարական բան մը ունին իրենց անյաշողութեանց մէջ:

Անպարտելի են անոնք:

Անշուշտ երիտասարդ Պանատացին այնչափ զբաղած էր իր շահագիտական գործով, որ

գեղեցիկ սեռին վրայ մտածելու ժամանակ չէր կրնար ունենալ :

Խեղճ երիտասարդ :

Բայց վերջապէս օր մը անշուշտ իր վրէժը պիտի լուծէր այս գեղեցիկ բայց անիրաւ աշխարհէն . . . երբ իր ուզածին չափ հարստանար և մէկ երկու սիրուհւոյ տեղ, տասը բըսան սիրուհիներ իր ետեւէն վազցնելու պէտքը տեսնէր :

Եթէ ընթերցողք մինչեւ հիմա չի գուշակեցին, անգութ բան է որ պատճառ ըլլանք իրենց միտքը յոգնեցնելու :

Այն երիտասարդ Գանատացի պարոնը Պէրթիէն ինքն էր եթէ հասկնալ կուզէք, և կարծեմք այլ եւս աւելորդ բան է ըսել թէ ինչո՞ւ համար սիրուհիի մը վրայ մտածած չէր մինչեւ այն ատեն :

Թող հետաքրքիրք ինչ կուզեն ըսեն :

Բաւական է որ մենք գիտենք գործին բուն գաղտնիքը և այս մասին շատ իրաւունք ունենալ կը կարծենք շնորհաւորելու Յիմար Յիսնապետին երջանիկ աղջիկը, որ իր մասին ինքն ալ Պրիւքսէլի հետաքրքիր մեծ տիկիններու սրտին ամենէն մեծ վէրքը եղած էր իր չնաչխարհիկ գեղեցկութեամբը և իրենց նախանձը շարժող փառաւոր կեանքովը :

Տիկին Էթիէն Տըլապուշ, այսինքն Պէրթիէի

նախկին նշանածը գեղանին Անժէլիք, չի գարկած դուռ չէր թողուցեր հասկնալու համար թէ, հասարակաց պարտէզներու և ազնուապետական թաղերու այնչափ մեծ շուք մը տուող փառաւոր կառքին մէջ իշխանուհւոյ մը պէս վեհօրէն բազմած կինն ո՞վ էր, որուն միայն լուրիզ անունը կուտային առանց զինանշանի արդարացուցիչ փայլն ալ անօր վրայ աւելցնելու, և որուն միշտ կը հետեւէր ձիով ծերունի մարդ մը, որուն սակայն գերեզմանատան պահնորդի նախկին օգնականն ըլլալը չը գիտցող մարդ չի կար :



ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈԹՈՐԻԿԸ

Օր մը Էթիէնի ապարանին փառաւոր սրբահներէն մէկուն մէջ հետեւեալ խօսակցութիւնը տեղի կուսնենար .  
— Անժէլիք, ատենէ մ'ի վեր քեզի անսովոր կերպիւ արտում կը տեսնեմ. հիւանդ ո՞ւրթիւն մը ունիս .  
— Էթիէն, միթէ լո՞ւրջ կերպիւ կընես այդ հարցումդ :

— Ի՞նչ ըսել է լուրջ կերպիւ . երբ մարդ մը իր կնոջը վիճակին վրայ անհանգիստ ըլլալու պատճառ մը ունի , կատակի հետ ալ գործ չի կրնար ունենալ կարծեմ :

— Ա՛հ , ուրախ եմ այդ կերպիւ խօսելուդ . . . այո՛ , ուրախ եմ :

— Ամենքը ա՛յսչափ , Անժէլիք :

— Աւելի ի՞նչ կուզէիր ,

— Տրտմութեանդ պատճառը հասկնալ կուզէի :

— Ուրեմն վերջապէս սպասով կ'զգաս ինքզինքդ որ տրտմութեան պատճառ մը ունիմ :

— Պատճառը քեզմէ պիտի իմանամ . ես միայն այնչափը գիտեմ որ տրտում ես :

— Եւ պատճառը չէս գիտեր , այնպէ՞ս է էթիէն :

— Եթէ գիտնայի չէի հարցնէր քեզ :

— Ա՛հ , ո՛րչափ պող կերպիւ կը խօսիս , սակայն ատեն մը այսպէս չէիր :

— Բայց ի՞նչ ըսել կուզես , Անժէլիք , կը խնդրեմ բացայայտ կերպիւ խօսէ :

— Ուրեմն հրաման կուտաս ինձ խնդրելու քեզմէ այն բացատրութիւնը որմէ խօսի տալ կ'աշխատէի բաւական ժամանակէ ի վեր :

— Բաւական ժամանակէ՛ ի վեր , բայց կը խնդրեմ ըսէ , ո՞ր ժամանակէն ի վեր ,

— Այն ժամանակէն ի վեր երբ դադրեցար զիս սիրելէ :

— Բայց ինչե՞ր կ'ըսես , Անժէլիք , կրնա՞ս կարծել որ զքեզ սիրելէ դադրած ըլլամ :

— Լոկ կարծիք մը չէ այդ , էթիէն :

— Հասցա ի՞նչ է :

— Հաւատք մը :

— Ո՛հ , կը տեսնեմ թէ դործերը ծանր կերպարանք մը կ'առնուն , գեղեցիկ կ'լինս . հիմա կը հասկնամ որ կատարեալ իրաւունք ունիմ եղեր հաւատալու թէ իրօք վրադ հիւանդութիւն մը եկած է :

— Ի՞նչ տեսակ հիւանդութիւն , կը խընդրեմ ըսէ :

— Երեւակայութեան բորբոքման հիւանդութիւն :

— Ըսել է թէ ալ եւս զիս չի սիրելուդ վըրայ ունեցած հաւատքս սոսկ երեւակայական է :

— Անժէլիք , եթէ զքեզ սիրած չըլլայի , միթէ կ'ամուսնանայի քեզի հետ :

— Այո՛ , գիտեմ . եթէ իշխանի մը աղջիկը ուղէիր , առանց վարանելու կուտային քեզ . մինչդեռ ինձի պէս աղքատ աղջիկ մը նախամեծար ընտրեցիր :

— Լա՛ւ , ուրիշներն ալ ըսեմ . եթէ զքեզ բոլոր մահկանացուներէ աւելի սիրած չըլլա-



յի, այսօրուան հարստութեանս ներածէն աւելի շռայլութիւններ կընէի՞ քեղի համար, չորս հատ սպասաւորներ, մասնաւոր երկու կառքեր, կառապան մը, ձիադարման մը, դռնապան մը, երկու սենեկապանուհի, երկու կարուհի ևն. յոկ քու անձնական հաճոյքիդ յատկացուցած չե՞մ:

— Շնորհակալ եմ, էթիէնս, ես ասոնց մէկուն ալ արժանի չէի, բայց դուն ամենքն ալ ըրիր ինձ համար. սակայն ասոնց հետ միատեղ բան մ'ալ կար որ կընէիր, զոր բաւական ատենէ ի վեր գրեթէ բոլորովին դադրեցուցած ես:

— Ո՞ր բանը ըսել կուզես:

— Ժամանակաւ ինձ հետ կը բազմէիր այն կառքերէն մին, որք միշտ պատրաստ կը գլուխուին ախոռներուդ մէջ, և որոնք պէտք մը չունէին իմն կամ քուկդ կոչուելու, և ո՞րչափ երջանիկ կը համարէիր ինքզինքդ միմիայն այն բանին համար որ ես քու քովդ էի. կը յիշե՞ս այն երջանիկ ժամանակները, էթիէնս... բայց կը լռես և չես պատասխաներ:

— Ա՛հ, Անժէ'լիք, ի՛նչ զարմանալի բաներ կ'ըսես, եթէ քիչ մը ատենէ ի վեր կառքով քեզի ընկերանալու հաճոյքէն կը զրկուիմ, պատճառը այն է որ դործարանիս հոգերը շատցած են, այո՛, տարապայման կերպիւ-

շատցած են և ժամանակ չեմ կրնար գլուխել...

— Գիտեմ, գիտեմ, իմացած եմ որ դործարանդ ալ կործանման վիճակի հասած է:

— Ա՛հ, ո՞վ ըսաւ ատիկա քեզի, կը տեսնե՞ս, քեզի տրտմութիւն մը չի պատճառելու համար ամեն բան քեզմէ գաղտնի պահել կուզէի, և մինչեւ իսկ...

— Ըսէ, ըսէ, մի՛ կենար, մինչեւ իսկ ի՞նչ:

— Է՛հ, մինչեւ իսկ քեզի զգացնել տալ չէի ուզեր որ երջանկութեանդ համար շռայլած ծախքերուս համապատասխանելու վիճակէն ելած է դործարանս:

— Լա՛ւ, բայց գիտէիր որ քու վրադ ունեցած սիրոյս սաստկութիւնը ամեն բան զոհելու պիտի պատրաստէր զիս. կառքերդ ու սպասաւորներդ քեզի ըլլան, էթիէնս, միայն իմ վրայ ունեցած առջի սէրդ վերադարձուր ինձ, այնչափը բաւական է... բայց ո՛հ, գիտեմ որ շատ բաներ կրնան վերակենդանանալ բաց ի... անգամ մը մեռած սէրէն:

— Անժէ'լիք, Անժէ'լիք, սրբէ աչերդ...

— Այո՛, սրբեմ այն աչերս որք այլ եւս գեղանի չին քեզի համար:

— Բայց Աստուած իմ, այս կիներ զիս պիտի յիմարեցնէ:

— Ի՛նչ յիմարեցնողը ես չեմ, էթիէնս:

— Ուրեմն ո՞վ պիտի ըլլայ նազելիս :

— Ձեռներդ քաշէ վրայէս, էթիէն, այլ եւս արժանի չեմք ու գոռանացդ . այդ իրաւունքս ուրիշի մը անցած է հիմա . ո՛հ, գիտեմ թէ որչափ դժբաղդ եմ :

— Ուրիշի՞ մը անցած է այդ իրաւունքդ . . .

— Այո՛, հիմա ուրիշի մը անցած է այն . ես՝ կարծածիդ չափ ապուշ չեմ, էթիէն, գիտեմ թէ որս՞ է համար կը կործանես դորժարանդ, ինքզինքդ, զիս, և որդիդ :

— Բայց կարծիքներդ սխալ են, Անժէլիք :

— Սխալ են, ա՛հ, գոնէ ստախօս մի ըլլար, էթիէն, գործարանիդ դատմունքները արդեւք կըլլան քեզ ինձ հետ ընկերանալու, այնպէս չէ՞ :

— Եւ կը տեսնես որ լոկ իմ անձիս յատկացած կառքս փոշիներու մէջ թաղուած կը մնայ ախտիս մէջ :

— Սակայն ատիկայ արդեւք մը չըլլար որ զիս խաբելու համար հասարակաց վարձուկառքեր բռնես, և փոխանակ գործարանիդ գբաղմանց հետեւելու, միշտ այնպիսի մէկու մը հետեւիս, որ աւելի գեղանի կերելի հիմա քու խաբեբայ աչերուդ քան այն Անժէլիքին անձը զոր քուկդ կոչելու համար աշխարհներ զոհելու երդում ըրած էիր :

— Բայց ո՞վ է այդ ըսած ուրիշ անձը :

— Ս՛հ, ահ, որչափ ալ անմեղ կը ձեւացրնես ինքզինքդ :

— Սակայն ըսէ, կաղաչեմ, այդ անձին առնունը տուր :

— Կուղես իմ բերնէ՞ս իմանալ սիրուհիդ անունը . . . լա՛ւ . . . ըսեմ քեզի . . . Լուիզ քուած աղջիկն է այն, որնոր ո՞վ գիտէ քեզի պէս ուրիշ քանի՞ սիրահարներ ալ խաբած ըլլալուն շնորհիւ ժամանակէ մ'ի վեր անհաւատալի փառաւորութեան մէջ կանցընէ իր կեանքը, և Պրիւքսէլի ամբողջ ազնուապետականութեան բերանն ինկած է . . . Ի՞նչ պէս, առած տեղեկութիւններս ճիշդ չե՞ն, ինչո՞ւ համար կը լռես, ըսէ թէ բոլոր ասոնք սուտ պատմութիւններ են, ըսէ թէ տիկին Ֆրանսուազ խաբած է զիս, ըսէ և հաստատէ անոնց սուտ ըլլալը, և ես միշտ նախամեծար պիտի համարիմ օտար երկրի մը մէջ ամենաաղքատիկ վիճակ մը բաժնել սիրելի ամուսնոյ մը հետ, քան այս շլացուցիչ կեանքը խաբեբայ մարդու մը հետ :

— Լրտեսներդ խաբած են զքեզ, Անժէլիք, մանաւանդ քու տիկին Ֆրանսուազդ, որուն յատկացուցած 200 ֆրանք ամուսկանս պիտի դադրեցնեմ այս օրէն :

— Ս՛հ, գոնէ այդ բանը ընկող անկարելի է, խեղճ էթիէնս, մի այլայլիք . տիկին Ֆրան-

սուազ քանի որ Պէրթիէի սպանման գաղտնիքը գիտէ և կրնայ ամէն վայրկեան ձեռք տալ մեզի, աղքատութեան վերջին ծայրն ալ եթէ հասնինք՝ դարձեալ պիտի վճարես աւոր 200 ֆրանքի ամսականը. մանաւանդ որ ծառայութիւն մ'ալ մատուցած է ինձ իմ խնդրանքս լրտեսելու քու ամօթալի արարքը և ամեն բան ինձ տեղեկացնելու:

— Քիչ մը զգուշութեամբ խօսէ հետս, Անժէլիք, իրենց էրկանը գործերը ամօթալի անուանող կանանց ներող այրերէն չեմ... մանաւանդ որ Պէրթիէն դուն սպաննել տուիր. Լըկէռիէի սպանութեան ամբողջ վարձքը վճարողը դուն էիր, և մեղսակիցդ ալ այն տիկին Ֆրանսուազն էր, զորն որ իբրեւ ամենաբարեպաշտ մէկը, այժմ երկնից կամարները բարձրացնելու ելեր ես:

— Ա՛հ, վհուկին ըսածները, վհուկին ըսածները... որչափ ճշմարիտ էին անոնք... և ես բաւական յիմար դոնուեցայ և... սիրահարիս մարդասպանն եղայ... խեղճ Պէրթիէ... ա՛հ, եթէ մեռած ատենդ անիծեցիր զիս, գոհ եղիր, հիմա արժանապէս կը կրեմ քու արդարացի անէծքներուդ հետեւանքը:

Անժէլիք ասոնք ըսելէ ետեւ իր երեսը ծածկեց բազմոցին բարձերուն մէջ տեղը ո-

րոնց վրայ ինկած էր. և դառնապէս կուլար:

Խղճի խայթի պատճառած արցունքներն էին անոնք, որք չեն խնայեր մարդկային ընկերութեան ամենէն բարձր աստիճանին մէջ գտնուողներուն իսկ, ինչպէս նաեւ ամենէն խոնարհ աստիճաններուն մէջ եղողներուն:

Իսկ էթիէն կրակ կտրած դուրս կելնէր սրահէն, առանց անգամ մ'ալ իր կնոջը վերայ նայելու, և առանց բառ մը եւս աւելցնելու թէ Լուիզի յիմար սիրահարը եղած չէր ինքը երբէք:

Ը.

### ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՐՈՆ ՏԵՍՈՒՉԸ

Էթիէն՝ սրահին դռնէն դուրս ելնելէ ժամ մը յետոյ, տիկին Տըլապուշի անձնական փառաւոր կառքը կը մեկնէր ապարանէն:

Ո՛ր կերթար Անժէլիք:

Ոստիկանութեան պաշտօնատունը, ուր յատուկ տեսակցութիւն մը պիտի խնդրէր Ոստիկանութեան պարօն տեսչին հետ:

Տեսուչը, որ յիսնամեայ, գէր, և կարմրբայտ մէկն էր, և հակառակ իր տարեքին

Ժանրութեան և անձին գերութեան՝ երե-  
սուն տարեկան երիտասարդի մը պէս վառ-  
վառն և միանգամայն սրտերու թափանցող  
աչք մը և անոր համեմատ ձեւեր ունէր,  
մասնաւոր սենեկի մը մէջ ընդունեց տիկին  
Տըլապուշը մեծ քաղաքավարութեամբ և  
յարգանքով:

— Պարոն տեսուչ, մի քանի կարեւոր բա-  
ներու համար, ձեր հանրածանօթ գիտակ-  
ցութեան և միանգամայն խորհրդապահու-  
թեան դիմել յամարձակած եմ:

— Ամեն կերպիւ ձեզի ծառայելու պատ-  
րաստ եմ, տիկին:

— Նախ կը փափաքիմ գիտնալ թէ ամուս-  
նոյս գործերը ի՞նչ վիճակի մէջ են:

— Ներեցէք, տիկին, մենք առեւտրական  
գործոց չենք միջամտեր. այդ բանին համար  
աւելի լաւ կընէք եթէ Առեւտրական Պաշ-  
տօնէին դիմէք:

— Ո՛հ, խնայեցէք ինձ պարոն, ես առնե-  
լիքի տէր մէկը չեմ. բայց կը յուսայի որ ձեր  
գիտցածը չէք պահեր ինձմէ. մանաւանդ որ  
ինձ չնորհելիք տեղեկութիւննիդ յետագայ  
հարցմանցս հետ մօտէն յարաբերութիւն ու-  
նին և ես գաղտնապահ մէկն եմ. գթացէք  
ինձ, պարոն. դուք ալ կին մը և զաւակներ  
ունիք:

— Քանի որ կը պնդէք, ձեզի ծառայութիւն  
մը ըրած ըլլալու փափաքանօք գիտցածս կը-  
սեմ ձեզ. բայց սրտերնիդ քիչ մը ամուր  
բռնեցէք, տիկին, երիտասարդ ամուսիններ-  
նուդ գործարանը՝ իր հանդուցեալ բարի հօ-  
րը ժամանակի փառաւոր վիճակը շունի հի-  
մա, և վախ կայ որ քիչ ատենէն սեանկու-  
թիւն մը հրատարակուի. երեսուն տարիէ ի  
վեր այս առաջին անգամն է որ Տըլապուշ  
գործարանի փոխանակագրերէն մին ես դար-  
ձուած է Լօնտօնէն, անվճար մնալուն հա-  
մար:

— Ո՞րչափի կը հասնի անոր գումարը:

— 3200 Անգլիական ոսկոյ:

— Պիտի վճարեմ ես այդ գումարը, պարոն  
տեսուչ. կարծեմ թէ աղամանդներս այդ  
գումարէն աւելի կարժեն:

— Տիկին, ինչ որ պիտի ընէք ձեր գիտնա-  
լու բանն է. բայց պէտք է բարեկամաբար  
ըսեմ ձեզ թէ ընելիք զոհողութիւննիդ բա-  
ւական չի պիտի ըլլայ Տըլապուշ գործարանը  
մօտակայ կործանմանէ մը փրկելու:

— Այսու հանդերձ պիտի ընեմ ինչ որ կա-  
րելի է և ինչ որ ձեռքէս կուգայ, պարոն  
Տեսուչ:

— Ըսի արդէն որ ընելիքնիդ ձեր գիտնա-  
լու բանն է, ուրիշ ի՞նչ ունէիք հարցնելու  
ինձ:

— Միւս հարցումներս ուղղակի ձեր պաշտօնին կը վերաբերին, պարո՛ն. կուզէի հասկնալ թէ ո՞վ է այն Լուիզ անուն աղջիկը որ այնչափ ճոխ կեանք մը կանցունէ քաղաքին մէջ, և թէ ի՞նչ աղբիւրէ յառաջ եկած է իր հարստութիւնը:

— Բայց կրնամ հասկնալ թէ ի՞նչու համար կրնէք այդ հարցումները:

— Ընտանիքնիդ ներկային և ապագային հետ շատ մտէն առնչութիւն ունին անոնք, պարո՛ն Տեսուչ. կը յուսամ թէ լիովին կը հասկնաք թէ ինչ ըսել կուզեմ. մի կարծէք որ լոկ կանացի հետաքրքրութեան մը համար զձեզ անհանդիստ ընելու եկած եմ:

— Ստոյգ բան մը գիտէ՞ք, աղջիկս. մի վարանիք, զրուցեցէք, ինչպէս որ ըսիք ես ալ ընտանիքի տէր մարդ մ'եմ և հանգուցեալ Օկիլսթ Տըլլայուչի մի հաւատարիմ բարեկամը:

— Բաւական բաներ գիտեմ, պարո՛ն...

— Բայց ո՞րչափ բան գիտէք:

— Գիտեմ որ այրս այդ աղջկան համար կը կործանէ ինքզինքը:

— Իրեն բան մը ըսի՞ք:

— Ամեն բան ըսի:

— Ի՞նչ պատասխանեց:

— Ա՛յնպիսի փախուստի պատասխաններ

տուաւ որոնք իր մեղապարտութիւնը լիովին կը հաստատէին:

— Կը հասկնամ թէ ի՞նչ դժուար և միանգամայն ցաւալի կացութեան մը մէջ կը գըտնուիք, տիկին. ինչ որ ես ալ գիտեմ պիտի ըսեմ ձեզ. կարելի է որ չարիքին առաջըր առնելու կարող ըլլանք. ստոյգ է որ ամուսիննիդ յիմարաբար ինկած է այդ աղջկան ետեւէն, գրեթէ ամենեւին գործի գացած չունի. օրը քսան անգամ մը կանցնի անոր տան առջեւէն վարձու կառքով որ միշտ մի կնոյնը չէ. անխնայ շուայլութիւններ կրնէ, և այս վիճակին մէջ զարմանալի չէ որ գործարանը կործանի, և օր մը ինքն ալ առանց ստակի մնայ:

— Բայց ո՞վ է այդ Լուիզը:

— Գերեզմանատան մօտ բնակող աղքատ և կարուհի աղջիկ մ'էր այն. բայց կոմս Տըլլանթ կոչուած Գաղղիացի մը իր հարստութենէն 120,000 ֆրանք կտակեց անոր և այսպէս հարստացուց զանի:

— Սակայն կը ներէ՞ք, պարոն տեսուչ, Լուիզի վարած կեանքը միայն հարիւր քսան հազար ֆրանքի հարստութիւն ունեցող մեկուը կեանքը չէ:

— Ես ալ գիտեմ այդպէս ըլլալը:

— Միթէ կը ներէ՞ք որ հարցնեմ թէ այն

ճոխութեան բուն աղբիւրը ո՞րն է. ո՞հ, գը-  
թացէք ինձ, պարոն տեսուչ, կերպնում որ  
բոլորովին գաղտնապահ պիտի մնամ. բայց  
կազաչեմ ըսէք արգեօք ամուսնոյս հարս-  
տութիւնը Լուիզի ձեռամբ կ'ոչնչանայ կոր:

— Տիկին, արդէն ըսի ձեզի որ էթիէն ին-  
քն իր ձեռօքը կը կործանէ ինքզինքը, գոր-  
ծարանը բոլոր վին երեսէ թողելով և յիմա-  
բական շալլութիւններ ընելով. բայց ամե-  
նեւ ին իրաւունք չունիմ կարծելու թէ Լուիզ  
մասն ունեցած ըլլայ այդ բաներուն մէջ. իսկ  
գալով այն գեղանի աղջկան անցուցած խիստ  
ճոխ կեանքին, միայն սա չափը գիտեմ որ  
մեծ գումարներ կուգան իրեն Փարիզէն, թէ-  
պէտեւ չի կրցայ ստուգել թէ ո՞վ է այդ  
գումարները զրկողը. Պէլուառի սեղանաւո-  
րական տունը կը վճարէ միշտ Փարիզէն քաշ-  
ուած փոխանակագիրները և Լուիզի պաշտ-  
պանն եղող Մերունի Հայրը կը գանձէ զա-  
նոնք:

— Ո՞վ է այդ Մերունի Հայր ըսածնիդ,  
միշտ ճերմակ ձիու մը վրայ հեծնելով Լուի-  
զի կառքին ընկերացող ծերունի՞ն է:

— Այո՛, տիկին:

— Բայց ո՞վ է այդ մարդը, որ աւելի մը-  
տերմի մը ձեւերն ունի քան թէ սպասաւո-  
րի կամ նոյն իսկ պաշտպանի:

— Տիկին, երդում ըրիք որ գաղտնապահ  
պիտի մնաք, այս երդումնիդ մի մոռնաք,  
Մերունի Հայր կոչող մարդը դերեզմանա-  
տան պահնորդի նախկին օգնականն է, իր  
բուն անունն է Տամիէն, այս քաղաքի օստի-  
կանութեան նախկին մի յիսնապետը, որ  
տասն և հինգ տարի թիարանը կեցած է իր  
կինը սպաննած ըլլալուն համար:

— Թիապարտ մ'է այն, թիապարտ մը՛:

— Այո, և թիարանի 156 թիւը կը կրէ:

— Ո՞հ, Աստուած իմ, և այդպիսի ա՞նձ  
մ'է Լուիզի պաշտպանը:

— Է՛հ, պաշտպանէ մը աւելին է այն, Լուի-  
զի հայրն է:

— Լուիզի հայրը, իրեն հայրը, թիապար-  
տի մը աղջկան համար է, ուրեմն ամու-  
սինս կը կործանէ ինքզինքը. ո՞հ, ի՞նչ մեծ  
խայտառակութիւն. բայց դուք ալ ազնուա-  
կան մ'էք, պարոն, և Տըլապուշ ընտանիքին  
մի վաղեմի բարեկամը, ի՞նչպէս կրնաք հան-  
դուրժել այսպիսի խայտառակութեան մը և  
չէք ձերբակալեր այդ նախկին թիապարտը:

— Տիկին, եթէ ես ալ ազնուական մը և  
Տըլապուշ ընտանեաց մի նախկին և մշտնջե-  
նաւոր բարեկամն եղած չըլլայի, այս դադո-  
նիքներն ալ ձեզի չէի հաղորդեր. դուք խե-  
լացի էք, և կը յուսամ թէ ձեզի յայտնած

գաղտնիքներէս օգուտ մը կրնաք վայելել ձեր ամուսնոյն խելքը գլուխը բերելու, առանց ուէ մէկուն յայտնելու թէ ի՛նչ աղբիւրէ քաղած էք այդ գաղտնիքները. իսկ գալով ձերբակալութեան ինդրոյն, պէտք է ըսեմ՝ ձեզ, տիկի՛ն, որ Տամիէն՝ թիարանէն ելած օրէն ի վեր ոստիկանութեան խստութիւնը իր վրայ հրաւիրելիք ուէ գործի մը մէջ գտնուած չէ, Լուիզ ալ չը գիտեր որ անիկայ իր հայրն է և իր մօրը սպաննիչն ու թիապարտ մը:

— Շնորհակալ եմ, պարոն տեսուչ, հիմա կը հասկնամ թէ ինձ պատահած դժբաղդութիւնը ի՛նչ խայտառակ բնութիւն մը եւս ունի եղեր իր մէջ:

— Բայց խելացի և զգոյշ ըլլալու նայեցէք, տիկին:

— Այո՛, խելացի և զգոյշ պիտի ըլլամ, բայց երբէք իմ մտքէս չի պիտի կրնամ հեռացնել թէ անարգ հակառակօրդս, վատ մարդասպանի մը, կնասպանի մը, եղեռնագործի մը, և վերջապէս թիապարտի մը աղջիկն է. ո՛հ, շատ շնորհակալ եմ ձեզի, պարոն տեսուչ, որ բարեհաճեցաք այս տեղեկութիւնները շնորհել ինձ. հիմա կը հասկնամ թէ իմ պարտաւորութիւնս միայն անարգուած ազնուապետութեան մը վրէժը լուծելը չէ... ո՛հ, է-

թիւն, գոնէ աստիճանակցի մը համար կործանէիր ինքզինքդ... գոնէ հաւասարակցի մը զօհէիր. քու կինդ... ա՛հ, դուք պաշտպանեցէք զիս, պարոն տեսուչ, դուք պաշտպանեցէք խեղճ կին մը որ եթէ ուրիշ բան մ'ալ եղած չըլլար ձեզ համար, գոնէ ձեր ազնուապետական դասուն պատկանելու առաւելութիւնն ունի... ո՛հ, չի պիտի թողուք որ ձեր բարեկամին կինը, կործանելու վրայ եղող ազնուապետականի մը կինը, թիապարտի մը աղջկան ոտքին տակը ճզմուի:

— Խոհեմ եղիք, տիկին, և վստահ գտնուեցէք որ ի հարկին մեր պաշտպանութիւնը չի պիտի զլանանք ազնուապետականութեան... ո՛չ, ոչ, արդարութեան իրաւունքները տեղը տանելու համար:

Տեսակցութիւնը հոս կը վերջանար, և ոստիկանութեան ազնուապետական պարոն տեսուչը, իր վաղեմի բարեկամին հարսը կառաջնորդէր մինչեւ սրահին դուռը, յարգական խոնարհութիւն մը ընելէ ետեւ զանի բանալով:



Թ.

### ԿԱՆԱՑԻ ՓՈԹՈՐԻԿ ԸՐ

Անժէլիք երբ ոստիկանութեան պաշտօնա-  
րանի դռնէն դուրս կ'երնէր և իր կառքը կը  
բազմէր, գլուխը կրակներու մէջ էր: Նաեւ  
երբ կառապանը ամենայն յարգանք կը  
հարցնէր թէ անպարա՞ն պիտի վերադառնայ  
թէ ուրիշ տեղ մը պիտի երթայ, Անժէլիք  
բարկութեամբ պատասխանեց.

— Լուիզի բնակած տունը գիտե՞ս:

— Ապարա՞նը ըսել կուզէ՞ք, տիկին:

— Քեզի տան դասակարգութիւնը չեմ  
հարցնէր կոր, անպի՛տան:

— Իայց կը ներէք հարցմանս, տիկին, կը  
վախնամ որ ձեզի սխալ տեղ մը տանելով  
ձանձրոյթ կը պատճառեմ, միայն թէ այն  
գեղանի աղջկան տունը ըսել չէ՞ք ուզեր:

— Անզգամ, քեզի տգեղի և գեղեցիկ խօսք  
ընող կա՞յ, պարզապէս Լուիզ կըսեմ, չե՞ս  
հասկնար:

— Կը խնդրեմ ներեցէք տիկին, շատ Լու-  
իզներ կրնան գտնուիլ. միթէ տիկինը այն  
գեղանի... ոչ, ոչ, պարզապէս Լուիզ կ'ոչ-  
ուած աղջկան բնակարանը հասկցնել չ'ուզեր,  
որուն առջեւէն այնչափ շատ անգամ կանցնի

մեր տէրը հասարակ կառքով մը ինչպէս իմ  
պաշտօնակիցս Թովմաս կըսէ:

— Ա՛հ, անզգամ, որչա՛փ երկար կընես  
խօսքը... լա՛ւ, հոն վարէ կառքը: Ի՛նչ  
խայտառակութիւն Աստուած իմ. մինչեւ  
իսկ կառապանները հասկցած են մեր ըն-  
տանիքին խայտառակ վիճակը, կըսէր Ան-  
ժէլիք իւրովի երբ կառքը սրարշաւ կընթա-  
նար և կը տանէր զինքը իր այն գեղանի հա-  
կառակորդին ապարանն, այն ամենուն բե-  
րանը եղող ճոխ ու գեղեցիկ աղջկան, զոր  
իր եզունգներովը բզիկ բզիկ յօջօտել կու-  
զէր այն վայրկենին:

Կրկնակի նախանձը պատառ պատառ կը  
կտրատէր Անժէլիքի սիրտը և իր շունչը կը  
խեղդէր:

— Ա՛հ, ի՞նչու զոհեր էր Պէրթիէի անկեղծ  
սէրը հարուստի մը սիրոյն որք շատ անգամ  
անոր համար հրապուրիչ կրկան, որովհետեւ  
խաբեբայ հարստութիւն մը կայ անոնց ե-  
տեւը:

Վերջապէս կառքը հասաւ Լուիզի ապա-  
րանը, որոյ դռները կունակի վրայ բացուե-  
ցան անմիջապէս երբ դռնապանը տեսաւ որ  
եկող կառքը՝ մեծերու յատուկ նշան մը կը  
կրէր իր դռնակին վարի կողմը, և կառա-  
պանը՝ մասնաւոր համազգեստ մը հագած էր:



ձիշդ այն վայրկենին որ Լուիզի կառքն ապարանին դռնէն ներս ընդարձակ բակ մը կը մտնէր, ուրիշ հասարակ կառք մ'ալ անկեց դուրս ելնելու կը պատրաստուէր:

Անժէլիք նախ կանացի հետաքրքրութեամբ նայիլ սկսաւ թէ ո՞վ պիտի մտնէր այդ հասարակ կառքը, որ դուռն բաց կը կենար:

Բայց հետզհետէ սարսափելի կերպիւ խոշորնալ սկսան: Իր աչիւրը:

Ճանչեց առաջին մարդը որ կը մտնէր ալի կառքը:

Ծերունի Հայրն էր այն՝ անխուով և դուրսը վեր բռնած:

Իսկ երկրորդ մարդը, որ գլուխը վար ծըռած և տրտում դէմքով մը կը հրտուէր անոր, և կառքը նստելէն ետեւ անոր դուռը կը գոցուէր և ձիերը ճամբայ ելնելով ամեն բան աներեւոյթ կըլլար Անժէլիքի աչերէն... ո՛հ, Էթիէնն էր անիկայ. Անժէլիքի ամուսինը որ կը մեկնէր Լուիզի քովէն, անոր պաշտպանին ընկերակցութեամբը:

Ուրեմն ամին բան լմնցած էր:

Էթիէն այլ եւս Լուիզի կառքով պտտած տեղերը անոր չէր հետևեր, նոյնպէս անոր բնակարանին շուրջն ալ չէր դեղերեր, այլ պարզապէս կը մտնէր և սիրով կ'ընդունուէր

այն միւնոյն յարկին տակ, ուր կապրէր իր հակառակորդն եղող այն գեղանի Լուիզը:

Անժէլիք քիչ մնաց որ պիտի մարէր իր կառքին մէջ, բայց դռնակին բացուիլը ըսթափեցուց զինքը, որոյ առջեւ յարգանք կոպտէին խիստ վայելչապէս հադուած երկու սպասաւորներ:

Ճոխ կեանքի յայտարար այս նշանը, որնոր անշուշտ Էթիէնի շոյլութեան արդիւնքն էր, աւելի զայրացուց Անժէլիքը, որ հիմա կը տեսնէր թէ իր հակառակորդը իր մէ աւելի փայլուն կեանք մը վարելու կարող եղած էր նոյն իսկ այն ստակով զոր իրը համարելու շատ պատճառներ ունէր Անժէլիք անշուշտ:

Սրահ մը առաջնորդեցին զինքը, որ Լուիզ մեծ հիւրասիրութեամբ ընդունեց զինքը:

Տամիէնի աղկան քով երկու նորատի ըսպասուհիներ կային, որոնց հագուստին և շքեղ զարդարանացը նայելով, պէտք էր աւելի կոմսի մը աղջիկները համարել զանոնք քան թէ պարզ սպասաւորք:

Իսկ Լուիզ իր փայլուն մտաբօեայ ծանրագին շրջագոյնտին և թանկագին գոհարեղէններու փայլակներուն մէջ այնչափ գեղանի կ'երևէր որ Անժէլիք Էթիէնի յիմարութեանց և անհաւատարմութեան ներքեւ միտում մը զգաց:

Բայց նախանձը շուտով յաղթեց իր նախանկախ զգացմանցը, և ո՞վ գիտէ, եթէ այն երկու նաժիշտները ներկայ գտնուած չլլալին, իր ոտխին վրայ յարձակելու և զանի սպաննելու բուն տենչ մ'ալ զգաց գուցէ:

Ըստ ժամանակին նորաձեւութեան, Տաճկական մեծադին կերպաններով զարդարուած բազմոց մը կար սրահին այն անկիւնը, որ խիստ վայելչապէս շտկուած ընդարձակ պարտէզի մը վրայ կը նստէր:

Անժէլիք այս բազմոցին պատուոյ տեղը հրաւիրուեցաւ, և երկու նորատի կանայք դէմ առ դէմ նստան այս առաջին պաշտօնական այցելութեան հանդիպելը վայելելու, թէպէտեւ առաջին անգամն էր որ Լուիզ կը տեսնէր Պէրթիէի նախկին սիրուհին, և անոր այն միեւնոյն Անժէլիքն ըլլալը չէր գիտեր, որ անխղճաբար մատնած էր պարկեշտ գործաւորապետը:

Անժէլիք՝ էթիէն Տըլապուշի կիսն եղած ըլլալը յայտարարած ատեն, Լուիզ՝ թէպէտ խիստ քաղաքավարական այլ ա՛յնչափ անտարբեր կերպիւ ընդունեց այդ յայտարարութիւնը որ Անժէլիք զգաց թէ իր երակներուն մէջ չըման ընող արիւնը դուրս ցայտելու չափ բորբոքած էր:

— Օրիորդ, միթէ լաւ չէ՞ք ճանչեր ամուսինս:

— Այդ պատիւը ունեցած չեմ դեռ, տիկին:

Այս անպատկառ պատասխանին վրայ Անժէլիքի համբերութեան մնացեալ մասն ալ սպառեցաւ:

— Կը խնդրեմ կրկնեցէք, օրիորդ, էթիէն Տըլապուշը իրօք չէ՞ք ճանչեր:

— Իւր անունը շատ անգամ լսած եմ, տիկին, բայց ինչպէս որ քիչ մը առաջ ըսի, զինքը անձամբ ճանչելու պատիւն ունեցած չեմ դեռ:

— Եւ սակայն այդ չի ճանչած մարդերնիդ ձեր քովն ընդունելու բարեսրտութիւնն ունեցաք, օրիորդ, կերելի թէ իմացածէս աւելի մարդասէր էք:

Լուիզ՝ այս անակնկալ յարձակման վրայ գունատեցաւ. յարձակում մը որ ուղղակի իր պատուոյն դէմ ուղղուած էր, վարանոտ և հարցական կերպիւ իր երկու նաժիշտներուն երեսը նայեցաւ, որոնք գունատած չէին, այլ երեսնց բարկութենէն բոլորովին կարմրած, և գողալու սկսող ձայնով մը պատասխանեց:

— Տիկին, կերելի թէ սխալ տեղեկութիւն տուեր են ձեզի, հիմա կը հասկնամ ձեր անակնկալ զայրոյթին պատճառը, և կը ներեմ ձեզի. ես այս տունը գալէս ի վեր մի-

միայն մէկ այր մարդու մը այցելութիւնը կ'ընդունիմ և ան ալ իմ պաշտպանս է, այսինքն Ծերունի Հայրը:

— Կը ստէք, օրիորդ, գոչեց Անժէլիք զայրագին:

Լուիզի դեղնութիւնն ալ այս անգամ կը բակի կարմրութեան փոխուեցաւ:

— Ես երբէք ստած չեմ, տիկին. առաջին անգամն է որ այս բառը կը գործածուի իմ դէմս. և եթէ ինձ հիւր եկած չըլլայիք...

— Ի՞նչ պիտի ընէիք՝ եթէ ձեզի հիւր եկած չըլլայի. զիս ձեր ներկայութենէ վաճառե՛լ պիտի տայիք:

— Ի՞նչ իմ տեղս ըլլայիք՝ ի՞նչ պիտի ընէիք:

— Այրը ներս ընդունելու անամօթութիւնըն ունենալէս ետեւ անոր կիներն ալ չի վրաճնտելու քաջութիւնն ունենալու պիտի աշխատէի:

— Ալ բաւական է, տիկին. եթէ յիմար մը չէք, կը խնդրեմ զիս առանձին թողէք և տեղերնիդ դացէք. կրկին անգամ կըսեմ ձեզ թէ ամուսիննիդ երբէք ճանչած չեմ:

— Ո՛հ, ո՛հ, ի՞նչ համոզիչ խօսքեր, սրտնք սակայն միմիայն ձեզի պէս հրապուրիչ կանանց բերանը արժէք մը ունին:

Լուիզ չի պատասխանեց:

Այլ իր ձեռները դողդղալէն կրնար հասկցուիլ որ ի՞նչ բուռն տագնապներու մէջ կը գտնուէր իր գայրոյթը զսպելու համար:

Ոտքի ելաւ Յիմար Յիսնապետին աղջիկը, և իր սենեկապանուհիներուն դռնաբացով:

— Կը խնդրեմ, տիկինը մինչեւ իր կառքը առաջնորդեցէք, ըսաւ, և դուրս ելնելու կը պատրաստուէր:

— Օրիորդ, մինչեւ որ դժբաղդի բացատրութիւն մը չընդունիմ ձեռնէ՛ չի պիտի մեկնիմ ասկից, աղաղակեց Անժէլիք եւս կատարի վագրի մը պէս տեղէն ցատկելով և Լուիզի ճամբան կտրելով:

Սենեկապանուհի աղջիկներէն մին իր տիրուհւոյն քով վազեց զանի պաշտպանելու համար, իսկ միւսը զանգակի ժապաւէնին քով կը դիմէր:

— Բայց ի՞նչ կուզէք ինձմէ, տիկին, ըսաւ Լուիզ կենալով և Անժէլիքի երեսն ի վեր նայելով:

— Ամուսինս կուգեմ, օրիորդ:

— Եթէ ամուսիննիդ ուրիշներու քով փրնտուելու պատճառ մը ունիք, սխալ տեղ եկած էք, տիկին, ես ձեր ամուսինը երբեք ճանչած չեմ:

— Այսու ամենայնիւ ճիշդ հիմա ձեր քովէն կը մեկնէր այն:

— Իմ քովէ՞ս կըսէք :

— Այո՛, ձեր քովէն, որուն ես ինքս ակա-  
նատես եմ: հիմա կառքով կը մեկնէր այն,  
Ծերունի Հայր կոչած անձերնիդ իր քովն ու-  
նենալով:

Լուիզ աթոռի մը վրայ ինկաւ, և իր սե-  
նեկապանուհիներէն մէկուն հրամայեց որ եր-  
թայ Ծերունի Հայրը իրեն կանչէ թէ որ ա-  
պարանին մէջ էր. եթէ ոչ դռնապանին ըսէ  
որ անմիջապէս վեր գայ:

Անժէլիք յաղթական լռութիւն մը կը պա-  
հէր:

Իսկ Լուիզ՝ բարկութենէն պակունքը կըր-  
ծելով անձայն կ'սպասէր:

Վերջապէս ճոխ համազգեստ մը հանգած  
քառանամեայ մարդ մը ներս մտաւ սրահէն  
և գլխարկը հանեց:

Այս անձը դռնապանն էր, որուն ետեւէն  
ներս կը մտնէր զանի կոչող սենեկապանու-  
հին:

— Ձեր հրամանները, ազնիւ օրիորդ, ըսաւ  
դռնապանը յարգական խոնարհութիւն մը  
ընելով:

— Ծերունի Հայրը դո՞ւրս ելաւ:

— Այո՛, օրիորդ. կառքով եկած պարոնի  
մը հետ մեկնեցաւ քսան վայրկեան առաջ:

— Ո՞վ էր այն պարոնը:

— Պարոն էթիէն Տըլապուշը:

Անժէլիք արհամարհոտ նայուածքով մը  
Լուիզի երեսը նայեցաւ:

— Պարոնը որչա՞փ ատեն կեցաւ հոս:

— Ճիշդ տասնեւվեց վայրկեան:

— Ապարանին ո՞ր սենեակը:

— Ծերունի Հօր սենեակը:

— Քու աչերովդ տեսա՞ր հոն ըլլալը:

— Այո՛, օրիորդ, որովհետեւ Ծերունի Հօր  
սենեակը բակին վրայ կը նայի և իմ սենեկէս  
կը տեսնուի:

— Լա՛ւ, քեզի ուրիշ հարցում մը չունիմ,  
կրնաս մեկնիլ. բայց Ծերունի Հայրը վերա-  
դառնալուն պէս իմ կողմանէ աղաչէ իրեն որ  
անմիջապէս զիս տեսնէ:

Դռնապանը հազիւ դուրս ելած էր, և ա-  
հա Անժէլիք մէկէն ի մէկ Լուիզի առջեւ ծըն-  
գան վրայ կուգայ, և հակառակ քիչ մը ա-  
ռաջ ցոյց տուած խորխտ կերպարանքին, ա-  
ղէքսարկու ձեւով մը ձեռները իրար կը միա-  
ցնէ, և,

— Գթա՛ իմ վրայ օրիորդ, կ'աղաղակէ:

— Բայց ես ի՞նչ կրնամ ընել ձեզի:

— Մտածեցէք որ ամուսնոյս կինը ըլլալէ  
զատ, նաեւ անոր աղջկան ալ մայրն եմ. դը  
թացէք ինձ, և ամուսինս ինձ վերադարձու-  
ցէք:

— Տիկին, ձեր ականջովն իսկ իմացաք թէ ամուսիննիդ միմիայն Ծերունի Հօր հետ տեսնուելու եկած է հօս և ես երբէք չեմ տեսած իր երեսը:

— Սակայն ձեզի համար է որ ամուսինս կը կործանէ ինքզինքը, օրիորդ:

— Ինձի՛ համար:

— Այո՛, և այս գայթակղական բանը չի գիտցող չի կայ քաղաքին մէջ:

— Ո՛վ Աստուած իմ, բայց միթէ յիմա՞ր էք տիկին:

— Ո՛չ, յիմա՛ր չեմ ես. և ձեր դռնապանին տուած պատասխաններուն՝ առաջուց պատրաստուած խեղկատակութիւն ըլլալն դատելու չափ խելք ունիմ վրաս գոնէ:

— Բայց տիկին, զգուշացէք, տանս մէջ էք, և տանս մէջ զիս կը նախատէք:

— Ո՛հ, գթացէք խեղճ կնոջ մը վրայ, որ երբէք չարութիւն մը ըրած չէ ձեզի:

— Տիկին, եթէ վիճակնուդ վրայ գթացած ըլլայի, տանս մէջ զիս նախատելուդ չէի ներեր մինչեւ հիմա:

— Լաւ, կը ծաղրէք զիս, այնչէս չէ՞. ամուսինը կործանելէ ետեւ իր կինն ալ կը ծաղրէք... բայց մտածեցէք անգամ մը որ ծաղրած կիներնիդ տալուին կարողութիւն ունի իր վրէժը լուծելու, թէպէտեւ դուք

իրմէ աւելի հարուստ էք այսօր անոր ամուսնոյն շնորհիւ, գուցեց Անժէլիք բարկացայտ աչերով ոտքի ելած ատեն:

— Ալ դուրս ելէք, տիկին, բաւական համբերեցի, դուրս ելէք, ապա թէ ոչ հիմա Ծերունի Հայրը գալով զձեզ դուրս հանելու յարմար եղանակը գիտէ:

— Ո՞ր Ծերունի Հայրը, ձեր պաշտպանը:

— Այո, տիկին. պէտք է որ զգուշանաք իրմէ:

— Այո, գիտե՛մ, կին մը սպաննելու եղանակը շատ լաւ գիտէ ան:

Անժէլիքի խօսքին մնացեալ մասը իր բերնին մէջ մնաց:

Սենեկին դուռը՝ անսովոր դրդմամբ բացուեցաւ, և Յիմար Յիմնապետը ներս մտաւ զայրագին և վազելէն յոգնած, ի տես օրոյ, երկու սենեկապանուհիք գրեթէ զարհուրած դուրս ելան:

— Որո՞ւ համար կըսէիք, տիկին, թէ Ծերունի Հայրը կին մը սպաննելու եղանակը շատ լաւ գիտէ:

— Ձեզի համար կըրօնի, պարոն, պատասխանեց Անժէլիք նախանձոտ կնոջ մը յատուկ բարկութեամբ որ իր խաբուելէն յառաջ եկած բնական յուզման սաստկութեան հետեւութիւնն է:

— Զիս կը ճանչէ՞ք, տիկին Տըլապուշ :

— Ո՛հ, ո՛հ, կը տեսնեմ թէ օրիորդին պաշտպանը աւելի համարձակութիւն ունի զիս ճանչելու խոստովանութիւնն ընելու :

— Խնդիրը զձեզ ճանչելու վրայ չէ, տիկին : Ըսէք թէ դուք զիս կը ճանչէ՞ք :

— Այո, կը ճանչեմ զձեզ, որ Մերուսի Հայր պատուանունին տակ ծպտող նախկին թիապարտ մ'էք :

— Նախկին թիապարտ մը :

— Այո, նախկին թիապարտ մը, Յիմար Յիսնապետ Տամիէնը և... Լուիզի հայրը, որուն մայրը սպաննեցիք :

Տամիէն՝ գրեթէ ինքզինք կ'օրսնցուցած էր :

Յիրաւի դարձեալ նախկին Յիմար, Յիսնապետն էր այն, և անշուշտ մէկ հարուածով պիտի ջախջախէր Անժէլիքի գլուխը. եթէ ուրիշ ողորմելի և աղէկաուր ձայն մը իր անմիջական ուշադրութիւնը յանկարծական կերպիւ չի դարձներ մի այլ կողմ :

Այդ աղէկաուր ձայնը Լուիզի նուազեալ ձայնն էր որ լիմ հայրս է եղեր... մօրս ըստ պաննիչը... և ես՝ մարդասպանի մը զաւակը՝ ըսելով կը մարէր և ախտէն վար կիւնար :

Լուիզի անկման և Տամիէնի խառնաշփոթ

այլ մեծադղորդ քայլերուն ձայնը երկու սենեկապանուհիները և սպասաւոր մը արտօրնօք ներս վազցուցին :

Իսկ էթիէն Տըլապուշի կինը Անժէլիք՝ յաղթական հպարտութեամբ ոտքի վրայ կայնած, իր տուած սուկալի հարուածին արդիւնքները տեսնելով կը հրճուէր, և քիչ մը առաջ սպառնացած վրէժին հետեւանքները կը վայելէր, անօրինակ ցնծութեամբ :

Ժ :

### ՅԱՂԹԱՀԱՐԵԱՒ ԵՄՆԱԿԱՆ

Տամիէն, իր աղջիկը երկու սպասուհիներուն խնամոցը յանձնելէ ետեւ ծանրութեամբ Անժէլիքի քով եկաւ :

Էթիէն Տըլապուշի կնոջ վայրենի ուրախութիւնը անցեր, երեսը բոլորովին տօգուններ, և բոլոր մարմինը զող ելեր էր, երբ ծերունւոյն հանդարտ քայլերով իրեն մօտեւնալը տեսեր էր :

Վայրկեան մը այնպէս կարծեց թէ նախկին յիսնապետը մէկ կռուփի մը հարուածով զինքը սպաննել պիտի ուզէր :

Մի քանի քայլ ետ ետ գնաց :

— Մի վախնար ինձմէ , ըսաւ ծերունին այնպիսի ձայնով մը , որուն մէջ մարդասպանի շեշտը չի կար , և որ սակայն անկից ոչ նուազ սոսկալի տեսակ մը հանդարտ բնութիւն ունէր :

— Ի՞նչ կուզէք ինձմէ , հարցաւց Անժէլիք դողդոցացող ձայնով մը :

— Չեզի ըսելիքներ ունիմ , տիկին , բայց պէտք չէ որ ուրիշ մ'ալ իմանայ , հրամայեցէք իմ մասնաւոր սենեակս երթանք :

— Բայց կը վախնամ ձեզմէ , պարո՞ն , առանձին տեղ մը գտնուիլ ձեմ ուզեր ձեզի հետ :

— Սակայն պէտք է որ դաք , ըսաւ Տամիէն ահարկու ձայնով մը , և Անժէլիքին թեւէն բռնելով զանի դէպի դուռը հրեց :

Պէտք էր հնազանդիլ :

Երբ բակին վրայ նայող մասնաւոր սենեակը մտան , Տամիէն աթոռ մը ցուցնելով էթիէնի կինը անոր վրայ նստեցուց :

Յետոյ գնաց սենեակին դուռը խնամով գոցեց , որով քիչ մտատանջութիւն չէր պատճառեր սարսափահար կնոջ , և այնուհետեւ եկաւ Անժէլիքի դիմացը ստքի վրայ կայնեցաւ , թեւերը խաչածեւ ծալլած իր կուրծքին վրայ :

— Տիկին , նոյն իսկ ձեր դժբաղդութենէն էր որ այս տունը եկած ատեննիդ ներկայ չի գտնուեցայ զձեզ արգիլելու իմ աղջիկս տեսնելէ և անոր հետ խօսելէ :

— Ի՞մ դժբաղդութենէս էր որ այնպէս պատահեցաւ թէ ձեր դժբաղդութենէն :

— Անտարակոյս ինձ համար ալ դժբաղդութիւն մ'էր այդ բանը , բայց անդարմանելի չէ , մինչդեռ ձեր դժբաղդութիւնը անդարմանելի պիտի ըլլայ . կարծեցիք թէ մէկ հարուածով թէ զիս և թէ աղջիկս կործանելու կարող պիտի ըլլայիք . բայց պէտք է գիտնաք որ եթէ այսօր չիմանար Լուիզ թէ իմ բուն անունս Տամիէն է , թէ կնասպան մը և նոյն իսկ մօրը սպաննիչն եմ , թէ թիապարտ մ'եմ , և թէ իր բուն հայրը կը գլուխուիմ , ուրիշ օր մը անշուշտ պիտի իմանար զանոնք , և ինքզինքս աղջկանս առջեւ արդարացնելու համար ինչ որ պարտաւոր պիտի գտնուէի ընել օր մը , այդ բանը այսօրէն ընելու պարտաւորուած կը գտնուիմ . ահա եղածը միմիայն այսչափ է , այսինքն ժամանակի տարբերութեան խնդիր մը միայն :

— Բայց ձեր աղջիկը իմ ամուսինս հրապուրեց , կործանեց զայն , իրաւունք ունէի իմ վրէժս լուծելու , և կը տեսնէք թէ ի՞նչ ըսքանչելի կերպիւ յաջողեցոյ նպատակիս մէջ :

— Մարդասպանի մը զուաւին ըլլալը անդորմարար իր երեսը զարնելով, ասպէս չէ՞:

— Ս,յո, քանի որ թիապարտի մը և մարդասպանի մը զուաւին ըլլալով, բոլոր Գրուքսէլի ազնուապետական դասու տիկնայց վերայ շուք ձգելու հպարտ ճոխութեան ձեւ մը կը կրէր իր վրայ:

— Բայց տիկին, կը մոռնայիք որ Լուիզաուանց իր գիտնալուն թիապարտի մը և մարդասպանի մը աղջիկն ըլլալով հանդերձ այն ազնուապետական դասու տիկնաներէ ոմանց կեանքէն անհուն կերպիւ աւելի անմեղ կեանք մը կը վարէր, գոնէ իր խղճին վրայ արեան բեռ մը չունենալով:

— Անժէլիքի գոյնը աւելի եւս նետեց:

— Չեմ հասկնար թէ ի՞նչ ըսել կուզէք:

— Տիկին, եթէ կը ներէք, միտքս լաւ մը բացատրելու համար պատմութիւն մը ընեմ ձեզ:

— Թէ որ հաճելի պատմութիւն մ'է՛ պատրաստ եմ ձեզի մտիկ ընելու:

— Նախ և առաջ սա անհուն հաճոյքը կը պատճառեմ ձեզ ծանուցանելով որ աղջիկս երբէք չէ տեսած ձեր ամուսնոյն երեսը, թէպէտեւ անիկա ինքզինքը Լուիզի ցուցնելու և անոր հաճելի կացուցանելու համար ըրաւ այն ամեն բաները, զորս բոլոր յիմար

մարդիկ սովորած են ընել ինքզինքնին և իրենց ընտանիքները կործանելու համար:

— Սուտ կը խօսիք, պարոն:

— Տիկին, թէպէտեւ կնասպան մը, մարդասպան մը, և թիապարտ մը եղած եմ, բայց ով որ կըսէ ինձ թէ ստախօս մ'եմ, անոր լեզուն ջահճախելու ամեն իրաւունքն ունիմ, և եթէ դուք ալ կին մ'եղած չըլլայիք, շուտով պիտի գզջայիք այնպիսի խօսք մը բերններնուդ հանելու անխոհեմութիւնն ունեցած ըլլալնուդ համար:

— Բայց աղջիկնիդ ալ միեւնոյն խօսքերը կը կրկնէր ինձ. մինչդեռ ես բուն իմ աչերովս տեսայ որ էթիէն այս ապարանէն կը մեկնէր դրեթէ կէս ժամ առաջ, և որուն դուք ալ կ'ընկերանայիք անձամբ և... պէ՞տք է ըսեմ... այո՛, զուարթ դիմօք իսկ:

— Ըսածնիդ ճիշդ է, տիկին. ձեր ամուսնիք ինձ հետ կը մեկնէր ասկից կէս ժամ առաջ, և արդէն իմ ընելիք պատմութիւնս ալ ճիշդ այդ այցելութեան վայրկենէն կ'սկսի:

— Հետաքրքրութիւնս կը շարժէք, պարոն:

— Աւելի լաւ. հիմա ինձ մտիկ ըրէք, ձեր ամուսնիք, Լուիզի ուշադրութիւնը իր վրայ դրաւե՞լ և անոր հետ խօսելէ իր յոյսը բոլորովին կտրելով և արդէն կործանման վիճակին հասած ըլլալով, կարճ և կտրուկ



ճամբայ մը կը բռնէ, թէպէտեւ առանց իմ հրամաննիս ուէ մէկը չի կրնար աղջկանս սենեակը մտնել, այսու ամենանիւ էթիէն խիստ զօրաւոր պատճառ մ'ալ ունէր ինձ դիմելու նախապէս: Տեսած էի զինքը խիստ շատ անգամ որ կառքով մը աղջկանս կառքին կը հետեւէր՝ քանի անգամ որ պտոյտի մը կելլէինք, այս տանը առջեւէն ալ գրեթէ ամեն օր կանցնէր նոյնպէս վարձու կառքով մը: այլ երբէք ասոր վրայօք բան մը չէի ըսած ոչ իրեն և ոչ ալ իմ աղջկանս: Այսօր առաջին անգամն էր որ ձեր ամուսինը յանդընած էր Լուիզի տանը դռնէն ներս մղել իր կառքը:

— Այո՛, այո՛, կը հաստատէք ինչ որ կը պնդէի թէ ձեր աղջկանը և թէ ձեզի:

— Հանդարտութեամբ մտիկ ըրէք պատմութիւնս, տիկին, և քիչ ատենէն պիտի տեսնէք թէ ձեր ամբողջ պաղարիւնութիւնը ժողուելու պէտքը պիտի զգաք անկից բառ մ'ալ չի կորսնցնելու համար:

— Ո՛հ, տարակոյս չի կայ ատոր: ձեր պատմութեան խիստ հետաքրքրական կէտին կը հասնիք: Է՛հ, տեսնենք, ձեզի հետ ունեցած խորհրդաւոր տեսակցութիւնը ո՛ւր հանգեցաւ:

— Մաղրաբանութիւննիդ դադրեցնէք ա-

ղէկ կըլլայ, տիկին: դէմքերնուդ շինծու զըռարթութիւնը կրնայ մէկէն ի մէկ յուսահատութեան փոխուիլ:

— Օ՛հ, օ՛հ, կը տեսնեմ որ խնդիրը երթալով ծանր կերպարանք մը կառնէ: շարունակեցէք, կաղաչեմ, շատ հետաքրքրուեցայ:

— Ճիշդ հիմա աւելի պիտի հետաքրքրուիք, տիկին: էթիէն, պարոն էթիէն, կամ եթէ կուզէք ազնուապետականն էթիէն կը հաճի ուղղակի այցելել կնասպան, մարդասպան և թիապարտ նախկին յիսնապետն Տամիէն: Քաղաքավարութեամբ կրնդունիմ զինքը, և կը նստեցնեմ ճիշդ այն տեղը ուր նստած էք դուք հիմա, և ես ալ թեւերս այսպէս խաշածեւ կուրծքիս վրայ գրած ոտքի վրայ կը կանգնիմ ճիշդ այս տեղը, ուր հիմա կանգնած կը կենամ: Անմիջապէս նպատակին կը դիմենք, որովհետեւ չի վայել որ էթիէնի պէս մեծափարթամ մարդ մը ինձ պէս սինլըքորի մը հետ երկար բարակ ձեւակերպութիւններով ժամանակ անցունէ: Լուիզը տեսնել կուզեմ կրօնէ ինձ մէկէն ի մէկ: Ես ալ առանց խռովելու կը պատասխանեմ թէ անկարելի է իր խնդիրը կատարել:

Ասոր վրայ էթիէն կը զայրանայ: «Կործանեցայ այն անգութ աղջկան համար: ալ համբերութիւնս հատաւ: եթէ զիս անմիջապէս

իրեն չի ներկայացնէք, ես ալ պիտի ըսեմ Ոստիկանութեան Տեսչին ինչ որ դիտեմ ձեր անձին նկատմամբ կըսէ: Կը կարծեր թէ այս սպառնալիքէն տակն ու վրայ պիտի ըլլայի, իր ստիցը պիտի խնայրհէի, չնորհ պիտի խնդրէի, և անմիջապէս զինքը իմ աղջկանս քով պիտի տանէի: Բայց ես ասոնց մէկն ալ չընելով սպասաւորս կանչեցի և հրամայեցի որ պարոն Էթիէնի կառքը պատրաստեն: Այս անխուռովութեանս և հրամանիս վրայ ամուսիննիդ ապշած մնաց, Իրեն խնայրհութիւն մ'ընելով ըսի թէ, պարապ բան էր այդ եւս տեսակցութիւնը երկարել, և խիստ ուրախ պիտի ըլլայի եթէ միատեղ ներկայանայինք Ոստիկանութեան պարոն Տեսչին: Էթիէնի զարմանքը աւելի եւս շատցաւ այս անխուռով յայտարարութիւնս իմանալուն վըրայ: Բայց ես սենեկին դուռը բացած էի արդէն, և անկից դուրս ելած: Գործարանապետը պարտաւորեցաւ ոտքի ելնելու, միատեղ մտանք իր կառքը... և ես իրմէն առաջ... եթէ կը կամիք հասկնալ, և Ոստիկանութեան Պաշտօնատան ճամբան բռնեցինք: Ինչ մը տեղ յառաջանալնէս ետեւ Էթիէն մէկէն ի մէկ, և իր կարծեօքը աղուապէս երեսս նայեցաւ:

— Եթէ ինձ ըսելիք մը ունիք, կառքը կե-

ցոռցէք, որպէս զի անիւնեղուն ճայնը չի խափանէ խօսքերնիդ ըսի:

Էթիէն՝ կառապանին նշան մը ըրաւ և կառքը կեցաւ:

— Գիտէք անշուշտ թէ սը կերթանք կոր ըսաւ:

— Այո՛, գիտեմ, Ոստիկանութեան Պաշտօնատունը կերթանք կոր պատասխանեցի:

— Բայց գիտէ՞ք թէ Ոստիկանութեան պարոն Տեսչին ինչեր պիտի ըսեմ:

— Շատ հաւանական է որ գիտնամ: Բայց աւելի աղէկ է որ դուք ըսէք:

— Պիտի ըսեմ թէ դուք նախկին Տամիէն Յիօնապետն էք:

— Ուրի՛շ:

— Թէ կնասպան մ'էք:

— Ասկի՛ց զատ:


— Թէ թխապարտ մ'էք:

— Ամենքը ա՛յսչափ:

— Բայց դուք յիրաւի յիմար մ'էք:

— Բայց ինչո՞ւ յիմար ըլլամ պարոն: Ինչ որ պիտի ըսէք Ոստիկանութեան պարոն Տեսչին, նոր բան մը չէ այն, արդէն ինքը անշուշտ գիտցած ըլլալու է բոլոր ասոնք, քանի որ Ոստիկանութեան Տեսուչ մ'է ինքը:

— Բայց աղջիկնիդ ալ պիտի իմանայ այս խայտառակութիւնը, որովհետեւ պիտի ըսեմ



նաեւ թէ Լուիզ բուն ձեր աղջիկն է, այսինքն ձեր սպաննած կնոջ աղջիկը:

— Ահ, եթէ կուզէք որ հին պատմութիւն մը նորէն կրկնուի, և եթէ Ոստիկանութեան պարոն Տեսուչն ալ չի պիտի ձանձրանայ իր գիտցած բանը կրկին անգամ մտիկ ընելէ, շարունակենք ճամբանիս:

— Բայց լաւ մտածեցէք պարոն յիսնապետ, գուցէ զիս ուղղակի ձեր աղջկան ներկայացնելով այս անհաճոյ դէպքին առաջքն առնէիք աւելի լաւ կըլլար:

— Ո՛չ, պարոն էթիէն, աւելի լաւ է որ ճամբանիս շարունակենք:

— Բայց կըսէիք թէ Ոստիկանութեան պարոն Տեսուչը պիտի ձանձրանայ հին պատմութեան մը կրկնութեամբը:

— Հոգ չէ, զինքը միսթարելու համար իր չը գիտցած մէկ պատմութիւնն ալ ես կը պատմեմ իրեն:

— Ի՞նչ տեսակ պատմութիւն:

— Է՛հ, զորօրինակ, Պէրթիէի մը պատմութիւնը... բայց ինչո՞ւ համար տոգունեցաք տիկին:

— Չէ, տոգունելու պատճառ մը չունիմ, պատասխանեց Անտէլիք ածապարանօք:

— Լաւ, թող այնպէս ըլլայ. բայց երբ Պէրթիէի անունը տուի, էթիէն ալ ձեզի պէս

տոգունեցաւ... ինչ որ է, հարցուց թէ Պէրթիէն ո՞վ էր:

— Ասինքն այն պարկեշտ դորժաւորապետը որ, ըսի, դուք և Անտէլիք, տիկին Ֆրանսուազի հետ մեղսակցութեամբ Լըլիէնէ անունը սրիկայի մը ձեռօք սպաննել տուիք, և սպանութեան դինը եղող 20000 Ֆրանքը դուք վճարեցիք... բայց ի՞նչ կըլլաք, տիկին, ո՛հ, Աստուած իմ, մարելիք կողմէ վրանիդ. կուզէ՞ք որ սոյատու հինքերը կանչեմ:

— Ո՛չ, ոչ, մարդ մի կանչէք, ըսաւ ողորմելի կինը մարած ձախով մը:

Տամիէն քիչ մը ատեն լուս սպասեց ու պէս զի Անտէլիքի յուզմանքը քիչ մը թեթեւնայ:

— Բայց էթիէն ի՞նչ պատասխանեց այդ զրպարտութեան:

— Է՛հ, տիկին, առաջին անգամ ինքն ալ բողոքեց անոր դէմ. բայց երբ կը պնդէի որ ճամբանիս շարունակենք դէպի Ոստիկանութեան պաշտօնատունը, աեռայ որ յուսահատօրէն գլուխը քերել սկսելով կը մտածէր. կերելի թէ ամուսիննիդ ձենէ աւելի խելացի է, տիկին. կարճ սակարկութեան մը մտանք իրեն հետ. դուք կարծեցիք թէ այսօրուան դորժած խայտառակութիւններով

նիդ թէ զիս և թէ աղջիկս պատշաճ և երեւակայական յանցանքի մը համար վրէժնիդ լուծած էք, մինչդեռ ճիշդ կէս ժամ առաջ ամուսիննիդ իմ ըւութիւնս դներու համար դրած պայմանս սիրայօժար կընդունէր ի վերջնական կործանումն ձեր, ամուսիններունդ, և փոքրիկ աղջիկնուդ:

— Ի՞նչ ըրաւ, գոչեց յուսահատ կիներ գըրեթէ խելակորոյս:

— Յանձն կառնուր 200,000 ֆրանքի փոխարէն Լուիզի վաճառել այն կործանեալ գործարանը, որ Պէրթիէի ժամանակ կէս միլիոն ֆրանք եկամուտ կը բերէր:

— Ա՛հ, ա՛հ, անկարելի բան է այդ. ամուսինս յիմարացած ըլլալու է:

— Ո՛չ, տիկին, յիմարացած չէ, արդէն այն գործատունը այն աստիճանի կործանման մէջ է, որուն համար վճարուելիք երկու հարիւր հազար ֆրանքը կընայ աւելի ողորմութիւն մը նկատուիլ քան թէ իր արժանաւոր գինը. բայց կը յուսամ որ Լուիզի պաշտպանը պիտի կարենայ վերստին բարձրացնել զանի այն փառաւոր վիճակին, որուն մէջ կը գտնուէր բարեյիշատակ Օկիլսթ Տըլապուշի և Պէրթիէի ժամանակները... բայց այնչափ միաճապարէք, տիկին, ձեր ամուսինը ուրիշ աւելի ծանր պայման մ'ալ ընդունած է:

— Սուելի ծանր պայման մը:

— Այո, տիկին, կամաւոր աքսոր մը, շարաթէ մը պիտի մեկնինք Պրիւքսէլէն, մէկ մ'ալ հոն ստք չի կոխելու պայմանաւ. և եթէ մինչեւ շարաթ մը գործարաննիդ Լուիզի ըստացուածքը չըլլայ և այս քաղաքէն չի մեկնիք, ուր պէտք չէ որ այլ եւս կենաք քանի որ կնասպան և թիապարտ Տամիէնի աղջիկը հոն կը բնակի, կը հասկնա՞ք, մինչեւ շարաթ մը եթէ այս պայմանները ի գործ չի դրուին, Ռատիկանութեան պարսն Տէտուչը պիտի տեղեկանայ թէ ինչպէ՞ս էթիէն Տըլապուշի հետ միանալով ձեր նախկին սիրահարը սպաննել տուած էք: Ա՛լ հիմա կընաք մեկնիլ, տիկին, որպէս զի նոյն իսկ ձեր ամուսնոյն բերնէն իմանաք թէ ստախօս մը չեմ ես, և ինչ որ պատմեցի ձեզի, բաւ առ բաւ կատարելապէս ստոյգ են. կը ցաւիմ վիճակնուդ վրայ, թէ պէտեւ ամեն կերպիւ արժանի էք անոր, բայց ի մխիթարութիւն ձեզ դարձեալ կը կրկնեմ որ Լուիզ ամենեւին տեսած չէ ձեր ամուսինը ինչպէս նաեւ ուրիշ ոեէ մարդ. կատարելապէս անարատ է այն:

ԺԱ.

ԱՆՃԵՂԻՔ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Անժեղիք՝ դիւահարի մը պէս դռնէն դուրս ելաւ .

Աւելի ինկաւ քան թէ իջաւ ստնդուղէն վար .

Ինչպէս որ իր կառքով եկած ատեն ուրիշ կառք մը կը մեկնէր Լուիզի ապարանէն՝ Էթիէնը և Տամիէնը տանելով, նոյնպէս այս անգամ ալ իր մտքսած ատեն շքեղ կառք մը ներս կը մտնէր կառաց դռնէն .

Յիկին Անժեղիք իր դաղտնեաց երեւան ելնելուն սորառնալիացը տակ այն աստիճան անկեալ և խելահորոյս վիճակ մը ունէր, որ աչքը վեր առնելու անգամ կարողութիւն չունեցաւ դիտելու թէ ո՞վ կար այն կառքին մէջ .

Միեւնոյ՛ն ատեն Տամիէն եւս ոչ պակաս յուսահատ և գրեթէ խենդ մը, որչափ որ էր Անժեղիք, իր սենեկէն դուրս կ'ելլէր աղըկանը վիճակը հասկնալ երթալու և ապա ըսպաննելու ինքզինքը եթէ կարող չըլլար իր անցեալ կեանքը արդարացնելու Լուիզի առջեւ, որ հիմա գիտէր թէ բուն հայրն էր ինքը :

Սպասաւորներէն մին դիմաւորեց զինքը .

— Խիտ շքեղ պարոն մը եկաւ փառաւոր կառքով մը, տէր իմ :

— Է՛հ, իմ սենեակս առաջնորդէ զինքը .

— Բայց ինքը կը պնդէ որ ուղղակի օրինորդ Լուիզի քով երթայ, և . . . ներեցէք տէր իմ . . . շատ ընտանի ձեւ մը կը բանեցնէ . . . օրինորդին՝ օրինորդ ալ չըսէր . . . այլ պարզապէս Լուիզ :

— Խենդ մը կամ սրիկոյ մը ըլլալու է : պիտի չախճախեմ իր գլուխը :

Եւ Տամիէն սպառնալից քայլ մը կառնուր դէպի ետ, երբ սրահին դուռը մէկէն ի մէկ բացուելով յիսնապետին խենդ կամ սրիկայ կոչած մարդը ներս կը մտնէ առանց ուէ աբարողութեան .

Սպասաւորին գոյնը նետեց, կարծելով որ Ծերուանի Հայրը մէկէն ի մէկ անոր վրայ պիտի նետուէր և սոսկալի տեսարան մը յառաջ պիտի գար .

Բայց ո՞վ զարմանք, Լուիզի պաշտպանը փոխանակ այս բաները ընելու յանկարծական փոփոխութիւն մը եկաւ իր վրայ . մի քանի քայլ ետ դնաց, և «Ի՛՛նք, դուք հս՛ն» ազդակեց :

Պարոն հիւրը լուութիւն պատուիրելու համար իր մատը բերնին վրայ դնելէ ետեւ,

Ծերունի Յիսնապետին ձեռքը սեղմեց, և

— Լուիզին քով տար զիս, բաւ :

— Բայց պարոն . . . բայց . . . բայց . . . այսինքն բայց . . .

— Ի՛նչ, միթէ Լուիզ հիւա՞նդ է :

— Ոչ, հիւանդ չէ . . . բայց մարելու պէս բան մը եղած է . . . և այս վայրկենիս զձեզ ընդունելու պատշաճ վիճակի մէջ չի գտնուիր :

— Ծերունի բարեկամս, հիմա աւելի եւս իրաւունք կունենամ ձեռնէ խնդրելու որ անմիջապէս իր սենեակը առաջնորդէք զիս :

Տամիէն, յուսահատ կերպիւ պարոն հիւրին երեսը նայեցաւ, ձեռքը ճակտին զարկաւ անդամ մը, և առանց բառ մը աւելցրելու անոր առջին ինկաւ :

Երբ երկուքը մէկանց Լուիզի սենեակը մտան, մարած աղջիկը արդէն սթափելու վերայ էր ի շնորհս երկու սպասուհեաց խնամուցը, որք կարծելով թէ ծերունի պաշտպանին հետ եկողը բժիշկ մ'էր, հարցական կերպով մը Տամիէնի երեսը նայեցան :

Ծերունի Յիսնապետը այնպիսի տեղ մը կայնած էր որ Լուիզ զինքը չի տեսնէ :

Իրեն՝ մարդասպան մը, կնասպան մը, թիապարտ մը, և նոյն իսկ Լուիզի մայրն սպանողը ըլլալն երեւան ելնելէ ետեւ, աւելի նախամեծար կը համարէր տասը գրկաչափ

գետնին տակը անցնել, քան թէ իր աղջկան դատապարտիչ աչերուն երեւնալ, այն աղջկան որ տակաւին նոր իմացեր էր թէ այդ մարդասպանը, կնասպանը, թիապարտը և իր մօրը սպաննիչը բուն իսկ իր հայրն է եղեր, զոր մինչեւ այն ատեն լուր պաշտպան մը կարծած էր :

Տամիէն, պատրաստուած տեսարանէն ահարեկ, դռնէ օտար վկայներ ներկայ չի գրտնուելուն փափաքանօք նշանացի պատասխան մը տուաւ երկու սպասուհիներուն նշանացի հարցման, որոյ վրայ երկուքն ալ սենեկին դռնէն դուրս ելան և խնամով գոցեցին զայն :

Իրենց հեռացող քայլերուն ձայնն ալ լըսուեցաւ քիչ մը ատեն :

Որովհետեւ Տամիէն հետաքրքրութեան ներող պաշտպաններէն չէր :

Այն ատեն պարոն հիւրը ծանր ծանր մօտեցաւ Լուիզի, որ տակաւին կունակի վրայ տարածուած կը գտնուէր բազմոցի մը վրայ :

Անոր առջեւ ծնդան վրայ ինկաւ պարոնը, գունաթափ և մարմարիոնի պէս ճերմակ ձեռներէն մին բռնելով իր շրթունքին տարաւ, և խանդաղատանօք կրկին կրկին համբուրեց զայն :

Լուիզ կարծելով թէ եկողը բժիշկ մ'է, առանց անոր երեսը նայելու յանձնիր էր իր

ձեռքը որպէս զի երակը զննէ այն :

Բայց երբ համբոյրներ զգաց անոր վրայ , մէկէն ի մէկ սրտմտութեամբ ետ քաշեց իր ձեռքը , և երեսը ասդին դարձուց ամբարիշտ ժարդը յանդիմանելու համար :

Այս միջոցին բժիշկ կարծուած մարդը իր գլխաբկը հաներ էր գլխէն , և յափշտակեալ նայուած քով մը կը գիտէր իր երեսը :

Լուիզի դիմաց սպառնալի գիծերը յանկարծակի անյայտ եղան , աչերը խոշոր խոշոր բացուելով անոր աչացը յառեցան :

Ասոր յաջորդեց ապստամբական շարժում մը , և Լուիզի ճերմակ թեւերը վերմակէն դուրս ելնելով այն երջանիկ ժարդուն պարանոցը նետուեցան , երբ իր գեղեցիկ բերանը երկու անգամ իրարու վրայ կրկնեց , «Ո՛հ , Պէրթիէս , իմ սիրուն Պէրթիէս» :

Խեղճ աղջկան համար այս անակնկալ կըրկին յուզումը շատ եկած էր :

Լուիզ կրկին անգամ նուազած էր , բայց այս անգամ իր սիրականին բազկացը մէջ :

Տամիէն ռուսերի մը պէս յառաջ նետուեցաւ :

—Մի վախնար , բան մը չիկայ , քիչ մը պաղ ջուր բեր իսկոյն , ըսաւ Պէրթիէ սպառնահարի մը պէս դողալով :

—Բայց , ո՛վ երկին , եթէ աղջիկս մեռնի :

—Ինքզինքդ մի կորսնցներ , բարեկամս , ուրախութեան յուզումները երբէք երիտասարդ աղջիկ մը չի մեռցներ :

Երբ պաղ ջուրը Լուիզի երեսին սրսկուեցաւ , իր գեղանի աչերը կամաց կամաց բաց ուեցան , և իր չքնաղ ու մերկ թեւերը կըրկին փարեցան Պէրթիէի պարանոցին շուրջը , որոնք իր նուազած ատենը թուլնալով սահած էին :

—Ո՛հ , Պէրթիէս , ազնիւ բարեկամս , ո՛հ , վերջապէս տեսայ զքեզ նորէն , մի բաժնուիր մեզմէ այլ եւս :

—Լուիզ , սիրուն Լուիզս . . . ա՛հ , ըսէ անգամ մը քու գեղեցիկ բերնովդ թէ կը սիրես զիս , այնուհետեւ և ոչ մի բան կարող պիտի ըլլայ հեռացնել զիս քու չքնաղ ոտիցըդ քովէն :

—Ե՛հ , իմ անուշիկ Պէրթիէս , միթէ զքեզ տեսած առաջին օրէս չը սիրեցի՞ զքեզ . . . իբր հայր մը . . . իբր մեծ եղբայր մը :

—Բայց կը վափաքէի որ ըսէիր ինձ թէ զիս հօրմէ մը և եղբօրմէ մը աւելի կը սիրես :

Լուիզի դէմքը որ քիչ մ'առաջ գունաւորեր էր , մէկէն ի մէկ տափուկեցաւ . ետ քաշեց իր թեւերը Պէրթիէի պարանոցէն , ելաւ նստաւ բազմոցին վրայ , և յետոյ ձեռներու-

վր երեսը գոցելով ինկաւ բարձին վրայ :

Պէրթիէ , որ վերջին աստիճանի յուզուած էր այդ վայրկենին , բուռն կերպիւ յարձա կեցաւ Տամիէնի աղկան վրայ :

Կէս մը ստըի ելած էր ինքը :

Բռնութեամբ վեր առաւ Լուիզի գլուխը , և հսգւոյն խորերը թափանձող նայուածքով մը անոր աչացը յառելով իր կրակոտ աչերը ,

— Վճիռս , Լուիզ . . . վերջին վճիռս կ'ըս պասեմ քեզմէ , աղաղակեց :

— Բայց ի՞նչ կուղես ինձմէ , Պէրթիէս , մի-թէ դքեզ իբրեւ հայր կամ իբրեւ մեծ եղբայր սիրելի բաւական չէ՞ :

— Ո՛չ , կուզեմ որ զիս սիրես իբրեւ . . . իբրեւ քու ամուսինդ :

— Իբրեւ իմ ամուսին՛նս . ո՛հ , ես քու կի-նըդ ըլլամ . . . Աստուած իմ , ի՛նչ երջանկու-թիւն էր ինձ համար Պէրթիէիս կինն ըլլալ . ապրիլ և մեռնիլ միմիայն իրեն համար . ո՛հ , Աստուած իմ , ի՛նչ բրի ես որ կը զրկուիմ այս անհուն երջանկութենէն :

— Բայց ըսէ ինձ ի՞նչ արդեւք կա՞ր ատոր համար . ինձ նայէ , Լուիզս , դուն որ տակաւին հազիւ տասնեւեօթը տարեկան կաս , ե-թէ կրնաս ինձ պէս քառասնամեայ մարդ մը սիրել իբրեւ հօրմէ և եղբօրմէ աւելի բան մը , միայն այդ բառը արտասանէ իմ առջե-

ւրս , և քու երեւակայած արդեւքդ ինչ որ ալ ըլլան , պիտի խորտակեմ և բնաջինջ ընեմ զանոնք :

— Ո՛հ , աղնիւ Պէրթիէս , մինչեւ այս առաւ-տօտ , այո՛ , մինչեւ այս առաւտօտ քու բազ-կացդ մէջ ապրելէ և մեռնելէ ի զատ ուրիշ բանի մը վրայ չէի մտածեր . բայց ճիշդ այ-սօր պատահած սոսկալի դէպք մը բոլոր գե-ղեցիկ երազներս յօդս ցրուեց , և հաստա-տապէս իմացուց ինձ որ , միմիայն վանքի մը մէջ մեռնելու դատապարտուած եմ ես :

— Վանքի մը մէջ մեռնելո՛ւ . բայց յիմա-բական բան է այդ , Լուիզս . կատարեւապէս յիմարական :

— Սակայն , Աստուած իմ , եթէ անկարելի է որ քեզի պէս պարկեշտ անձի մը կինն ըլ-լա՛մ :

— Ինչո՞ւ , ի՞նչ պատճառաւ :

— Ս՛հ , Պէրթիէս , այն ամենապարզ պատ-ճառաւ որ . . . մարդասպանի մը աղջիկն եմ ես :

Լուիզ ինքզինքին սաստիկ ոյժ տալով այն վերջին բառերը արտասանելէ ետեւ , թո-ղուց որ իր չքնաղ գլուխն իյնայ նախորդ գործաւորապետին պարկեշտ գրկացը մէջ :

Պէրթիէ առանց կարողութիւն ունենալու պատասխանել այս անակնկալ յայտնութեան ,



ետին դարձուց գլուխը, և այնպիսի նայ-  
ուածքով մը նայեցաւ Տամիէնի երեսը, որ  
նախկին Յիմար Յիսնապետը բոլորովին դող  
ելաւ:

Պահ մը խորին լուռութիւն տիրեց երեք  
սերունդներ ներկայացնող այս մարդկային  
երրորդութեան միջեւ, այսինքն տասնեւ-  
եօթնամեայ Լուիզի, քառասներկամեայ Պէր-  
թիէի, և յիսունութամեայ Տամիէնի միջեւ:

Պէրթիէ շատ յուզուած էր, լսելով որ Լու-  
իզ՝ իր սրոշած ժամանակէն առաջ իմացեր  
էր Տամիէնի աղջիկն ըլլալը, մանաւանդ ա-  
նոր՝ իր մօրը սպաննիչն ըլլալն ալ միանգա-  
մայն:

Վեր վերցուց Լուիզի գլուխը, իր սիրոյն  
սաստիկութիւնն արտայայտող կրակոտ նայ-  
ուածքով մը անոր երեսը նայեցաւ, բայց  
ժպտելով միայն հարցուց անոր:

— Լուիզս, ո՞վ ըրաւ քեզի այդ պատմու-  
թիւնը:

Լուիզ, Պէրթիէի ժպիտը տեսած ատեն,  
ինքն ալ քաջալերուելով ժպտեցաւ անոր երբ  
կը պատասխանէր:

— Տիկին մը յայտնեց այս ամեն գաղտ-  
նիքները, և հայրս որ ներկայ էր այս ցաւա-  
լի տեսարանին, չի կրցաւ անոր ըսածները  
ժխտելու բառ մը գտնել:

— Բայց ի՞նչ էր այդ տիկնոջ անունը, հար-  
կաւ իմացուց քեզ:

— Այո, Անժէլիք էր իր անունը:

— Անժէլիք, բայց ի՞նչպէս Անժէլիք:

— Անժէլիք Տըլապուշ:

— Ո՛հ, Էթիէնի կի՛նը:

— Այո, ազնիւ Պէրթիէ, Էթիէն Տըլապու-  
շի կինը, և գիտէ՞ք թէ ինչ բանի համար  
կուգար իմ տունս:

— Ա՛հ, շատ հետաքրքիր եմ այդ բանը ի-  
մանալու:

— Լա՛ւ, տիկին Անժէլիք կուգար յանդիմա-  
նելու զիս, որ... իր ամուսինը հրապուրած  
եմ... հիմա կը տեսնե՞ս թէ ո՞րչափ մեղա-  
պարտ եմ, և ի՞նչ սոսկալի ամբաստանու-  
թեանց ենթակայ:

Լուիզ կը կարծէր որ իր այս յայտնութեան  
վրայ Պէրթիէ պիտի կասկածէր իր առաքի-  
նութենէն, և կրակ կտրելով իսկայն դադրե-  
ցնել պիտի սպառնար իր յարաբերութիւնը  
այնպիսի անարժան աղջիկէ մը, որ բացի մար-  
դասպանի մը աղջիկն ըլլալէ՝ նաեւս պչրող  
հրապուրիչ մը ըլլալու ամբաստանութեան  
տակ ալ կը գտնուէր:

Այլ ո՞րչափ մեծ եղաւ իր զարմանքը երբ  
տեսաւ որ Պէրթիէ՝ հակառակ իրմէ հեռա-  
նալու իբրեւ օձէ մը զգուշացող մարդ՝ աւե-

լի եւս կը մօտենար իրեն, զինքը բռնի և տղու մը պէս իր ծնգացը վրայ կառնուր, ճակտին մազերը խնամով ետ կընէր և կը յարդարէր զանոնք իր ձեռքը, և վերջապէս համբոյր մը գողնալով անոր վարդի մը պէս կարմրած այտերէն, շնորհալի կերպիւ սա կարճ հարցումը կուղղէր:

— Լուիզս, ըսէ ինձ, միթէ մարդասպանի մը աղջիկն ըլլալուդ և էթիէն Տըլապուչը հըրապուրած գտնուելուդ համար, առաջուանէ նուազ սիրով մը կը սիրես զիս:

Իեղճ աղջիկը բոլորովին շուարեցնելու և զանի գրեթէ յիմարեցնելու համար, Ռիչիէօ մը անգամ ասկից աւելի անդուլթ և յուսահատեցուցիչ հարցում մը չէր կրնար մտաբերել:

Լուիզ՝ այնպիսի անորոշ նայուածքով մը նայեցաւ իր սիրահարին երեսը, որ այս վերջինը չի կրնալով բռնել իր քրքիջը՝ բարձրաձայն ձիծաղիլ սկսաւ, և իր քով կանչեց աղջիկնէն ոչ նուազ շուարեալ հայր Տամիէնը:

Լուիզ՝ իր հայրը իր առջեւ տեսած վայրկենին շարժում մ'ըբաւ Պէրթիէի ծնգացը վրայէն վար իջնելու բայց Պէրթիէ չի թողուց զայն, և Լուիզ աւելի եւս կը զարմանար տեսնելով որ Տամիէն ամենեւին փոյթ չէր ընէր իր աղջիկը Պէրթիէի գրկացը մէջ

տեսնելուն համար, և հանդարտութեամբ ու քիչ մ'ալ իր աղջկան նայուածքէն զգուշանալով, կը նստէր այն ակտուին վրայ, զոր աչքով կը ցուցնէր իրեն Պէրթիէ:

— Ազնի՛ւ բարեկամս, ըսաւ Լուիզի սիրահարը, կը տեսնես որ աղջիկդ շատ յուզուած ըլլալուն, չեմ կրնար ստիպել զինքը որ այսօրուան դէպքերն տեղն ի տեղօքը պատմէ ուստի քեզի դիմելու կը պարտաւորիմ:

Ահա Լուիզի համար իրարու յաջորդող կարգ մը զարմանալիք:

Պէրթիէ, որուն սիրոյ սաստկութեանը վերայ տարակուսելու տեղ չէր մնար այլ եւս և զոր գուցէ աւելի սաստիկ կերպիւ կը սիրէր Լուիզ ինքն, բոլորովին անտարբեր երեւցած և նոյն իսկ ձիծաղած էր այն յայտնութեան վրայ, որով կ'ամբաստանուէր ինքը թէ Անժէլիքի ամուսինը հրապուրած էր ասկից զատ Լուիզ նոյն իսկ իր բերնովը ըսելէ ետեւ թէ ինքը մարդասպանի մը աղջիկն էր, Պէրթիէ զինքը չի մերժելէ զատ իր սիրոյն ճշմարտութեան և սաստկութեան աւելի բացորոշ նշաններ կուտար, և շիմ սիրելի բարեկամս կը կոչէր և իր դէմը նստելու կը հրաւիրէր նոյն իսկ այն անձը, որ մարդասպան մ'ըլլալը ուրանալու բառ մ'անգամ իր բերնէն դուրս հանելու կեղծ քաջութիւնն չէր կրցած ունենալ:

Տամիէն՝ իր քղանցքը խնամով ժողուելէ և մի քանի անգամ հազալէ վերջը մանրամասնաբար պատմեց բոլոր այն անցքերը որք տեղի ունեցած էին Լուիզի սենեկին մէջ. ասկեց զատ նաեւս կը պատմէր այն կրկին տեսակցութիւնը, որ ունեցած էր նախ Էթիէնի՝ և ապա Անժէլիքի հետ:

Լուիզի զարմանքը աւելի եւս մեծցաւ երբ իր հօր բերնէն կ'իմանար թէ Անժէլիքի կասկածները անտեղի չէին եղեր:

Իր խոշոր ու սեւ աչերը յուսահատ կերպիւ իր սիրահարին աչացը մէջ տնկեց և գըրեթէ հեծկտանօք սա խօսքերն ըրաւ անոր.

«Ազնիւ Պէրթիէս, վեհանձնութիւնդ և բարեսրտութիւնդ աւելի եւս կը վրդովեն սիրտս. հիմա կը հասկնամ որ ինձ այցելող այն գեղանի կ'լինը, ձեր նախորդ նշանածը Անժէլիքն էր, զոր ատեն մը հրեշտակ կոչած էիք և որ անգթաբար մատնած էր զձեզ. և դուք որ մէկ խօսքով թէ Անժէլիքը, թէ Էթիէնը, և թէ տիկին Փրանսուազը կառափ նարան հանելու կարող էիք, շնորհեցիք երեսնց թէ կեանքերնին, և թէ ապաղանին, և հիմա... հիմա կը սիրէք ինձ պէս անարժան աղջիկ մը, որ իր կեանքը ձեզի նուիրելէ մեծագոյն երջանկութիւն մը չէր կրնար երեւակայել, և այդ երեւակայութեան շնոր-

հիւն էր որ պարտաւորեցաւ ձեր կողմանէ ընդունիլ այն ամեն շնորհները, որով կարող ըրիք զիս ըստ ձեր բաղձանայ Պրուքսէլ քաղաքին մէջ վարել այն ամենափառաւոր կեանքը, որ բոլոր ազնուապետական տիկնայց և նոյն իսկ Անժէլիքի նախանձը կը շարժէր այնչափ սաստիկ կերպիւ, միևնոյն երեւակայութիւնը նաեւս պիտի ստիպէր զիս ընդունելու ձեր վերջին շնորհը, այսինքն Տըլապուչի գործարանին սեպհականութիւնը...

«Բայց ո՞վ Աստուած իմ... պարտաւոր եմ այս վայրկենէս խղել ամեն յարաբերութիւն քեզի հետ... երթալ վանք մը քաշուելու, հոն քու երջանկութեանդ համար աղօթելով մեռնելու համար... որովհետեւ քեզի պէս պարկեշտ և վերջին աստիճանի բարեսիրտ մարդու մը կ'լինն ըլլալու արժանի չեմ, որուն համար Աստուած ալ գիտէ թէ կեանքէ՞ աւելի մեծ բան մը կուզէի ունենալ՝ նուիրելու... բայց աւանդ... ինձ համար չէ այդ շնաշխարհիկ երջանկութիւնը... որովհետեւ... վերջապէս մարդասպանի մը աղջիկն եմ:

Եւ Լուիզ, իր գեղանի գլուխը վար կախելով դառնապէս լալ սկսաւ:

Տամիէն աւելի լաւ կը համարէր նոյն վայրկենին կայծակնահար մեռնելը:

Պէրթիէ, կրկին անգամ բռնութեամբ վեր առաւ Լուիզի գլուխը:

— Հայրդ մարդասպան մը չէր, Լուի՛զս, այլ միայն դժբաղդ մը, և ուէ պատուաւոր մարդ մը պիտի ընէր այն միւսնոյն բանը զոր բրաքու դժբաղդ հայրդ երբ սրիկայի մը դրկացը մէջ կը տեսնէր իր կիներ:

Տամիէն շարժում մը ըրաւ իր աթոռին վըրայէն Պէրթիէի ոտքը նետուելու և այս չըքնաղ փաստարանութեան համար իր անհուն շնորհակալիքը յայտնելու:

Բայց միւսնոյն ատեն իր աղջկանը բերնին բացուիլը արգիլեց զինքը այդ պարտաւորութիւնը ի գործ դնելէ, և իր վրէժը շըրթունքներուն ամուլ շարժումներէն առնելու պարտաւորեցաւ:

— Ուրեմն կը հաճիք ներել այս դժբաղդ հօրս, իր մարդասպան մը ըլլալը իմանալնէդ ետեւ:

— Լուիզս, քու իմանալէդ շատ առաջները իմացած էի հօրդ գլխուն եկած դժբաղդութիւնը և նոյն իսկ այդ դժբաղդութեան պատճառաւ թիպարտ մը եղած ըլլալը. այսու ամենայնիւ իմ սէրս աւելի...

— Բայց չէիք գիտեր թէ իմ հայրս էր անիկա:

— Լուիզ, ազնիւ աղջիկս, կը յիշե՞ս այն

գիշերը երբ հայրդ, ատրճանակ ի ձեռքն սենեակիդ պատուհանէն ներս յարձակեցաւ և մենամարտի հրաւիրեց զիս:

— Ո՛հ, կենացս մէջ անմոռանալի գիշեր մը եղաւ այն:

— Կը յիշե՞ս նաեւ թէ ծերունիի մը հետ մենամարտելու առաջարկութիւնը մերժելու փաստութիւնն ունեցայ այն գիշեր:

— Այո՛, շատ լաւ կը յիշեմ. բայց մերժումներնուդ պատճառն ալ գիտեմ:

— Միւսնոյն ատեն էի իէնի հետ ալ մենամարտելու ստիպուած ըլլալս:

— Այո՛:

— Ո՛հ, այդտեղ սխալած ես, իմ սիրուն հրեշտակս. հօրդ հնա մենամարտիլը մերժեցի, որովհետեւ չէի կրնար մեռցնել այն մարդը որ սիրելի Լուիզիս հայրն էր:

— Ուրեմն այն ատենէն գիտէիք անոր՝ իմ հայրս ըլլալը... և կը սիրէիք զիս:

— Այո՛, իմ ազնիւ աղջիկս, այն ատենէն առաջ ալ գիտէի ամեն բան, և հայրդ այնչա՛փ անմեղ էր, որ ամենեւին պատճառ մը չէի տեսներ այն միւսնոյն խանդակաթ սիրով սիրել զքեզ ինչպէս որ կը սիրեմ այսօր:

Լուիզ՝ դէպի երկինք տարածեց իր թեւերը, և յետոյ ուժգնութեամբ Պէրթիէի պարանոցին շուրջը կը բոլորէր զանոնք, երբ Պէրթիէ

Լուիդր ճանչնալէն ի վեր առաջին անգամն ըլլալով կը համբուրէր անոր վարդազոյն շրթննորը, և երջանիկ աղջիկը՝ «Ո՛հ, Աստուած իմ, սրչափ երջանիկ եմ այս վայրկենիս, որ կը նուիրես ինձ միանգամայն սիրասուն հայր մը [և պաշտելի ամուսին մը] կազաղակէր:

Տըլանժ կոմսին վերջին փափաքը և գեղանի Անգլուհի վհուկին գուշակութեան մի կարեւոր մասը կատարուած էր:

Ամուսնութեան նախնական պայմանն էր որ կնքուած էր մէկ շրթնային համբուրիւ ընդմէջ երկու սիրահարաց, և ի ներկայութեան այն նախկին Յիմար Յիսնապետին, որ միոյն բնական հայրն էր, իսկ միւսին բնականէն աւելի գորաւոր պատճառներով հայրը:

Ծերունին Տամիէն՝ ուրախութեան արցունքներ յայն՝ ինկաւ իր որդւոցը վրայ, և գրկեց զանոնք, երբ իր աղջիկը «Սիրելի հայր իմ, գոչելով կրկին կրկին կը համբուրէր անոր ձեռները:

— Երջանիկ եղիք, սիրելի՛ որդեակներս, ըսաւ Տամիէն՝ հեծկլտալով:

Է՛հ, ի՞նչ ընենք, խեղճ մարդը հաղիւ հազ այսչափը կրցաւ ըսել:

Մարդուն բանախօսական դրամագլուխէն այսքանը մնացած էր միայն:

Այն ալ սպառեց լմնուց:

Երբ սրտերը քիչ մը հանդարտեցան, Պէրթիէ առանց թող տալու Լուիզին որ իր ծընգացը վրայէն վար իջնէ, Յիմար Յիսնապետը մեծ տագնապէ մը ազատելու կերպիւ սկսաւ խօսիլ:

— Չեր պատմութիւնը լրացնելու համար ձեզի մի քանի տեղեկութիւններ տալու պարտաւոր կ'զգամ ինքզինքս: Դիտէք որ իմ հիմակուան անհուն հարստութեանս աղբիւրն է Միսիսիբիի Ընկերութեան բաժնեթղթերը, որոնք 100էն մինչեւ 2000ի ելնելէ ետեւ այսօր ոչինչ կարժեն: Աճառի գնտակը վերջապէս պայթեցաւ, բոլոր թղթերս լաւ գներով ձեռքէ հանելէս ետեւ: Այսօր հինգ միլիօն ֆրանքէն աւելի հարստութիւն մը ունիմ, բայց ուրիշ մէկ մ'ալ կայ, ինչպէս հարիւր հազարաւոր մարդիկ, որք բոլորովին կործանած են: Իմ յիշած մարդս էթիէն Տըլապուշն է, որ միշտ կը գնէր քանի որ ես կը ծախէի: Առաջները չէի գիտեր թէ միշտ ինձմէ թուղթ գնող սեղանաւորը որո՞ւ հաշտոյն կը գնէր: Ետքէն իմացայ որ էթիէնի հաշտոյն էին անոնք: Նաեւ կրցայ իմանալ թէ այդ թըրթերէն սպասուած երեւակայական շահը որ բացարձակապէս վնասի կողմը հակած էր, էթիէնի ձեռքը կը մսխուէին Պրիւքսէլի մէջ:

իմ Լուիզս հրապուրելու համար: Նորէն ան-  
սայ ինձմէ արժեթուղթ դնող սեղանաւորը:  
2000նոց թղթերը վերստին իջած էին հա-  
րիւրէն ալ վար: Ճօն Լօ փախած էր, և Է-  
թիէն բոլորովին կործանած: Ահա այն ատեն  
գրեցի իմ ծերունի բարեկամիս որ Տըլապուշ  
գործարանը դնէ յանուն իմ Լուիզիս, և  
տակաւ ին ուրիշ բաներ, որոնք կը տեսնեմ  
թէ բառ առ բառ գործադրուած են, և  
մեկնեցայ Բարիդէն ի գործ դնելու համար  
այն մեծ նպատակս, որ միշտ տռաջնորդ ե-  
ղած է ինձ ամեն գործերուս մէջ, Պրիւքսէ-  
լէն մեկնելէս ի վեր: Ո՛հ, ս'ըջափ երջա-  
նիկ եմ հիմա, վերջապէս այն մեծ նպատա-  
կիս գլուխ երեսը տեսնելով: Հարուստ  
եմ հիմա, և Լուիզ՝ պաշտելի աղջիկս, կինս  
պիտի ըլլայ: Այնպէս չէ՞, Լուիզս: Ո՛հ պէտք  
է որքու կենդանի բարբառովդ հաստատես  
իմ երջանկութիւնս:

— Ո՛հ, այո՛, այլ եւս կրնդ եմ ազնիւ ա-  
մուսինս, տար զիս ուր որ կուզես, ամեն  
տեղ պիտի հետեւիմ քեզ ամբողջ սրտովս:  
Ո՛հ, միթէ արս աշխարհը շինուած չէ՞ միմե-  
այն սիրելու և սիրուելու համար: Երջանիկ  
ըրիւր զիս, Պէրթիէս...

Ութն որ յետոյ Լուիզ և Պէրթիէ, Բարի-  
զի Մայր եկեղեցւոյն մէջ կը պսակուէին, և

նոյն գիշերը Բարիզեան ապարաննուն մէջ  
այնպիսի շքեղափայլ երեկոյթ մը կուտային  
բարձր կարգէ եղող բազմաթիւ հրախրեալ-  
ներու, որուն վրայ ամիսներով խօսուեցաւ  
մեծ մայրաքաղաքին մէջ:

Հարսանեաց հանդիսի երկրորդ օրը Յիմար  
Յիսնապետը Պրիւքսէլ կը վերագառնար,  
յանուն Լուիզի գնուած Տըլապուշ գործարա-  
նին տնօրէնութիւնը ստանձնելու, որ տարիէ  
մը պակաս ատենի մէջ պիտի վերստանար  
հանգուցեալ Օկիւսթ Տըլապուշի ատենուան  
փառաւոր վիճակը, ի չնորհս պարբերական  
և գրաւոր հրահանգաց՝ մասնագէտն պարոն  
Պէրթիէի:

ԺԲ.

### ԱՆԿԱՐԴ ԿԵՆՈՅ ՎԱԽՃԱՆԸ

Մեր պատմութեան սկիզբէն ի վեր Պրիւք-  
սէլ քաղաքին ամեն կարգի ժողովուրդը կը  
ըօնական և քաղաքական իշխանութեանց  
սահմանած պարտաւորիչ տօներէն զատ եր-  
կու կամաւոր տօնի օրեր ալ ունեցած էին,

թէ որ սդոյ պատճառած առեւտրական դարարի օրերն կրնան տօնի օրեր կոչուիլ:

Ասոնցմէ մին էր հանրածանօթ Օկիւսթ Տըլապուչի այսինքն էթիէնի մեծահարուստ, պարկեշտ, և ժողովրդական հօր մահուան յուղարկաւորութեան օրը: Իսկ միւսն էր «պոնեւ Պերիէի» անգլուխ գիւղին թաղման օրը:

Այսօր ալ երրորդ կամաւոր տօնի մը օրը կըլլար:

Այսինքն էթիէն Տըլապուչի կառքերուն, ձիերուն, և ամբողջ շքեղ կարասեաց՝ կառավարութեան ձեռք և աճուրդի դրուելով, վաճառուած օրն էր այն, զուտ հասոյթը առնելիքի տէրերուն բաժնելու համար:

Արդէն ըսինք որ գործարանը Լուիզի ծախուած էր 200,000 ֆրանքի:

Գործարանին ծախուած ատեն տակաւին պաշտօնապէս յայտարարուած չէր էթիէն Տըլապուչի սնանկութիւնը:

Բայց խիստ ճարտար և աղմկայոյզ պարտատէր մը յաջողեր է այն գումարէն հարիւր յիսուն հազար ֆրանքը ձեռք անցնելու, որով միայն յիսուն հազար ֆրանք կը մնար էթիէնի ձեռքը:

Նենգաւոր ամուսինը, իր գործերուն կործանման վիճակի մէջ ըլլալը հաստատող նա-

մակ մ'ուղղելով առ Առեւտրական Գործոց Պաշտօնեայն, առձեռն պատրաստ յիսուն հազար ֆրանքովը անյայտ եղեր էր, բոլորովին երեսի վրայ թողելով իւր աղջիկ դաւալը, և մանկամարդ կինը, որ բոլոր գոհարեղէնները և ծանրագին զգեստները իսկ վաճառելով իր էրկանը փոխանակագիրներէն շատերը վճարեր էր կործանման առաջըր առնելու յուսով, որով Անժէլիք և իր աղջիկը կատարելապէս աղքատ վիճակի մը մէջ երեսի վրայ կը մնային:

Ապարանն չորս հարիւր քսան հազար ֆրանքի ծախուելով, այդ գումարը ամբողջովին վար դրուած էր Առեւտրական Պաշտօնատունը, կարասեաց, կառաց և ձիերու վաճառման հասոյթին հետ միացուելով պարտատեարց միջեւ բաժնուելու համար:

Գրեթէ բոլոր Պրիւքսէլի բնակիչները ոտքի վրայ էին այն օրը դիտուելու համար այն շքեղ կարասեաց աճուրդի դրուելով վաճառումը, զորս միայն այն բաղդաւոր ընտրեալները տեսնելու պատիւն ունեցած էին մինչեւ այն ատեն որք Տըլապուչի ապարանի գեղանի տիկնոջ հրաւերներն ընդունելու փառքին արժանացած էին:

Իսկ ծախու հանուելիք կառքերն և ձիերն արդէն ամենուն տեսութեանց արժանացած

բաներ ըլլալուն, միմիայն բռնելիք վերջին գիներնուն և նոր տէրերնուն որոնք ըլլալուն վրայ հետաքրքրութիւն կրնային գրգռուել:

Կարասեաց ամբողջութեանը մասին աճուրդի վերջին փողը կը նշանակէր երկու հարիւր եօթանասուն և վեց հազար ֆրանք. իսկ ձիերը և այն փառաւոր կառքերը քառասուն և հինգ հազար բռնեցին. ընդ ամենը 750,000 ֆրանքի չափ, որ սակայն հարիւրին յիսունէն պակաս կը թողուր պահանջատեարց:

Անժէլիք և իր զաւակը արդէն առաւօտեան լոյսը հազիւ տեսնուած մեկնած էին այն ճոխութեան վայրէն, որ տակաւին օր մը առաջ իրենցն էր, և միջին կարգի քաղաքացուհիներու համեստ զգեստներ միայն ունենալով իրենց վրայ տիկին Պրանսուազի տունը կ'ապաստանէին:

Անամօթ կինը արդէն ասոնք ալ ծախած էր Հօլանտացի պարոնի մը, որոյ փոխարէն տասն հազար ֆրանք միջնորդչէք ընդունած էր նախապէս, որովհետեւ տիկին Պրանսուազ ապառիկ գործ տեսնող անձերէն չէր, որ շատ անգամ անհաճոյ զեղչով մը կը վերջանայ:

Գործը գիտցող կնիկ մ'էր այն, պէտք չէ գինքը մեղադրել:

Բայց չէք գիտեր թէ տիկին Պրանսուազ կանխիկ վարձքի նկատմամբ այսչափ հոգատար ըլլալուն ուրիշ ի՞նչ արդարացուցիչ պատճառ մ'ալ ունէր:

Միևնոյն ատեն այս բարեսիրտ կինը Գաղղիացի պարոնի մը հետ ալ սակարկութեան կը մտնէր, Անժէլիքը՝ Հօլանտացիին գիրկէն անօր գիրկը փոխանցելու համար, և տասը հազար ֆրանք ալ անկից վաճք կ'ընդունէր, դարձեալ կնիկ ըլլալու պայմանաւ:

Ինչո՞ւ համար դէմքերնիդ զարմացած ձեւեր կառնուն, տեարք և տիկնայք, շատ վաճառակտաններ իրենց ապրանքին համար անփոփոխ գին մը ունէին:

Տիկին Պրանսուազի որոշեալ գինն ալ տասը հազար ֆրանք էր հիմակու հիմա, և ով որ Անժէլիքի հրապոյրները գնելու փափաք մը ունէր, պէտք էր որ այս գինը ամբողջապէս վճարեր առանց սանթիմ մը զեղչելու և կանխիկ վճարելու պայմանաւ:

Բայց տիկին Պրանսուազ խիստ վստահելի վաճառականուհի մ'էր, և կանխապէս տասն հազար ֆրանք միջնորդչէք վճարողը կրնար կատարելապէս ապահով ըլլալ որոշեալ ապրանքին նոյնութեամբ իր ձեռքը հասնելուն:

Միայն թէ տիկին Պրանսուազ անգամ մը խոստացեալ ապրանքը իր տեղը յանձնելէ



ետեւ, այլ եւս պատասխանատու չէր ըլլար անոր, ինչպէս որ սովորութիւն է վաճառականական աշխարհին մէջ:

Բայց այս բանը արգելք մը չէր ըլլար որ նոր յաճախորդ մ'ալ որոշեալ գինը վճարելէ ետեւ տիկին Ֆրանսուազ բարեսիրաբար յանձնէր Անժէլիքը երկրորդէ մ'ալ երրորդի մը, չորրորդի մը, կամ հինգերորդի մը բազկացը:

Առեւտուր է այս, ի՞նչ պիտի ըսես:

Պարկեշտ շահերու ո՞վ արգելք կրնայ ըլլալ:

Խեղճ Հոլանտացին, Անժէլիքի համար առաջին տասն հազար ֆրանքը վճարելէն և ամիսի մը չափ իր ստացուածքը հանդարտօրէն վայելելէ ետեւ օր մը սրճարանի մը մէջ իրեն անձանօթ Գաղղիացի պարոնէ մը ձրի նախատինք կրեց:

Այս Գաղղիացի պարոնը տիկին Ֆրանսուազի երկրորդ տասը հազար ֆրանքի վճարքն ընող յաճախորդն էր:

Ըստ գերապանծ սովորութեան պզտիկ մեծամարտ մը եղաւ ասոր հետեւանքն, որուն յատակադիծը պատրաստած էր տիկին Ֆրանսուազ, անշուշտ բարեմիտ նպատակաւ:

Բայց Հոլանտացին բան մը չէր հասկնար այս բարեմտութենէ և անմտօրէն կ'սպան-

նուէր այն պզտիկ և անմիաս մեծամարտին մէջ, Անժէլիքը իր սոսիսին յանձնելու կրկին անմտութեամբ, թէպէտեւ առանց գիտնալու:

Ահա այս կերպիւ հասարակ բող մը կըլլար Պէրթիէի նախկին նշանածը, որոնք չնորհիւ ազնուապետական համաստեղութեան ամենէն փայլուն աստղերէն մին ըլլալու փառաց բարձրանալէ ետեւ:

Սակայն պէտք է որ ըսենք ի շնորհս արգարութեան թէ Անժէլիք առանձնաշնորհեալ բող մը եղած էր:

Իր անձնաւորութեան առաջին պայմանն էր միակ զաւակն հետն ունենալ ուր որ ալ երթար և որուն գիրկը որ իյնար:

Գաղղիացին քիչ մը խելանի մարդ էր, և տիկին Ֆրանսուազ բաւական զարմացաւ տեսնելով որ անիրաւ մարդը թէ՛ իր և թէ՛ իր հօմանուհոյն հետքը բոլորովին անյայտ ըրած էր, և բարեսիրտ տիկինը չէր կրնար իր նոր յաճախորդները գոհացնել, Անժէլիքի ուր գտնուիլը չի կարենալ գիտնալուն համար:

Չի գտնուած ասպանքն ալ ո՞րչափ կը փրտառի:

Տիկին Ֆրանսուազ արդէն իր միտքը դրած էր որոշեալ գինը բարձրացնելու, և օտա-

բաղգի կոմս մը մինչեւ քսան հազար ֆրանք միջնորդչէք վճարել յանձն կ'առնուը կանխիկ կերպիւ և բոլոր վնասն ու վտանգը եր վրայ առնելով :

Բայց ամիսներ անցան և Անժէլիքի հետքն անգամ չէր տեսնուեր :

Տիկին Պրանսուազի տեղ ո՞վ ըլլար չէր կատրեր այսպիսի մեծ և օրինաւոր շահէ մը զըրկուելուն համար :

Կաղաչեմ մի մեղադրէք խեղճ կիներ :

Իրեն եղած անիրաւութիւնը պղտիկ բան չէր :

Գիշեր մ'էր :

Տիկինը արդէն իր սպասուհին քնանալ զըրկուելու հրամանը տալու վրայ էր :

Ո՛հ, չեմ կարծեր որ տիկին Պրանսուազին սպասուհի մ'ալ ունեցած ըլլալուն համար չարախօսելու անդթութիւնն ունենաք :

Արդէն մէկ սպասուհիով մը գոհ ըլլալն ալ իր համեստութեան մեծ պատիւ բերելիք բան մ'էր :

Ինչո՞ւ համար երկու երեք սպասաւորներ ալ չունենար, քանի որ հարուստ կին մը եղած էր հիմա անիկա իր բարեսիրական վաճառականութեան շնորհիւ :

Ահա գիշերուան ճիշդ այն ժամուն էր որ փողոցի զանգակին ձայնը կը հնչէր :

Անշուշտ նոր յաճախորդ մ'ըլլալու էր ասիկայ :

Բայց որչա՞փ անկերթ կամ գոնէ անհամբեր մէկը, որ իր այցելութեան համար այնպիսի անյարմար ժամանակ մը ընտրած էր :

Է՛հ, եթէ Անժէլիքի հետքը գտնուած ըլլար, խնդիրը կը փոխուէր :

Անշուշտ անհամբեր սիրահար մը աւելի սուղ վճարելը աչքը առած կըլլայ :

Տիկին Պրանսուազ իր սպասուհիին հրամայեց որ երթայ հասկնայ թէ կէս գիշերին զինքը անհանգիստ ընել ուզողը ո՞վ կրնար ըլլալ :

Սպասուհիին վերադարձը երկար չի տեսց :

Տիկինը՝ իր սպասուհիին բերած անուան վրայ քիչ մը շփոթեցաւ . այլ շուտով հանդարտելով ըսաւ անոր որ դուռը բանայ, և եկող հիւրը իր սենեակը առաջնորդելէ ետե ինքը պառկելու սենեակը քաշուի :

Քիչ մը յետոյ երիտասարդ մարդ մը ներս մտաւ :

Հին բարեկամներու վառելու կերպիւ երկուքն ալ սիրով իրար բարեւեցին և դէմ առ դէմ նստան աթոռներու վրայ :

— Ո՞ր հովը զձեզ այս կողմերը նետեց, պարո՞ն Էթիէն . սնտի երկարաբանութիւններէ ոչ դուք կախորժիք և ոչ ես . ուղղակի նպա-

տակին դիմենք . այսչափ երկար բաժանումէ ետեւ մէկէն ի մէկ և դիշերանց ինձ այցելու հաճեցնիդ անշուշտ լուրջ պատճառ մը ունենալու է :

— Կը տեսնե՞մ որ միշտ խելանի ես , Ֆրանսուա՛դ :

— Եւ գուցէ նպատակնուդ ինչ ըլլալն ալ ճշդիւ կրնամ ըսել ձեզ . տիկիննիդ կը փընտռէք այնպէս չէ՞ . բայց կերդնում ձեզ որ ամիսներէ ի վեր ես ալ ի զուր կը փնտռեմ իր հետքը :

— Ա՛հ , կը կարծե՞ս որ այդպիսի չնչին պատճառի մը համար քեզի դիմած ըլլամ . ամենեւին հոգս չէ թէ այս վայրկենին Անժէլիք Հօլանտացի յիմարի՞ մը , Գաղղիացի պարոնի՞ մը , թէ Ռուսիացի կոմսի՞ մը . գրկացը մէջ կը գտնուի , ես շատոնց ի վեր ձանձրացած եմ ան փառամուկ կինէն և երախտապարտ կ'ըզգամ ինքզինքս այն յիմար պարոններուն որոնք ձեռքէ ձեռք յափշտակելով ազատած են զիս այդ կնոջ ձեռքէն :

— Ո՛վ Աստուած իմ , ո՛րչափ կը զարմացընէք զիս այդպիսի խօսքերով , պարո՛ն էլթիէն , բայց եթէ ձեր կիներ պահանջելու համար չէ որ այս այցելութեան պատիւը ըրած էք ինձ , ուրեմն ո՛ր երջանիկ պատճառ ին վերադրելու է զայն :

— Շատ պարզ պատճառի մը , Ֆրանսուա՛դ . բոլորովին կործանած եմ . ասկից զատ խաղու պարտքեր ալ ունիմ , և որովհետեւ հիմա դուն հարուստ ես , կրնաս օգնել ինձ :

— Բայց ես ի՛նչ կրնամ ընել ձեզ , պարոն , խեղճ կնիկ մ՛ եմ ոչ նուազ աղքատ քան դուք , պատասխանեց տիկին Ֆրանսուազ այս անակնկալ խնդրոյն վրայ զարհուրած :

— Ինձ նայէ , Ֆրանսուազ , դիտես որ գործնական մարդ եմ ես , ու պարապ խօսքերէ չեմ ախորժիր . հաշիւ ըրած եմ արդէն , 10,000 Ֆրանք ինձմէ ստացար Անժէլիքը իմ կողմս դարձնելու համար . նորէն 10,000 Ֆրանք ընդունեցիր կործանմանս վայրկենին զանի Հօլանտացիին փոխանցելու համար . ասկից զատ կրկին 10,000 Ֆրանք ձեռք անցուցիր , Հօլանտացին ալ Գաղղիացիի մը ծախելու համար . և որովհետեւ ինձմէ ընդունած ամսական 200 Ֆրանքդ և Անժէլիքէն ալ անուղղակի կերպիւ առած դրամանուէրներդ , որք միշտ իմ քսակէս կ'ենէին , քու օրական պիտոյիցդ համար լիուլի կը բաւէին . աստի Անժէլիքին անձին վրայ ըրած վաճառականութենէ շահած 30000 Ֆրանքդ ամբողջովին քովդ կը գտնուին , առանց հաշուի դնելու այդ գումարին վրայ ընդունած տոկոսներդ . նաեւ դիտեմ որ այսօր ամբողջ ստակդ վեր-

ցուցիր սեղանաւորիդ քովէն, այս քաղաքէն մեկնելու համար որ քիչ մը տաքնալ սկսեր էր քեզի համար :

Փրանսուազ շարժում մը բրաւ էթիէնի խօսքերուն դէմ բողոքելու :

— Երեսներդ այնչափ մի ծամածուէր, ազնիւ բարեկամուհիս, չես կրնար ուրանալ թէ ի՞նչ արդար բաժին մը ունիմ այսչափ խելացի կերպիւ աւելցուցած դրամիդ մէջ, որովհետեւ շահը արտադրող դրամագլուխը իմս էր. այսու ամենայնիւ կը վստահացնեմ զքեզ որ, եթէ նեղութեան վերջին ատիճանները հասած չըլլայի, դարձեալ մտքէս անգամ չի պիտի անցունէի քեզմէ հաշիւ պահանջել. բայց դուն արդարասէր և բարեպաշտ կին մ'ես, ընկերական կանոնները խիստ լաւ գիտես, վաղեմի բարեկամներդ ընդ միշտ իրարու օգնելու պատրաստ են, սովորաբար ըստակներդ ուր պահելդ ալ գիտեմ, որովհետեւ բաւական բարեմիտ գտնուած էիր այս փոքրիկ գաղտնիքդ շատ ատեններ առաջ Անժէլիքին իմացունելու, և ան ալ բարեմիտաբար զիս վերահասու բրած էր այդ անվընաս դաղտնեաց, և շիտակը խօսելով ո՛չ Անժէլիքի մտքէն և ո՛չ ալ իմ մտքէն կանցնէր որ օր մը օգուտ քաղելու պիտի պարտաւորէի այդ գաղտնիքէն :

Փրանսուազ դողալով ոտքի ելաւ :

Տեսած էր որ էթիէն ուրախութեան ակնարկով մը նայած էր ճիշդ դէպի այն անկիւնը, ուր իրօք գտնուած էր 25,000 ֆրանքի դանձը պարունակող արկղիկը, և որուն վերայ ծածկուած էր զանազան ճերմակեղէններով, անանկ որ, նենգաւոր արկղիկը բլրովին անյայտ կը մնար անոնց տակ :

Էթիէն ալ ոտքի ելաւ և Փրանսուազի ձեռքէն բռնեց :

— Եթէ քայլ մը առնուս դէպի առաջ կամ աղաղակ մը բառնալու յիմարութիւնն ունենաս, գիտցիր որ մեռած ես, ըսաւ անոր :

Տիկին Փրանսուազի գոյնը նետեց :

Էթիէնի ձեռքը երկախ գանակ մը կը փայլէր :

Բայց այնչափ խորամանկութեան աշխատանօք աւելցուած գանձուն մէկ վայրկենի մէջ անհետանալու գաղտնիքը յիմարեցուցած էր խեղճ կինը :

Ինքնաբերաբար բացուեցաւ իրեն նենգաւոր բերանը և ինքնաբերաբար յուսահատական աղաղակ մը դուրս ելաւ անկից :

«Օգնութիւն, օգնութեան հասէ՛ք... մարդասպան կայ՛... հասէ՛ք...»

Աղաղակին մնացորդը բանտարկուեցաւ իր կոկորդին մէջ յաւիտենական կերպիւ :

Էթիէնի երկայն դանակը մխուած էր անոր երկու ուսերուն մէջտեղը մինչեւ կոթը, և տարադդ խարէուհին Էթիէնի ոտիցը տակ դէտորելով արեան հեղեղի մը մէջ կը տապլտկէր:

Անժէլիքի ամուսինը, խեղճ կնո՞ չարչարանքը չերկարելու բարեսրտութեամբ, անոր կոկորդն ալ կտրեց, մէկ ակունջէն մինչեւ միւսը, և իր զոհին այլ եւս ձայն մը հանելու և տեղէն շարժելու կարողութիւնը չի մնալուն վրայ կատարելապէս վստահ ըլլալէ ետեւ, չարագորգիւ արկղիկին քով վազեց, մէկ հարուածով անոր կրծքանքը կտորեց, և առանց համբելու անոր մէջի ոսկւոյ կոյտերը իր գրպանը տեղաւորելու սկսաւ:

Բայց այդ վայրկենին կասկածելի ձայներ հասնիլ սկսան իր ականջին:

Էթիէն չի վարանեցաւ:

Պէտք էր անմիջապէս փախչիլ իր կողոպուտին հետ:

Իէպի սենեակին դուռը մի երկու ածապարելի քայլեր առնելէ ետեւ կենալու և դուրսը մտիկ ընելու ստիպուեցաւ սակայն:

Սպասուհիին պուալուն և փողոցի դրան խորտակուելուն ձայնը տուած էր:

Անգամ մը գտնուած սենեակին պատուհաններուն նայեցաւ:

Երկաթէ վանդակներով ամրացած էին ասոնք:

Էթիէն զգաց որ պալ քրտինք մը իջնել սկսած էր ճակտէն վար:

Երկար բարակ մտածելու ատեն չի մնաց:

Սենեակին դուռը ասագին շառաչմամբ բացուեցաւ, և երկու մերկ սուրեր և ատրճանակի մը փողը ներկայացան չարագործին աչերուն:

Էթիէն ետ ետ գնաց, և քիչ մնաց որ այս նահանջին ատեն իր զոհին մարմնոյն վրայ պիտի կոխէր:

Մերկ սուրերը ներկայացնողներն էին երկու ոստիկանք:

Իսկ ատրճանակը ներկայացնողն էր... Յիմար Յիսնապետը:

Չարագործը երբ զճամիէն տեսաւ իր աչաց առջեւ, բոլորովին տոգունեցաւ:

Ալ իր մտքէն չէր անցներ դիմադրութիւնը:

Լուիզի հայրը ազաչեց երկու ոստիկաններուն որ դուրսը կենան, և ինքը՝ ամենայն քաջասրտութեամբ դռնէն ներս մտնելով զանի դիմաց իր ետեւէն և յառաջացաւ դէպի Էթիէն, որն որ գլխիկոր կը մնար և դանակը ինկած էր իր ձեռքէն:

— Զիս մտիկ ըրէ, Էթիէն, ըսաւ Յիմար

Յիսնապետը, Արքեպիսկոպոսի մը պէս վեհ ձայնիւ : Կը տեսնես որ յիմարութիւններդ մինչեւ ո՛ր տարին գրեզ : Հայրասպան մը եղար, պարկեշտ գործաւորի մը նշանաժը առեւանդեցիր, յետոյ աղջկանս ետեւէն ինկար և անոր համար ամեն ունեցածդ կործանեցիր, Պէրթիէն սպաննել տուիր, սընանկացար, կինդ ու զաւակդ ուրիշներու յանձնեցիր, և հիմա գոյ մը ու մարդասպան մը եղար, որոնք քու անկարգ կենացդ անխուսափելի հետեւութիւններն են, Արդ քեզի համար վերջին միջոց մը կը մնայ միայն եթէ ունիս մաս մը այն ազնուականութենէ, որուն յաւակնութիւն կը ցուցնէիր երբեմն : Զի վայլեր որ ազնուական մը կառափնառի վրայ հատուցում տայ իր ոճրագործութեանց : Փախուսող և ազատութիւնդ անկարելի է : Ամեն կողմանէ պաշարուած ես, և գործած վերջին ոճիրդ բաւական է զլուխդ ուսերուդ վրայէն թոցնելու : Գեղի պատուիրեր էի որ այս քաղաքէն մեկնելէդ յետոյ, մէկ մ'ալ չի վերադառնաս հոս : Բայց կը սեսնես որ նախախնամութիւնը սրոշած է ոճիրներուդ վերջ մը տալու, քայլերդ վերստին ուղղելով հոս : Ես ինքս լրտեսեցի քեզ այն վայրկեանէն երբ քաղաքը մտար նորէն : Գիտէի որ նոր ոճրագործութիւն մը մտաբերած ես

և իմ հսկողութեանս առարկան եղաւ այս տունը : Կը հասկնաս, չէի ուզեր որ ուրիշներ ձերբակալեն գրեզ և ստիպեն որ անցեալ ինչ ինչ բաներ ալ խուստովանիս որք միայն քու յիշատակիդ անպատուութիւն չեն բերեր : Արդ, ինչ ընելիքդ քեզի իմացուցի : Եթէ անձդ չես կրնար փրկել, գոնէ ազնուականութիւնը փրկելու աշխատէ : Աստուած հոգւոյդ սղորմի : Որոշէ՛, դո՛ւրս ելնեմ, թէ դատեկանները ներս կանչեմ :

— Վայրկեան մը կեցիր, վերջին հարցում մ'ունիմ, Լուիզ ո՛ր է հիմա :

— Բարիդ է, երջանիկ ամուսնոյ մը պատուաւոր բազկացը մէջ :

— Ուրեմն դուրս ելէք հիմա, և արքանակնիդ հոս թողէք : մնաք բարեաւ, ազնիւ մարդ : այս վերջին ծառայութիւններնուդ համար յանհունս շնորհապարտեմ ձեզ, կը խնդրեմ ըսէք ձեր աղջկան որ հաճի իրեն համար կործանող չարագործի մը ներելու :

Տամիէն վատ կնասպանին ձեռքը սեղմեց, և արքանակը հոն թողելով սենեկին դռնէն դուրս ելաւ :

Միեւնոյն դուռը դրոնէն կղպած ատեն, արտասուաց երկու կաթիլներ կը սրբէր իր աչերէն :

— Պարոնայք, ըսաւ նա, ոստիկան զինուորաց քովը երթալով, այս չարագործը չի կրօցայ համոզել որ առանց դիմադրութեան անձնատուր ըլլայ. պարապ արիւնհեղութեան պէտք չի կայ. պատուհաններուն երկաթները անխորտակելի են, և քիչ մը յետոյ պահակ զինուորներն ալ հոս պիտի ըլլան, սպասենք քիչ մը, եղեռնագործը չի կրնար փախ չիլ մեր ձեռքէն...

Տամիէն միտք ունէր տակաւին երկարելու իր սուտ պատմութիւնը:

Բայց դէպք մը մէկէն ի մէկ վեր ցատկեցուց թէ զինքը և թէ իր ունկնդիր ոստիկանները:

Ատրճանակի մը պայթման ձայնը լսուելը էր էթիէնի գտնուած սենեկէն:

Այն ատեն երեք մարդիկ վազելով դռան կղպանքը բացին, և սենեակէն ներս խուժեցին:

Սոսկալի տեսարան մը կսպասէր հոն իրենց:

Գետնին վրայ գրեթէ քով քովի տարածուած տեսան այն կինը որուն կոկորդը կըտրուած էր, և մարդ մը՝ որուն գանկը ջախջախած էր ատրճանակի գնտակով մը...

Անձնասպանութիւնը քաւած էր բոլոր անցեալ ոճիրները...



ԺԳ.

### Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն Ը

Նախորդ գլխոյ մէջ պատմուած դէպքերուն վրայ երկու տարիներ անցեր էին:

Բարիղեան կեանքը այդ երկու տարիներու մէջ բազդաւորութիւն ունեցեր էր հարուստ Գանատացիին հարսանեաց փառաւոր հանդէսը և անոր յաջորդող անհամար շքեղ երեկոյթները վայելելու:

Կրկնենք որ այն հարուստ Գանատացին՝ էմիլ Օկիլսթ Տըլապուշ գործարանի նախորդ գործարանապետ աղքատիկ Պէրթիէն էր, որուն համար բոլոր աշխարհ այնպէս գիտէր թէ Պրիւքսէլի դերեզմանատան մօտ անծանօթ ոճրագործի մը դանակին զոհ դացած էր:

Արդ՝ այս մեռեալ զոհին կենդանի պատկերն էր որ հարուստ Գանատացիի մը անուան տակ մեծ պատուով կ'ընդունուէր Բարիղի բոլոր բարձր ակումբներուն մէջ, և երբ կառքով պտոյտի կելլէր, ամեն դասակարգի մարդիկ մեծ հաճոյք մը կը դրային զանի և իր գեղանի տիկինը դիտելէ, առանց գիտնալու թէ այն ալ ճիշդ իր էրկանը պէս աղքատիկ կեանքէ առաջ եկած էր:

Վերջապէս և ոչ մի մեռեալ այնչափ փառաւոր կերպիւ շարունակած էր ապրելու և յառաջ երթալու այս անվստահելի աշխարհիս մէջ, որչափ Պէրթիէ ըրած էր :

Իր Լուիզ կինը, ինչպէս Պրիւքսէլի՝ նոյնպէս և Բարիզի մէջ ընդհանուր հիացում մը կը պատճառէր իր հաղուագիւտ դեղեցկութեամբը :

Ամեն տեղ և ամենուն բերանն էր Գանատացի պարոնին հարստութիւնը, և անոր Պէլճիգացի կնոջ գեղեցկութիւնը :

Ինչպէս խիստ շատ անգամներ, նոյնպէս և օր մը տարօրինակ իրարանցում մը կար Բարիզու մեծամեծաց շատերուն ապարանաց մէջ :

Ջգեստայարդարներուն և վարսավիրաներուն բարեւ տալը՝ գրեթէ արգելուած էր այն օրը :

Խեղճերը նոյն դիշերուան պարահանդէսին ներկայ գտնուելու պատրաստուող տեարց և տիկնայց քով այն աստիճանի աններող զբաղմունք և գործ ունէին որ, բարեւի արարողութեամբ զանոնք վայրկենավաճառ ընելէ աւելի անգութ բան մը չէիր կրնար երեւակայել :

Ինչ որ է, վերջապէս գիշեր եղաւ և մեծափայելուչ կառաց հասնելու ժամն ալ հնչեց :

Կէս ժամ չէր տեւած երբ Պէրթիէի ապարանին գտնուած ընդարձակ փողոցը հրաւիրելոց կառքերով անանցանելի եղած էր :

Կառաց փողոցին դուռը մարդկային ամբոխ մ'ալ խռնուած էին :

Կիներէ և մարդերէ բաղկացած այս մեծ ամբոխը՝ պարահանդէսի հրաւիրեալ մեծաբոյ տեարց և տիկնայց պէս ակնախտիղ ճոխ զգեստներ հագած չէին :

Յնցոտիներ էր միայն անոնց բազմափորձ մարմիններնին մասամբ ծածկող լաթի կտորները, որոնց պատառուածներէն ներս անարգել և առանց արարողութեան կը մտնէին ձեան խոշոր հատիկներ :

Խեղճերը որոշեալ ժամուն կ'սպասէին խըչճահար դռնապանին մի երջանիկ նշանին վերայ ապարանին գռնէն ներս խուժելու, որ սակայն կարելի չէր հրաւիրելոց վերջին կառքին հասնելէն առաջ տալու :

Խեղճ անօթիները անհամբերութեամբ՝ ժամանակէն առաջ խոններ էին հօն, ինչպէս որ կընէին անհամբեր սպասաւորք՝ նամակատան ծակին առջեւ :

Պէրթիէի ամենաբարի սովորութիւններէն մին էր իր պարահանդիսի գիշերները քաղաքին մուրացիկներուն ալ ճաշ մը տալ իր ապարանին հասարակաց ճաշարանին մէջ :



Միայն թէ անշնորհք դէպքերու առիթ չի տալու համար, կարգաւ մէկ անդամուն մուրացիկ տիկինները և միւս անդամուն ալ մուրացիկ պարսնները ներս կ'ընդունէր:

Այս անգամ կարգը տիկիններուն էր, և եթէ անոնց մէջ պարսններ ալ կային, անոնք՝ մուրացիկ տիկիններուն ընկերացող այրեր, եղբայրներ, նշանածներ, կամ հայրեր էին, որոնք թէպէտեւ իրենց սիրելիներուն հացկերոյթի հանդէսին ներկայ չէին կրնար գըտնուիլ այն անգամուն, գէթ փողոցի դռան դուրսի կողմը կրնային սպասել անոնց վերադարձի ատեն պաշտպան ասպետաց դերը կատարելու, և ճաշէն յետոյ անոնց իւրաքանչիւրին տրուած դրամական պարգեւները ձեռքերնուն առնելու... հետեւեալ օրը գինետանց ողորդութեան սրահին յանձնելու համար զանոնք:

Ճոխ պարահանդէսին նկարագրութիւնը չի պիտի ընենք կամ չի պիտի կրնանք ընել հիմա. որովհետեւ մինչեւ այսօր այդպիսի փառաւոր երեկոյթի մը ներկայ գտնուելու պատիւն ունեցած չենք, որով կարող ըլլանք մը տացածին պատկեր մը դժելու:

Բայց համառօտ տեղեկութիւն մը կրնանք տալ մուրացիկներուն տրուած հացկերոյթին վրայօք, աղքատութեան տխուր պատկերը

ժօտէն տեսնելու առիթներ ունեցած ըլլալնու շնորհիւ, և աւա՛ղ, այդ պատկերները շատ առատօրէն կը գտնուին մարդկային կեանքի տխուր շրջանին մէջ:

Երբ մուրացիկներու ստուար խուճըք ներս հրաւիրելու երջանիկ ժամն հնչեց, տեսնելու բան էր այն ցնցոտիներ հագած դեռահասակ, միջին տարիքով, և պառաւուհի տիկնայց ժխորին մէկըմէկ հրելով և հրմշտկելով ներս թափելուն տեսարանը:

Կարծես թէ կրակ առած չոր մարգագետնի առջեւէն փախչող վայրենի դազանաց ժրխոր մ'էր այն:

Սեղանատան մէջ ըարեկարդութիւնը կըրցաւ քիչ մը հաստատուիլ ի շնորհս բարեկիրթ ջանից Պէրթիէի սպասաւորաց:

Անձեռոցներ, դգալներ, պատառաքաղներ, դանակներ, գաւաթներ և շիշեր խիստ կանոնաւոր կերպիւ շարուած էին երեք կարգ երկար սեղաններու վրայ, որոնց շուրջը նստած էին հարիւրէն աւելի մուրացկուհիներ:

Հետզհետէ ներկայացող չորս տեսակ պատուական խորտիկք, պտուղներ, շաքարեղէններ, տասներհինգ վայրկեան չի տեւած աներեւոյթ եզան անօթի բերաններու ահագին ովկէանոսին մէջ, որոնց յաջորդեց ա-

ուստ գինին՝ իր հրապուրիչ գոյնով և համեղ ճաշակով:

Վերջին անգամ մ'ալ լեցուեցան մի քանի անդամներ պարպուած գաւաթները և բոլոր մուրացկանուհիք՝ զինուորական կարգաւ ոտքի ելան:

«Կեցցե՛ն պարսնը, տիկինը և իրենց սիրասուն զաւակունքը՝ աղաղակը հնչեց հարիւրէն աւելի երախտագէտ բերաններէ:

Ճիշդ այդ վայրկենին սեղանատան դռնէն ներս կը մտնէին բարեսիրտ Պէրթիէն և անոր ամեներջանիկ կինն եղող Լուիզ իրենց պարզգեստի հագուստով:

Պէրթիէ բռնած էր գեղեցիկ տղու մը ձեռքէն, որ վերջին աստիճանի զուարթ կերեւէր և որ ճիշդ ու ճիշդ Անժէլիքի դիմաց դրաւ իջ գիծերը կը կրէր:

Յայտնի բան է որ այս ազնիւ տղեկը՝ Պէրթիէի՝ Անժէլիքէն ունեցած զաւակն էր:

Իսկ Լուիզ իր գրկացը վրայ կը կրէր հընգետասան ամսուան հրեշտականման աղջիկ մը, որ իր առաջին պարգեւն էր առ երջանիկն Պէրթիէ:

«Շնորհակալ եմ, ազնիւ քոյրերս. պարկեշտ մնացէք միշտ. աղքատութեան մէջ անգամ երջանկութիւն մ'է այն ըսաւ հարուստ Գուրոյն այն ցնցոտիներու կէս գինով խուժանին:

Գանձապետը քովն էր, և իւրաքանչիւր մուրացկանուհի խոնարհական յարգանքով անոր առջեւէն անցած ատեն, Պէրթիէ՝ իր գանձապետէն ընդունած հինգական ֆրանկնոց դրամապարգեւները իւրաքանչիւրին բաց և վարժ ձեռացը մէջ կը տեղաւորէր:

Վերջին մուրացկանուհին ալ այս կերպիւ դուրս ելաւ, օրհնութեան սովորական բանաձեւը կրկնելով:

Այն ատեն ծերունի մատակարարը յարգանք մօտեցաւ Պէրթիէին:

— Տէ՛ր իմ, ուրիշ մուրացկանուհի մ'ալ ունիք:

— Բայց ո՛ր է ան:

— Իմ սենեակս է, տէ՛ր իմ:

— Ինչո՞ւ համար այս դժբախտներուն մէջ չէր գտնուեր այն:

— Որովհետեւ շատ հիւանդ կ'երեւէր ինձ, և տեսայ որ բազմութեան հետ չէր ուզեր ճաշել:

— Չանի զատ սենեակ մը ընդունելովդ շատ աղէկ ըրեր ես, իմ պատուակա՛ն մատակարարս:

— Ո՛հ, տէր իմ, եթէ տեսնէիք իր աղեկատուր վիճակը, երբ գրեթէ կէս մը սառած դրանդ դուրսի կողմը ձիւներուն վրայ փռուած էր այն, իր գիրկը մանկիկ մը ունենա-

լով. երբ իրեն քովը մօտեցայ և կաշխատէի զինքը վեր վերցնելովներս բերելու, գիտէ՞ք թէ կիսամեռ ձայնով մը ինչ ըսաւ ինձ. «Ոհ, պարոն, ես այլ եւս հացի պէտք չունիմ», միայն զաւակիս խնայեցէք... երկու օրէ ի վեր իր բերանը պատառ մը բան դրած չէ ան»։ Ահա ասոնք էին իր խօսքերը, — ըսաւ բարի մարդը իր աչերը սրբելով։

Պէրթիէի և Լուիզի աչաց մէջ ալ արտասուեաց խոշոր հատիկներ տեսնուեցան։

— Երթանք, պարոն, տեսնենք այդ խեղճ կինը, գոչեցին երկուքը մէկանց։

Երբ Պէրթիէ, Լուիզ և իրենց երկու սիրասուն որդիքը՝ բարեօրոտ մատակարարին սենեակը մտան, տակաւին գեռատի և պատուած թեթեւ հագուստներ հագած բուկոսն կին մը տեսնուեցաւ հոն, որ իր նիհար ձեռներովը վերջին պատառը կը մղէր իր որդեկին փոքրիկ բերնէն ներս, մինչդեռ չորս պնակներ և գինւոյ շիշը սեղանին վրայ կը կենային դրեթէ իրենց գեղեցիկ պարունակութեանց ամբողջութեամբը։

Խեղճ կինը ամենեւին բան մը դրած չէր իր բերանը, այսինքն և ոչ պատառ մը բան ուտելու կարողութիւն չէր մնացած իր վրայ, և բոլոր իր աշխատութիւնը իր մանկիկին կտոր մը հաց և պանիր կերցնելէ անդին չէր անցած։

Երբ շքեղապէս հագուած պարոնին և տիկինին ու իրենց երկու մանկիկներուն ներս բերուելը տեսաւ, շնորհակալութեան մի քանի կիսկտուր խօսքեր բերնէն հանելու հասար մեծ դժուարութեամբ ոտքի ելաւ և մի քանի քայլ առաջ եկաւ։

Երկու կողմանց առաջին հայեցուածքը զարհուրելի եղաւ։

Մուրացկանուհին նորէն մի քանի քայլ ետ գնաց, իր նիհար ձեռները աչերուն տարաւ, երազէ արթնցողի մը պէս սաստկապէս շքեց զանոնք, և «Ո՛հ, ստուած իմ, այն է, այն» առձայելելով ծնդան վրայ ինկաւ։

Պէրթիէ և Լուիզ եւս կեցած տեղերնին շանքահար մնացին։

Իրենց առջեւ ծնդան վրայ եկող խեղճ մուրացկանուհին՝ Էթիէն Տըլապուշի կինն և Պէրթիէի նախորդ նշանածն Անժէլիքն էր, արձրութեան կատարէն անդունդի մը յատակը գլորած։

Վերջին աստիճանի նիհարցեր և տժգուններ չր այն, թշուառութեան անողոք ճիրանին տակ, տարիէ մը ի վեր փողոցները մուրալով ինքզինքը և իր մանկիկը անօթութենէ ազատելու համար։

Բայց այդ սոսկալի նիհարութեան և տրժգունութեան տակ տակաւին պահած էր իր

նախկին գեղեցկութեան նշաններն :

Վերջապէս վարանոտ և յուսահատ շարժմամբ իր գլուխը վեր առաւ և ակնապիշ նայել սկսաւ Պէրթիէի երեսը :

— Ճանչեցիր զիս, Անժէլիք, ըսաւ Պէրթիէ գողգոջունն ձայնով մը :

— Ո՛հ, այո՛, ճանչեցի այն պարկեշտ մարդը որ ժամանակաւ իմ նշանածս էր, և ես սպաննել տուի զինքը :

— Կը տեսնե՞ս, Անժէլիք, գերեզմանս քեզի չափ անգութ չի գտնուեցաւ :

— Բայց ո՞վ էր մարդը որ առանց դըժխու և քու զգեստներովդ բռնուեցաւ :

— Քու մեղսակիցդ Լըկէսիէն էր այ :

— Ո՛հ, արդար Աստուած, աղաղակեց Պէրթիէ իր երկու ձեռները միացնելով :

— Կը ճանչե՞ս այս տղեկն ալ, Անժէլիք :

Մուրացկանուհին գրեթէ այս հարցումէն սարսափահար, իր աչքը դարձուց այն գեղեցիկ տղեկին վրայ, որուն ձեռքէն բռնած կը կենար տակաւին անոր հայրը :

— Ա՛հ, իմ զաւակս է այն, մեր զաւակն է, ո՞վ երկին գոչեց խեղճ կինը և մէկ ոստումով զանի յափշտակեց ու իր գերկը առաւ :

— Այո՛, մեր զաւակն է այն, ըսաւ Պէրթիէ, այսինքն զիս մատնելէդ առաջ քու և իմ զաւակը, զոր բոլորովին մոռցար էթիէնի գերկը նետուելու համար :

Անժէլիք խորին հառաչանք մը հանեց, և երբ տեսաւ որ տղեկը իր ձեռները Պէրթիէի երկնցնելով իր աղտոտ գրկէն աղատելու կը ջանար, Անժէլիք կամաց մը վար դրաւ զանի, ձեռները գլխուն զարկաւ ու «Ո՛հ, ո՛րչափ անիծեալ կին մը եմ ես. զաւակս անգամ քստմնելով կը փախչի ինձմէ և ես նայ իր մայրը ըլլալս», աղաղակեց :

— Իր մայրը չէ այն զոր կը մերժէր, Անժէլիք, այլ միայն երբ հօրը սպաննիչը, ըսաւ Պէրթիէ :

Անժէլիքի համար շատ ծանր էր այս վերջը : Գրեթէ պիտի նուաղէր և գետինը ի նսար, չէ Պէրթիէ և Լուիզ անմիջապէս իր քովը կը ձեռներէն չի բռնէին :

Այդչափ անգութ մի ըլլար, Պէրթիէ, ու որ ժամանակաւ այնչափ գթասիրտ էր բայց գիտեմ որ յանդիմանութիւններդ որդարացի են. այլ Աստուած ներեց ինձ, Պէրթիէ, վերջին անգամ ղքեզ ողջ առողջ և փառաւոր վիճակի մը մէջ տեսնելու արժանի ընելով զիս... դուն ալ ներէ ինձ, Պէրթիէ... այլ եւս ապրելու շատ ժամանակ չունիմ... երկինք՝ ներելէ առաջ բաւական պատժեց զիս... այլ այս զաւակս, այսինքն ոստիկդ, էթիէնին զաւակը... անմեղ աղջկըս... ա՛հ, գթա իր վրայ... Անժէլիք, հոգեւորներու վերջին և խա-

փուսիկ աշխուժիւ ոտքի ելնելով վազեց եր  
հնդեւտասանաձեւայ փոքրիկ աղկան քով, որ  
իւնըը չի հասած այն տարօրինակ տեսարա-  
նին վրայ զարհուրելու և լալու քաջութիւնը  
կորցած էր ունենալ դեռ, առաւ զանի իր  
բերկացը մէջ, նորէն եկաւ և ծնդան վրայ  
էլ իւր Պէրթիէի առջեւ, և բոլոր իր մնա-  
ցորդ ոյ՛ւր տուելով աղաղակեց.

— Պէրթիէ, ազնիւ Պէրթիէ... որ ժամա-  
նակաւ իմս գոչելու... երջանկուրդիւնն ու-  
նեցած էի... ներէ ինձ... ներէ ոտխր-  
անմեղ զաւկին... քու գթութեանդ  
յանձնեմ... հանգուցեալ... էթիէնին...  
դժբաղդ... աղջիկը... :

Պէրթիէ հաղիւ հազ թեւերն երկնցնել ով,  
և մի քանի անիմանալի բառեր դուրս տ ա-  
լով իր դողդողացող շրթներէն յափշտակեց  
էր Անժէլիքի և էթիէնի խեղճ աղջիկ զաւա-  
կը անոր սպառելու վրայ եղող մօբը գրկէն,  
և ահա ծանր բան մը գլտորելով իր ոտիցը  
տակ գետին տարածուեցաւ:

Անժէլիքի անշունչ դիակն էր այն:

Միայն մէկ երեկոյ թաւախան եղաւ այ՛  
յիբօրիքազարձ վիզակց քաջութիւն:

„ԱՅ՛. Արդարեւ նա կ'ըլլար միայն օրնիկը  
չորհաւեւօրի. թաւա  
1924 Յուլիս



13,000

141.0000

6000.000



